Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5698

3КП1(07)
Л-62

187 1 DEC 2009

Հ Ս Խ Հ

ՀԵՌԱԿԱ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ-ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Դ. ՌՈԶԱՆՈՎ
ՅԵՎ
Ս. ԿՈՒԶՆԵՑՈՎ

ՀԱՄ Կ(Բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 4

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1905—1907 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

.... շրջան

.... գյուղ

.... -ին

Մարկա

КПI(07)
Ռ-62

При ненахождении адресата вернуть,
Ереван, Абовян 124, Заочному Индустриально-Аграрному Педагогическому Институту

ЗКП1(07)
Ռ-62
2 ?? JUL 2013
5698
19 AUG 2005

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7592 (բ)
Պատվեր 1538
Տիրաժ 2000

ՅԵՐԵՎԱՆ — 1932

ՀԱՄ Կ(Բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1905—1907 Թ.Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Առաջադրություն № 4 ինքնուրույն մշակման և գրավոր աշխատանք ներկայացնելու համար).

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

Կուսակցության յերկրորդ համագումարին վերաբերող նախորդ առաջադրության մեջ հեռակայողները պարզեցին սոցիալ-դեմոկրատիայի շարքերում յերկու հոսանքի—բոլշևիզմի և մենշևիզմի ծագման և կազման պրոցեսը: Իսկ այս առաջադրության նպատակն է ուսումնասիրել կուսակցության տակտիկան և ստրատեգիան 1905—1907 թ. թ. հեղափոխության ժամանակաշրջանում, առաջին հերթին ուսումնասիրել բոլշևիկների և մենշևիկների տարաձայնությունները 1905 թ. հեղափոխության հիմնական հարցերի վերաբերյալ: Այդ հիմնական հարցերն եյին՝ հեղափոխության բնույթի և նրա շարժիչ ուժերի հարցը, ժամանակավոր հեղափոխական կառավարության, զինված ապստամբության, դեպի Պետական դուման ունենալիք վերաբերմունքի հարցը և ագրարային հարցը:

Յեթե յերկրորդ համագումարի ժամանակաշրջանում և նրանից անմիջապես հետո մենշևիկների օպորտունիզմը պարզորոշ կերպով դրսևորվեց գլխավորապես կազմակերպչական բնույթ կրող հարցերում, (վոչ միայն կազմակերպչական հարցերում Ս.Գ.) ապա 1905 թ. հեղափոխության ժամանակաշրջանում այդ օպորտունիզմը պարզորոշ կերպով դրսևորվեց նույնպես և կուսակցության ծրագրի և տակտիկայի հարցերում: Կանգ առնենք յերկու հոսանքի հայացքների բնութագրի վրա հեղափոխության կարևորագույն հարցերի նկատմամբ, ամենից առաջ հեղափոխության բնույթի հարցի նկատմամբ:

1. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՅԵՎ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ

Դեռ 1905 թ. հեղափոխությունից շատ առաջ սոցիալ-դեմոկրատները այդ հեղափոխությունը պատկերացնում եյին իբրև բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն: Այս նշանակում եր, վոր Ռուսաստանի առաջիկա հեղափոխությունը պետք է վոչնչացնի ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների մնացորդները և նրանց քաղաքական վերնաշենքը—ինքնակալությունը, վորոնց գոյությունը յերկրի

բուրժուա-կապիտալիստական զարգացումն արգելակում էր: Այդպիսի հեղափոխությունը, վոչնչացնելով գյուղացիության շահագործման տրկական-ճորտատիրական ձևերը, պետք է ապահովեր յերկրի համար քաղաքական ազատություն, իսկ պրոլետարիատի համար—ավելի ազատ դասակարգային պայքարի հնարավորություն հանուն սոցիալիզմի: Այդ հեղափոխությունը դեռ չի վոչնչացնում մասնավոր սեփականությունը և արտադրության կապիտալիստական յեղանակը. ընդհակառակը, նա նախադրյալներ է ստեղծում կապիտալիզմի ազատ զարգացման համար և տանում է դեպի դասակարգային պայքարի սրումն աշխատանքի և կապիտալի միջև:

Սակայն այն բանի շնորհիվ, վոր XX դարի սկզբին Ռուսաստանում բուրժուական հեղափոխությունը տեղի յեր ունենում այնպիսի պարագայում, վորը շատ բանով տարբերվում էր նախկին բուրժուական հեղափոխությունների պարագայից, նա պետք է ունենար իր առանձնահատուկ տարբերիչ գծերը: Այդ առանձնահատկությունները հանգում էին այն բանին, վոր մեր հեղափոխությունը բուրժուական էր, բայց «իր հասարակական-տնտեսական բովանդակությամբ ազատագրական շարժումն այդպիսին չէ ըստ իր շարժիչ ուժերի: Նրա շարժիչ ուժերը կարող են լինել վոչ թե բուրժուազիան, այլ պրոլետարիատը և գյուղացիությունը: Մեզ մոտ բուրժուա-դեմոկրատական շարժման լիակատար հաղթանակը հնարավոր է միայն «համաձայնողական» լիբերալ բուրժուազիայի հակառակ, միայն այն դեպքում, յեթե դեմոկրատական գյուղացիության մասսան լիակատար ազատության և ամբողջ հողի համար մղվող պայքարում գնա պրոլետարիատի յետևից» (Ленин, изд 2-ое и 3-ое, т, VIII, стр, 322 և 323.)

Ավելի ծավալուն ձևով ռուսական բուրժուական հեղափոխության այդ առանձնահատկությունները հետևյալն են.

«Մեր հեղափոխության գլխավոր տարբերիչ գծերից մեկն այն է,—գրում էր Լենինը,—վոր դա գյուղացիական բուրժուական հեղափոխություն էր կապիտալիզմի շատ բարձր զարգացման էպոխայում ամբողջ աշխարհում և համեմատաբար բարձր զարգացման էպոխայում Ռուսաստանում: Դա բուրժուական հեղափոխություն էր, վորովհետև դրա անմիջական խնդիրն էր տապալել ցարական ինքնակալությունը, ցարական միապետությունը և խորտակել կալվածատիրական հողատիրությունը, այլ վոչ թե տապալել բուրժուազիայի տիրապետությունը: Դա գյուղացիական բուրժուական հեղափոխություն էր, վորովհետև օբյեկտիվ պայմանները առաջնահերթ խնդիր դարձրին գյուղացիության կյանքի արմատական պայմանների փոփոխման հարցը, կապիտալիզմի կողմից միջնադարյան հողատիրության ջախջախման հարցը, կապիտալիզմի համար «հողը մաքրելու» հարցը, օբյեկտիվ պայմանները հրապարակ քաշեցին ավելի կամ պակաս ինքնուրույն պատմական գործողության համար գյուղացիական մասսաներին» (ընդգծումները մերն է Ս. Գ.):

Այդ բուրժուական հեղափոխության մյուս առանձնահատկությունն այն էր, վոր «գյուղացիական ապստամբության հաղթանակը, վորն անհնար է առանց պրոլետարիատի ղեկավար դերի, ընդունակ է այդ հեղափոխությունը տանել դեպի հաղթանակ բուրժուական լիբերալիզմի իմմանենտ[1]) հակահեղափոխականության հակառակ» (Լենին):

1) Ներքնապես հատուկ:

Դրա առանձնահատկությունը նույնպես այն էր, վոր «ռուսական հեղափոխությունը դրա հետ միասին նաև պրոլետարական էր, վոչ միայն այն իմաստով, վոր պրոլետարիատը շարժման ղեկավար ուժը, ավանգարդն էր, այլև այն իմաստով, վոր պայքարի սպեցիֆիկ պրոլետարական միջոցը, այն է՝ գործադուլները, ներկայացնում էր մասսաներին թափահարելու գլխավոր միջոցը և վճռական անցքերի ալիքաձև աճման մեջ ամենից ավելի բնորոշ յերևույթը» (Ленин—Две тактики):

Վերջապես հեղափոխության առանձնահատկությունը նաև հետևյալն էր.

«Դեմոկրատական հեղափոխությունից,—գրում էր Լենինը,— մենք իսկույն և թե կսկսենք անցնել և հենց մեր ուժի չափով, գիտակից և կազմակերպված պրոլետարիատի ուժի չափով, կսկսենք անցնել դեպի սոցիալիստական հեղափոխություն: Մենք անընդհատ հեղափոխության կողմնակից ենք: Մենք կես ճանապարհին կանգ չենք առնի... Արկածախնդրության չդիմելով, մեր գիտական խղճին չդավաճանելով, էժան ժողովրդականության յետևից չընկնելով, մենք կարող ենք ասել և ասում ենք միայն մեկ բան.—մենք ամբողջ ուժով կօգնենք գյուղացիությանը դեմոկրատական հեղափոխություն անել, վոր ԷԼ ԱՎԵԼԻ ՀԵՇՏ լինի մեզ համար, պրոլետարիատի կուսակցության համար, ինչքան կարելի յե ավելի շուտ անցնել նոր և ավելի բարձր խնդրին—սոցիալիստական հեղափոխությանը» (Լենին) (ընդգծումը մերն է. Ս. Գար.):

Այսպիսով 1905—1907 թ. թ. հեղափոխության բնույթը և յուրահատկությունը բոլշևիկներն այսպես էին վորոշում.

1. Այդ ուշ բուրժուական հեղափոխություն է կապիտալիզմի բարձր զարգացման էպոխայում ամբողջ աշխարհում և համեմատաբար բարձր զարգացման էպոխայում Ռուսաստանում:

2. Այդ բուրժուա-գյուղացիական հեղափոխություն է և դրան հեղափոխության բախտը վճռող մասնակցություն պետք է ունենա գյուղացիությունը և գյուղացիական ապստամբությունը:

3. Այդ հեղափոխության լիակատար հաղթանակը պահանջում է պրոլետարիատի և գյուղացիության միատեղ գործողություններ—դաշինք, վորի մեջ պրոլետարիատը կարող է և պետք է կատարի առաջնորդի կամ հեգեմոնի դեր, վորը կազմակերպում է հեղափոխությունը և նրան տալիս է պայքարի պրոլետարական մեթոդներ:

4. Ինչքան վոր շարունակ ավելի մեծ թափ առնա հեղափոխությունը, լիբերալ բուրժուազիան այնքան հեղափոխության մեջ շարունակ ավելի հակահեղափոխական դեր կխաղա:

5. Հեղափոխության լիակատար հաղթանակի և պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի հաստատման ժամանակ հեղափոխությունը կզարգանա, կվերաճի սոցիալիստական հեղափոխության:

Այսպես էին պատկերացնում հեղափոխության բնույթը և շարժիչ ուժերը Լենինը և բոլշևիկները:

Իսկ մենշևիկները մեր բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պատկերացնում էին իբրև անցյալի բուրժուական հեղափոխությունների ավելի կամ պակաս ճշգրիտ կրկնություն, յենթադրելով վոր այդ հեղափոխությունն անխուսափելիորեն կտանի դեպի

բուրժուազիայի տևական քաղաքական տիրապետությունը: Նրանք պնդում եյին, վոր ...հեղափոխության մեջ բուրժուազիան գլխավոր շարժիչ ուժի դեր կխաղա, այսինքն՝ վճռականորեն և մինչև վերջ կպայքարի ինքնակալական կարգի վոչնչացման համար. վոր նա այդ պայքարում հենարան և ոգնություն կգտնի պրոլետարիատի և գյուղացիության լայն մասսաներում: Այսպիսով, մենշևիկները բուրժուազիային հատկացնում եյին հեգեմոնի դերը հեղափոխության մեջ: Մենշևիկների կարծիքով գյուղացիությունը բուրժուազիայի ամենամոտիկ պահեստը կլինի այդ հեղափոխության մեջ, իսկ պրոլետարիատը ծայրահեղ-ձախ ոպոզիցիայի դերը կխաղա: Պրոլետարիատի դերը պետք է հանդիսանա բուրժուազիային հրելն այն բոլոր դեպքերում, յերբ նա բավականաչափ վճռականորեն չի պայքարի ցարիզմի դեմ: Մենշևիկները գտնում եյին, վոր պրոլետարիատին կհաջողվի հաղթահարել բուրժուազիայի այդ անվճռականությունը և վոր վերջին հաշվով բուրժուազիան կկարողանա հեղափոխությունը մինչև վերջ հասցնել, այսինքն՝ մինչև լիակատար հաղթանակ ինքնակալության դեմ:

Բուրժուազիայի նշանակության գնահատության այսպիսի պարզացրած փոխանցումն անցյալ հեղափոխություններից 1905—1907 թ. թ. ռուսական հեղափոխության ժամանակաշրջանի բուրժուազիային, չեր համապատասխանում գործերի իսկական դրությանը: Ի տարբերություն ուրիշ յերկրների, Ռուսաստանի բանվոր դասակարգն ինքնակալության պայմաններում վաղուց արդեն պայքար եր մղում բուրժուազիայի դեմ՝ իր սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարությամբ. բուրժուազիան իր կողմից, անհաշտ պայքար մղելով պրոլետարիատի դեմ, միշտ դիմում եր ինքնակալական կառավարության ոգնությանը: Բուրժուազիան ցարիզմի տապալումը չեր կարող այլ կերպ դիտել, քան իբրև հուսալի դաշնակցի կորուստ պրոլետարիատի դեմ մղվող պայքարում (ընդգծումը մերն է Ս.Գ.): Այս պատճառով, յերկու չարիքից փոքրագույնն ընտրելով, բուրժուազիան ավելի սիրով պետք է համաձայնության գար ինքնակալության հետ՝ ընդդեմ պրոլետարիատի և հեղափոխական գյուղացիության, քան հեղափոխության ուղին մտներ: Ռեֆորմներ, վորոնք մի քիչ կլայնացնեյին յերկրի կապիտալիստական զարգացման հնարավորությունը և բուրժուազիային վորոշ արձակ քաղաքական հրապարակ կտային, ավելի կամ պակաս լիբերալ միապետական սահմանադրության նվաճում—ահա այն իդեալը, վորից այն կողմը բուրժուազիան չեր գնում: Յեթե բուրժուազիան յերբեմն հիշում ել եր հեղափոխության մասին, ապա միայն նրա համար, վոր ինքնակալությանը վախեցնի և նրան ստիպի զիջումներ անել: Այս պատճառով «բուրժուազիան չի կարող լինել հեղափոխության վո՛չ գլխավոր շարժիչը, վո՛չ ել առաջնորդը» (ընդգծումը մերն է Ս. Գ.) (Լենին):

Դասակարգային փոխհարաբերությունների ռեալ հաշվառումից ելնելով՝ բոլշևիկները կառուցում եյին իրենց տակտիկական գիծը բուրժուազիայի վերաբերմամբ: Պրոլետարիատը պետք է ոգտագործեր բուրժուազիային, ինչքան վոր նա իրոք պայքարում եր ինքնակալության դեմ, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ եր մերկացնել նրա

համաձայնողական բնույթը, լայն ժողովրդական մասսաներին նախազգուշացնելով նրա խոստումներին վստահելուց:

Մյուս հարցը, վորի վերաբերյալ բոլշևիկների և մենշևիկների միջև հեղափոխության շարժիչ ուժերի գնահատության խնդրում խիստ տարամիտում յերևան յեկավ, գյուղացիության հարցն եր:

Մենշևիկները, հիմնվելով անցյալ բուրժուական հեղափոխությունների որինակների վրա, գյուղացիությունը դիտում եյին իբրև բուրժուազիայի կցորդ: Պարզելով բուրժուազիայի և գյուղացիության տեսակարար կշիռը հեղափոխության մեջ, մենշևիկները նախապատվություն եյին տալիս բուրժուազիային իբրև քաղաքականապես ավելի գիտակից, կազմակերպված և առաջավոր դասակարգի: Նրանք միշտ համոզված եյին, վոր գյուղացիությունն իր կուլտուրական և քաղաքական հետամնացությամբ ու փոշիացածությամբ յերբեք հեղափոխության վճռական ուժը չի դառնա, վոր նրա մասնակցությունը կհանգի միայն տեղական ագրարային հուզումների, վոր գյուղացիությունը կարող է նույնիսկ ռեակցիոն դեր խաղալ հեղափոխության մեջ:

Գյուղացիության դերի նույնպիսի մենշևիկյան գնահատություն եր տալիս նաև Տրոցկին: Գյուղացիության այսպիսի գնահատությունից մենշևիկներն այն հետևությունն եյին անում, վոր պրոլետարիատի համար ավելի ոգտակար է ձեռք ձեռքի տված ընթանալ պրոգրեսիվ բուրժուազիայի, քան գյուղացիության հետ:

Այլ գնահատություն եյին տալիս գյուղացիությանը բոլշևիկները: Յեթե բուրժուազիան շահագրգռված եր այն բանով, վոր չթույլատրի լիակատար հաղթանակ տանել ինքնակալության և ճորտատիրության վրա, ապա գյուղացիության համար ֆեոդալական-ճորտատիրական հողատիրության և դրա վրա հիմնվող ինքնակալական կարգի լիակատար վոչնչացումը կենսական դասակարգային խնդիր եր: Գյուղացիությունն այդ խնդիրը կարող եր լուծել միայն իր սեփական պայքարով: Բանվոր դասակարգի խնդիրն ել այն է, վոր գյուղացիությանը վոտքի հանի հեղափոխության համար, աջակցի նրա կազմակերպմանը և քաղաքական դաստիարակությանը և ղեկավարի նրա պայքարը:

Գյուղացիական շարժման ընթացքն ինչպես մինչև 1905 թ. հեղափոխությունը, այնպես ել հենց 1905 թ. հեղափոխության մեջ համոզեցուցիչ կերպով ցույց տվեց, վոր բոլշևիկների պատկերացումը գյուղացիության մասին, իբրև հեղափոխական դասակարգի կալվածատերերի և ինքնակալության վերաբերմամբ՝ ճիշտ եր: Մանր-սեփականատեր գյուղացու և պրոլետարի տարամիտումը կարող եր յերևան գալ միայն բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո, իսկ մինչև այդ հաղթանակը հնարավոր և անհրաժեշտ է պրոլետարիատի ամուր հեղափոխական դաշինք «ամբողջ» գյուղացիության հետ՝ ընդդեմ ցարի և կալվածատերերի:

2. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ, ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ, ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ «ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ.

Բուրժուազիայի՝ հեղափոխությունը մինչև վճռական վախճանի հասցնելու անընդունակությունը նրան հնարավորությունից զրկում եր իր քաղաքական ազդեցությանը յենթարկել գյուղացիությանը: Իսկ

վո՞ր դասակարգը կարող էր հանդես գալ հեղափոխության առաջնորդի, հեգեմոնի դերում: Այդպիսի դասակարգ ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ կարող էր լինել միայն պրոլետարիատը, վորը վոչնչով կապված չէր ճորտատիրության և ինքնակալության հետ և վորը մյուս դասակարգերից ավելի շատ էր շահագրգռված հին կարգի վճռական վոչնչացումով:

Մենշևիկների կարծիքով՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պետք է ամենից առաջ ոգտակար լիներ բուրժուազիայի համար, իսկ բոլշևիկների կարծիքով՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության լիակատար հաղթանակով շահագրգռված են միայն պրոլետարիատը և գյուղացիությունը: Միայն բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, պրոլետարիատի հեգեմոնիայի պայմանով, կարող է ապահովել բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթական վախճանը: Հեղափոխության այդպիսի վախճանն ամենից ավելի նպաստավոր պայմաններ կստեղծեր պրոլետարիատի հետագա պայքարի համար՝ հանուն սոցիալիզմի և, դրա հետ միասին, ամբողջովին կզուգադիպեր ամբողջ գյուղացիության շահերին. այս պատճառով միայն բանվորները և գյուղացիները կարող էին ամբողջ վճռականությամբ պայքարել հեղափոխության հաղթանակի համար: Բոլշևիկներն այս իմաստով հեղափոխության վճռական հաղթանակն անվանում էյին պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա: Այս հարցի մասին Լենինը գրում էր.

«Միայն դեմոկրատական հեղափոխության լիակատար հաղթանակի դեպքում պրոլետարիատի ձեռքերը կապված չեն լինի անհետևողական բուրժուազիայի դեմ մղվող պայքարում, միայն այս դեպքում նա չի «լուծվի» բուրժուական դեմոկրատիայի մեջ, այլ ամբողջ հեղափոխության վրա կդնի իր պրոլետարական, կամ ավելի ճիշտ պրոլետարա-գյուղացիական կնիքը:

...Նա կարող է դեմոկրատիզմի հետևողական մարտիկ լինել միայն այն պայմանով, յեթե նրա հեղափոխական պայքարին միանա գյուղացիության մասսան: Յեթե սրա համար պրոլետարիատի ուժերը պակասեն, բուրժուազիան դեմոկրատական հեղափոխության գլուխ կանցնի և նրան անհետևողական ու շահախնդրական բնույթ կտա: Այդ բանը խանգարելու այլ միջոց չկա, բացի պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայից»:

Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական—դեմոկրատական դիկտատուրան զինված բանվորների և գյուղացիների վրա հենվող հեղափոխական իշխանությունն է: Այդպիսի դիկտատուրայի նպատակն է ճորտատիրության և ինքնակալության լիակատար լիկվիդացիան, հին կարգի ռեստավրացիայի բոլոր փորձերի դեմ մղվող անխնա պայքարը և հեղափոխական ճանապարհով հեղափոխության հիմնական նպատակների իրականացումը, այն է՝ դեմոկրատական հանրապետության, 8-ժամյա բանվորական որի հաստատումը, ամբողջ կալվածատիրական հողի կոնֆիսկացիան, ժողովրդի զինումը և մշտական զորքի վոչնչացումը, չինովնիկների ընտրականությունը և, վերջապես, սոցիալիստական հեղափոխության անցնելու նախապատրաստությունը:

Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան կարգի կազմակերպություն չէ, այլ սոցիալական պատերազմի կազմակերպություն. մի անգամի ակտ չէ, այլ տևական եպոխա. այս կամ այն «խաղաղ ճանապարհով ստեղծված հիմնարկություններ» չեն, այլ հեղափոխական դիկտատուրա:

«Այդ,—ասում է Լենինը,—կարող է լինել միայն դիկտատուրա, վորովհետև այն վերափոխությունների իրականացումը, վորոնք անհապաղ ու անպայման հարկավոր են պրոլետարիատին և գյուղացիությանը, առաջ կբերի և՛ կալվածատիրոջ, և՛ խոշոր բուրժուայի, և՛ ցարիզմի հուսահատ դիմադրություն: Առանց դիկտատուրայի ջախջախել այդ դիմադրությունը, յետ մղել հակահեղափոխական փորձերն անհնար է...»:

«Բայց պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան, ինչպես աշխարհում ամեն բան, իր անցյալն ու ապագան ունի: Նրա անցյալը — ինքնակալությունն է, ճորտատիրական միապետությունը, արտոնությունները: Նրա ապագան—մասնավոր սեփականության դեմ մղվող պայքարը, վարձու բանվորի կողմից տնտեսատիրոջ դեմ մղվող պայքարը, սոցիալիզմի համար մղվող պայքարն է»:

1905 թ. հեղափոխության ընթացքում ծագեցին այնպիսի որգաններ, վորոնցում կարող էր կազմակերպչորեն ձևավորվել պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան: Այդպիսի որգաններ էյին հանդիսանում բանվորների զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդները: Այդ հեղափոխության հենց ընթացքում խորհուրդները զինված ապստամբության որգաններից պետք է փոխվեյին հեղափոխական իշխանության որգանների: Այսպիսով, խորհրդները, բոլշևիկների կարծիքով, ներկայացնում են պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրայի, այն հեղափոխական ժամանակավոր կառավարության կազմակերպչական ձևը, վորն անխուսափելիորեն պետք է ծագեր ցարիզմի դեմ մղվող հաղթական պայքարի ընթացքում և դրա հետևանքով:

Իբրև հակակշիռ բոլշևիկների այս հայացքների մենշևիկները պնդում էյին, վոր հեղափոխությունն իր ամբողջ ընթացքում կկատարվի բուրժուազիայի հեգեմոնիայով և կտանի դեպի բուրժուազիայի իշխանության հաստատումը: Ժամանակավոր կառավարությունը պատկերացնելով իբրև զուտ բուրժուական կառավարություն և վկայություն կոչելով II-րդ Ինտերնացիոնալի Ամստերդամի կոնգրեսի բանաձևը, մենշևիկներն ասում էյին, վոր պրոլետարիատը և նրա կուսակցությունը չեն կարող մասնակցել այդ բուրժուական կառավարությանը:

Այս հարցում բոլշևիկներն այլ տեսակետ ունեյին: Նրանք գտնում էյին, վոր բանվոր դասակարգի և նրա կուսակցության մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությանը հնարավոր, թույլատրելի և անհրաժեշտ է այն դեպքում, յերբ հեղափոխությունը վերջանա վճռական հաղթանակով: Հեղափոխությունից ծնված և զինված, ժողովրդի վրա հենվող այդպիսի հեղափոխական կառավարության խըն-

դիրն է հանդիսանում հեղափոխության նվաճումների լիակատար ապահովումը, ճորտատիրության և ինքնակալության բոլոր մնացորդների վճռական վերացումը, ծրագիր-մինիմումի իրականացումը:

Կարո՞ղ են արդյոք բանվորների և գյուղացիների հեղափոխական մասսաներն այս խնդիրների կատարումը վստահել որևէ այլ օրգանի, քան նրան, որը ծագել է համաժողովրդական զինված ապստամբությունից: Բոլշևիկները պատասխանում եյին— չե՛ն կարող: Հեղափոխության հաջողությունը և նրա ամրացումը բոլշևիկները հնարավոր եյին համարում իբրև ներգործություն ներքևից (զինված ժողովուրդ, բացահայտ պայքար) և իբրև ներգործություն վերևից ժամանակավոր կառավարության միջոցով: «Ներգործությունը վերևից» կամրացներ, կուժեղացներ և կկազմակերպեր «ներգործությունը ներքևից»: Իր հերթին՝ հեղափոխական կառավարությունը զինված ժողովրդական մասսաների մեջ աջակցություն կգտներ իր հեղափոխական միջոցառումների համար և այդ մասսաների անմիջական վերահսկողության տակ կգտնվեր:

Իսկ մենշևիկները, յելակետ ունենալով այն, որ ցարի տապալումից հետո իշխանությունը պետք է անցնի բուրժուազիային, բանվոր դասակարգից և նրա կուսակցությունից պահանջում եյին հրաժարվել ժամանակավոր հեղափոխական կառավարությանը մասնակցելուց: Այստեղ առանձնահատուկ ակնառությամբ յերևում է նրանց կողմից հեղափոխության բնույթի և հեղափոխության մեջ բանվոր դասակարգի դերի հարցի մանր-բուրժուական, ոչ հեղափոխական դրվածքը:

Իբրև հակակշիռ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի բոլշևիկյան լոզունգի և ժամանակավոր հեղ. կառավարությանը սոցիալ-դեմոկրատիայի մասնակցության՝ մենշևիկներն առաջ քաշեցին «հեղափոխական կոմունաների» կամ «հեղափոխական ինքնավարությունների» լոզունգը: Մենշևիկները յենթադրում եյին, որ հեղափոխության պրոցեսում տեղի կունենա հին իշխանության օրգանների հեռացումը և դեմոկրատական ընտրությունների միջոցով տեղական հեղափոխական ինքնավարությունների—«կոմունաների»—կազմակերպումը սոցիալ-դեմոկրատիայի մասնակցությամբ: Այդ «կոմունաների» դերն է՝ հեղափոխական կարգի պաշտպանությունը և պայքարը ռեակցիայի դեմ, բայց ամենևին ոչ այն, որ պայքար մղվի այդ կոմունաները ժողովրդական զինված ապստամբության միջոցով համառուսական ժամանակավոր կառավարության փոխելու:

Ինչո՞ւ մենշևիկները յենթադրում եյին, որ իշխանությունը տեղերում սկզբունքորեն տարբեր է կենտրոնի իշխանությունից: Ինչո՞ւ կարելի յե առաջինին մասնակցել, իսկ յերկրորդին՝ ո՛չ: Վերջապես, ինչո՞ւ տեղական իշխանությունն ավելի լավ է յերաշխավորում հեղափոխության հաղթանակը, քան կենտրոնի իշխանությունը: Այս հարցերին մենշևիկները յերբեք պարզ պատասխան չեյին տալիս:

Այս հնարովի թեորիայի իմաստն այն է, որ մենշևիկները չեյին հավատում հեղափոխության լիակատար հաղթանակին, այլ հույս եյին դնում նրա սուտ բնույթի, կիսահաղթանակի վրա: Հեղափո-

խության հնարավոր յելքի այսպիսի գնահատության մեջ յերևան եր գալիս մենշևիկների ձգտումը հեղափոխական պայքարի թափը հարմարացնել լիբերալ բուրժուազիայի մտադրություններին, որը խիստ շահագրգռված եր այն բանով, որ հեղափոխությունը իր վճռական վախճանին չհասնի:

3. ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆԻ ՅԵՎ ՊԱՐՎՈՒՍ-ՏՐՈՑԿՈՒ «ՊԵՐՄԱՆԵՆՏ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹԵՈՐԻԱՆ.

Դեմոկրատական հեղափոխության լիակատար հաղթանակը Ռուսաստանում Լենինը և՛ 1905 թ., և՛ ավելի ուշ միշտ կապում եր հետագայում դրա պրոլետարական սոցիալիստական հեղափոխության վերաճելու խնդրի հետ: Այս դեպքում Լենինն անմիջականորեն ընթանում եր Մարքսի յետևից նրա պերմանենտ, այսինքն՝ անընդհատ հեղափոխության ուսմունքի հարցում: Դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում,—ասում եր Լենինը,—կատարվում է հենց Ռուսաստանի բավականաչափ հասունացած կապիտալիզմի պարագայում, որը սոցիալիստական պրոլետարիատին ահագին հեղափոխական ուժ է դարձնում. այդ հեղափոխությունը կատարվում է նույնպես այնպիսի միջազգային պարագայում, յերբ աշխարհի վճռական յերկրներն օբյեկտիվորեն հասունացել են սոցիալիզմին անցնելու համար: Հաղթանակած ռուսական դեմոկրատական հեղափոխությունը կթափահարի և պայքարի կհանի այդ յերկրների սոցիալիստական պրոլետարիատին, որն իր յերկրներում կապիտալիզմի վրա տարած հաղթանակով կօգնի Ռուսաստանի պրոլետարիատին՝ իր դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցնել:

Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի այս վերաճումն անխուսափելիորեն կթելադրվի դասակարգային պայքարի այն ընթացքով, որ կդասավորվի հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի կազմումից անմիջապես հետո: Ինքնակալական կարգի տապալումը կապիտալիստական դասակարգերի առաջ բաց կանի կապիտալիզմի աճման հոյակապ հեռանկարներ: Քաղաքների կապիտալիստական բուրժուազիան և գյուղացիության կապիտալիստական (կուլակային) շերտերը, պաշտպանություն գտնելով միջին գյուղացիության որոշ շերտերից, կցանկանան հաստատ կարգ, բլոկ կկազմեն հենց նոր ջարդված միապետության մնացորդների հետ և վճռական հարձակման կդիմեն պրոլետարիատի և ամենաաղքատ գյուղացիության հեղափոխական նվաճումների վրա, կջանան տապալել պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան: Պրոլետարիատն ու ամենաաղքատ գյուղացիությունը պետք է որ իրենց հերթին հարձակման դիմեն իրենց թշնամիների նոր կոալիցիայի վրա և այդ կլինի սոցիալիստական հեղափոխության, իբրև կորստից միակ փրկության համար մղվող նրանց պայքարը...

Մարքսի ուսմունքը հեղափոխության վերաճման մասին, որ հետևողականորեն զարգացրեց Լենինը, մենշևիկական ձևով խեղա-

թյուրեցին Պարվուսը և Տրոցկին, վորոնք առեղծեցին իրենց «պերմանենտ հեղափոխության» թեորիան: Նրանց թեորիայի իմաստն այն եր, վոր Պարվուսն ու Տրոցկին ընդհանրապես ժխտում եյին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ետապի անխուսափելիությունը: Լիովին իրավամբ ընդունելով, վոր մեր պայմաններում բուրժուազիան հակահեղափոխական ուժ է, նրանք դրա հետ միասին խոշոր սխալ եյին կատարում, ժխտելով գյուղացիության հեղափոխական դասակարգ լինելու նշանակությունը: Պարվուսի և Տրոցկու կարծիքով միակ հեղափոխական դասակարգը հանդիսանում է պրոլետարիատը («Առանց ցարի, բայց կառավարությունը բանվորական»):

Բայց այդ բանվորական կառավարությունը, վոր ծագում է միապետության տապալելուց անմիջապես հետո, իշխանության գլուխ կանգնելով մանր-բուրժուական յերկրում, անխուսափելիորեն կբաղխվի գյուղացիության լայն մասսաների հետ՝ այդ թվում նաև գյուղական չքավորների հետ, վորոնց Տրոցկին չեր զատում գյուղացիության ընդհանուր մասսայից. այդ կառավարությունը կորստից կարող է փրկել միայն Արևմուտքի պրոլետարական հեղափոխությունը:

Պարվուսն ու Տրոցկին չեյին հասկանում, վոր ինքնակալության տապալման համար մենակ պրոլետարիատի ուժերը բավական չեն, վոր դրա համար հարկավոր է հեղափոխական դաշինք կնքել գյուղացիության հետ, հարկավոր է այդ յերկու դասակարգի հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան, վոր միայն այդ հիմքերի վրա հնարավոր եր հեղափոխության... վերաճումը մեկ դասակարգի—պրոլետարիատի դիկտատուրայի: «Լենինը առաջարկում եր պսակել հեղափոխության գործն իշխանությունը պրոլետարիատին անցնելով, այն ինչ «պերմանենտ հեղափոխության» կողմնակիցները մտածում եյին գործն սկսել ուղղակի պրոլետարիատի իշխանությունից», նկատում է ընկեր Ստալինը, ընդգծելով, վոր 1905 թ. Լենինը Տրոցկու դեմ պատերազմում եր վոչ թե անընդհատության հարցի պատճառով, վոր հենց ինքը զարգացնում եր Մարքսի յետևից, այլ գյուղացիության դերի թերագնահատման պատճառով, Տրոցկու կողմից բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի իդեան չհասկանալու և ըստ եյության ժխտելու պատճառով: Գյուղացիության հեղափոխական դերի և գյուղացիության հետ դաշնակցած պրոլետարիատի ղեկավար դերի ժխտումը կազմում է տրոցկիզմի իսկական մենշևիկական հիմքը:

4. ՅԵՐԿՈՒ ՏԱՔՏԻԿԱ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ: «ԻՍԿՐԱՅԻ» ԶԵՄՍՏՎԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՊԼԱՆԸ: ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԴՈՒՄԱՅԱԿԱՆ ՏԱՔՏԻԿԱՆ.

Մենշևիկների վերաբերմունքը դեպի բուրժուազիան իբրև հեղափոխական դասակարգ, վորն ընդունակ է պայքարել ինքնակալության լիակատար լիկվիդացիայի համար, նրանց արմատական մոլորությունն է հանդիսանում (դա մոլորություն չէ, այլ ամբողջական մի

կոնցեպցիա, ըստ վորի բուրժուազիան հետևողական հեղափոխական դասակարգ է Ռուսաստանում և կարող է բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն իր հաղթական վախճանին հասցնել: Բուրժուազիայի հետևողականության մասին մենշևիկները համոզված եյին. Ս. Գար.): Դեռ Պոտրեսովի բանաձևը, վոր ընդունեց կուսակցության II համագումարը, թույլատրում եր համաձայնություն լիբերալ բուրժուազիայի հետ այն պայմանով, վոր վերջինս ինքնակալության դեմ մղվող պայքարում սոցիալ-դեմոկրատիայի կողմն անցնի և չպայքարի բանվոր դասակարգի պահանջների դեմ: Այստեղ բուրժուազիայից պարտավորությունների պահանջ եր արվում առանց ռեալ կերպով հաշվառելու, թե նա ինչքան կկարողանա և կցանկանա իրականում կատարել այդ պարտավորությունը: Իսկ իրոք յեթե բուրժուազիան այդպիսի պարտավորություն ստանձներ էլ, չեր կատարի այն, վորովհետև դա կհակասեր նրա դասակարգային շահերին:

Լիբերալների դասակարգային անալիզի փոխարեն մենշևիկները հարցը վերածում են քաղաքական դեկլարացիաների և անսկզբունք կոմբինացիաների, ի վնաս պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերի:

Պոտրեսովի բանաձևն իր հետագա զարգացումը և պրակտիկ կիրառումն ստացավ 1904 թ. աշնանը՝ մենշևիկների մշակած «զեմստվային կամպանիայի» պլանում: Այդ պլանում մենշևիկները բանվորներին հանձնարարում եյին ցույցեր կազմակերպել զեմստվային ժողովներում, քաղաքային դումաների ժողովներում և լիբերալ բուրժուազիայի բանկետներում: Այդ ժողովներում, ըստ մենշևիկյան «Իսկրայի» պլանի, բանվորները պետք է հայտարարեյին իրենց քաղաքական պահանջները և բուրժուազիային դրդեյին միանալ դրանց: Այդ պլանում բանվորներին հանձնարարվում եր զգույշ լինել և չվախեցնել լիբերալ զեմեցներին, նրանց յետ չմղել իրենցից անչափավոր պահանջներով և անզգույշ վարմունքով:

Իսկ բանվորների հեղափոխական փողոցային ցույցերը, վոր անմիջականորեն ուղղված եյին ինքնակալության դեմ, ցույցեր, վորոնք քաղաքի բնակչության լայն մասսաներին պայքարի եյին դրդում և վորոնք մասսաներին ուղղակի և անմիջականորեն բաղխման մեջ եյին դնում ինքնակալության ուժերի հետ, դաստիարակելով բանվորների մեջ հեղափոխական կոփվածություն և պայքարի փորձ,—այդպիսի ցույցերը հայտարարվում եյին քաղաքական ցույցերի «ավելի ստոր» ձև, իսկ բանվորների փոքրաթիվ խմբերի խոսակցությունները զեմցեների հետ զեմստվային վարչությունների ներսում հայտարարում են ցույցերի «ավելի բարձր» ձև:

Այս դեպքում, ինչպես և Պոտրեսովի բանաձևում, բուրժուազիան դիտվում է իբրև դեմոկրատիայի համար մղվող համազգային պայքարի կրող և հեգեմոն, իսկ բանվոր դասակարգը պատկերացվում է իբրև բուրժուազիայի հրեշ. բուրժուազիային չվախեցնելու համար՝ հանձնարարվում է այդ հրեշին չափավորություն և զգուշություն ունենալ իր բոլոր պահանջներում և գործողություններում:

Մենշևիզմի ոպորտունիստական բնույթը հատկապես յերևում է այն վերաբերմունքից, վոր նրանք ունեյին դեպի հեղափոխության մյուս արմատական հարցը—զինված ապստամբությունը: Մենշևիկներն

այս հարցին միշտ շատ խուսափողական և անորոշ պատասխան էին տալիս: Մի կողմից՝ նրանք զինված ապստամբությունն ընդունում էին իբրև պայքարի մեթոդ հեղափոխության մեջ, մյուս կողմից՝ կուսակցության խնդիրն այս ասպարեզում սահմանափակում էին ապստամբության լոզունգի պրոպագանդով և վճռականապես առարկում էին կուսակցության կողմից ապստամբություն նախապատրաստելու և կազմակերպելու խնդրի դեմ: Բոլշևիկների ապստամբության նախապատրաստելու ձգտումը նրանք համարում էին նարոդովոլյականություն և բլանկիզմ:

Այն ինչ 1905—1907 թ.թ. հեղափոխության ընթացքը ցույց տվեց, վոր զինված ապստամբությունը հանդիսանում է ինքնակալության վրա (վոչ միայն ինքնակալության Ս. Գ.) վճռական հաղթանակ տանելու միակ ճանապարհը, վոր զինված ապստամբության իդեան մասսաները հաստատ յուրացրել են, վոր, հետևաբար, կուսակցությունը պետք է վոչ միայն պրոպագանդ անի զինված ապստամբության անհրաժեշտության համար, այլև բոլոր միջոցներով ռազմա-տեխնիկական տեսակետից նախապատրաստի այն:

Իսկ մենշևիկները «սկզբունքով» ընդունելով զինված ապստամբությունը, բայց հրաժարվելով ապստամբության կազմակերպչական նախապատրաստությունից, իրենց այդ հրաժարումը թաքցնում էին մասսաներին անժամանակ ապստամբությունից նախազգուշացնելու բառերով, պրոլետարիատին վախեցնում էին մյուս դասակարգերից (այսինքն՝ բուրժուազիայից) մեկուսանալով և այլն: Այս բոլոր վերապահումների և սահմանափակումների իմաստն այն էր, վոր մենշևիկներն ըստ էության ամեն ձևով ձգտում էին խուսափել զինված ապստամբությունից, իբրև հեղափոխական պայքարի մեթոդից: Յեթե նրանք այնուամենայնիվ իրենց բանաձևերում ընդունում էլ էին այն, ապա այդ վոչ այլ ինչ էր, բայց յեթե զիջում հեղափոխական մասսաների տրամադրություններին, մանյովր:

Բնորոշ է, վոր մենշևիկների Ժնևի առաջին կոնֆերենցիայի (1905 թ) բանաձևում ասվում է, վոր ինքնակալության վրա վճռական հաղթանակ կարելի նաև զինված ապստամբության հետևանքով, կամ հեղափոխության ընթացքում ծագած ներկայացուցչական որգանի (օրինակ՝ Պետական դումայի) Սահմանադիր ժողով գումարելու վորոշումով: Այսպիսով մենշևիկների համար զինված ապստամբությունը հեղափոխության հաղթանակի ամենևին միակ ուղին չէ... Մենշևիկները չէին կարողանում հասկանալ այն, վոր յեթե նույնիսկ ինքնակալությունն իր համաձայնությունը հայտներ Սահմանադիր ժողով գումարելու վերաբերյալ, ապա այդ դեռ ամենևին չէր լինի հեղափոխության հաղթանակ, այլ իշխանության կողմից ժողովրդական մասսաներին խաբելու մի փորձ միայն:

Մեր բոլոր ասածներից ակնհայտ է, վոր մենշևիկները վորոշակի թեքվում էին դեպի հարցի այն պրոստ լուծումը, վոր ներկայացնում էր լիբերալ բուրժուազիայի դասակարգային գիծը: Զվախեցնել բուրժուազիային և չխանգարել նրան—այս էր մենշևիզմի տակտիկան: Այս տակտիկայի վոգով Պլեխանովը I Պետական դումայի ժամանակաշրջանում առաջադրեց «լիակատար իշխանությամբ օժտված դումայի» «սահմանադրական ֆունկցիաներով դումայի» լոզունգը, իսկ I Պետական դումայի ցրումից հետո մենշևիկները վորոշում ընդունեցին պայքարել «Պետական դումայի» նիստերի վերսկսման համար, վոր նա Սահմանադիր ժողով գումարի»: Յերկու դեպքում էլ մենշևիկները վերացնում էին ինքնակալության տապալման, նրա վրա զինված ապստամբության միջոցով լիակատար հաղթանակ տանելու հարցը և հույս էին դնում խաղաղ ճանապարհով հեղափոխության հաղթանակին հասնելու վրա:

Զինված ապստամբության հարցում մենշևիկյան դիրք էր բռնում նաև Տրոցկին, ուշադրության ամբողջ կենտրոնը դարձնելով ընդհանուր գործադուլի համար մղվող պայքարը և զինված ապստամբության հասցնելով «տեխնիկական մոմենտի» դեր, վորը բացի դրանից «կարող է մտնել, բայց կարող է և չմտնել հեղափոխության մեջ» (Троцкий, т. II. ч. I):

1905—1907 թ.թ. հեղափոխության պրոցեսում մենշևիկների ամբողջ տակտիկան Պոտրեսովի բանաձևի և «զեմստվային կամպանիայի» պլանի հետագա կիրառումն էր: Այս տեսակետից բնորոշ է մենշևիկների դումայական տակտիկան:

Պետական դումայի հարցը ծագեց 1905 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, յերբ կառավարությունը հեղափոխական շարժման ճնշման տակ, բուրժուազիային իր կողմը քաշելու և ժողովրդական մասսաներին խաբելու նպատակով, որենք հրատարակեց Պետական դումայի (Բուլիգինյան դումայի) գումարման մասին: Այդ դուման, վոր իր իրավունքներով խորհրդակցական էր, այսինքն փաստապես իրավազուրկ և միայն ունևոր դասակարգերի վերնաշերտը ներկայացնող, վոչ մի չափով չէր կարող լուծել հեղափոխության հարցերը: Լիովին հասկանալի յէ, վոր բանվոր դասակարգի, գյուղացիության և քաղաքի չքավորների հեղափոխական մասսաները պետք է ընթանային ուղիղ հեղափոխական ճանապարհով և կառավարության խաբեությանը չենթարկվելով, պետք է բոյկոտի յենթարկեյին այդպիսի Պետական դուման: Այդպիսի դիրք էլ բռնեցին բոլշևիկները:

Սեպտեմբերյան գործադուլները, հսկայական արագությամբ աճելով, հոկտեմբերին փոխվում են ընդհանուր քաղաքական գործադուլի, վորը դրա հետ միասին գյուղացիությանը մղեց դեպի մասսայական ագրարային շարժում: Այդ գործադուլը սրբեց հրապարակից Բուլիգինյան դուման և կառավարությունից կորզեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը: Այսպիսով հեղափոխական տակտիկան ամբողջովին արդարացավ:

Այնինչ մենշևիկները Բուլիգինյան դումայի վերաբերմամբ հանձնարարում էին մասնակցության կամ այդ Պետական դուման օգտագործելու քաղաքականություն: Ինչքան վոր Բուլիգինյան դուման ինքնակալության և բուրժուազիայի վերնաշերտի համաձայնության մի փորձ էր և բուրժուազիայի մի մասը կարող էր ընդառաջել այդ համաձայնությանը, մենշևիկները, վախենալով բուրժուազիայի հետ կապերը խզելուց, ընդառաջում են այդ Պետական դումայի օգտագործմանը:

Յերբ դեկտեմբերյան ապստամբությունը ճնշվեց և կառավարությունը հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հիման վրա վերջապես հայտարարեց նոր դումայի գումարման մասին, մենշևիկները նորից կանչեցին

Պետական դումային և նորից առաջարկեցին պրոլետարիատին մասնակցել ընտրություններին։ Այս դեպքում էլ մենշևիկները գնացին բուրժուազիայի և կադետների բուրժուական կուսակցության յետևից, վորը վախեցած լինելով հեղափոխությունից՝ ամեն ձևով հնարավորություն եր փորձում համաձայնության գալ ինքնակալության հետ հեղափոխությունը ճնշելու համար։

Այնինչ հեղափոխական պրոլետարական կուսակցության պարտականությունն եր մերկացնել ժողովրդի առաջ այս բոլոր սահմանադրական փորձերի կեղծ բնույթը, պարզաբանել, վոր ինքնակալության վրա իսկական հաղթանակ տանելու ուղին հեղափոխության հետագա ծավալումը, զինված պայքարի զարգացումն ե։

I Պետական դումայի (Վիտտեյի դումայի) լիակատար անկարողությունը վորևե բան անել, ժողովրդական կարիքների բավարարման համար մի անգամ էլ ապացուցեց, վոր հեղափոխության հաղթանակն իրագործելի յե միայն բացահայտ պայքարով ինքնակալությունը տապալելու միջոցով։ Այս պատճառով բոլշևիկները I Պետական դումայի վերաբերմամբ առաջարկում եյին ակտիվ բոյկոտի տակտիկան, այսինքն՝ ակտիվ մասսայական պայքարի տակտիկան, վորը կփշրեր ինքնակալության և կեղծ-սահմանադրական հիմնարկի գումարման այդ փորձերը։

I Դումայի ցրումից հետո, յերբ սահմանադրական իլյուզիաները խորապես խախտվեցին, յերբ, մյուս կողմից, պարզվեց, վոր 1905 թ. դեկտեմբերին հեղափոխությունը խոր պարտություն կրեց և վոր հեղափոխական շարժման զարգացումը ձգձգվող, զիգզագաձև բնույթ ստացավ, կուսակցությունը չհրաժարվելով իր հեղափոխական տակտիկայից, պետք ե ընդուներ II Պետական դումայի ընտրություններին մասնակցելու նպատակահարմարությունը։

II Պետական դումայի ընտրություններին մասնակցելը և սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի աշխատանքը դումայում բոլշևիկները դիտում եյին իբրև մասսաների, հատկապես գյուղացիության, հեղափոխական դաստիարակության մեթոդ, իբրև նրանց կազմակերպման և նախապատրաստման միջոց անմիջական պայքարի համար այն մոմենտում, յերբ այդ պայքարի համար կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ։

Իսկ մենշևիկները դումային մասնակցելը դիտում եյին իբրև լիբերալ բուրժուազիայի վրա ներգործելու մեթոդ այն հաշվով, վոր այդ ներգործության հետևանքով լիբերալները կարող են հասնել ժողովրդի հիմնական պահանջների բավարարմանը։ Այսպիսով մենշևիկները շարունակ ավելի եյին հակվում դեպի այն, վոր ճանաչեն հեղափոխությունը վերջացած, իսկ Պետական դուման՝ իսկական պարլամենտական հիմնարկ։

Ստոկհոլմի համագումարի առթիվ Պետական դումայի մասին կազմած իրենց բանաձևի նախագծում մենշևիկները գրում եյին, վոր Պետական դուման հանդիսանում ե ամբողջ քաղաքական կյանքի ֆոկուսը և հեղափոխության հետագա զարգացման յելման կետը, վոր դումայի ընդհարումները ինքնակալության հետ՝ ժողովրդից պաշտպանություն գտնելիս՝ կտանեն դեպի հաղթանակ՝ հին կարգի վրա։

5. ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ 1905—1907 Թ. Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դեռ 1905 թ. գարնանը կուսակցության III համագումարը գտավ, վոր II համագումարի ընդունած կտորների (отрезки) ծրագիրն անբավարար ե և առաջադրեց կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայի լոզունգը։

Բոլշևիկները կալվածատիրական հողերի կոնֆիսկացիան դիտում եյին իբրև հենց գյուղացիության հեղափոխական ակտ, իբրև հողերի ինքնիշխան գրավում գյուղացիության կողմից իր գյուղացիական հեղափոխական կոմիտեների միջոցով։ Բոլշևիկների՝ հողի կոնֆիսկացիայի լոզունգն այսպիսով հանդիսանում եր գյուղացիական ապստամբության լոզունգ, գյուղացիությանը դեպի պայքար մղելու կոչ։

Այնինչ մենշևիկներն իրենց Ժընևի կոնֆերենցիայում սահմանափակվեցին գյուղացիների կողմից հողի «բռնի գրավման» պաշտպանության անորոշ ճանաչումով և ագրարային հարցի «հաստատ» վճիռը թողեցին Սահմանադիր ժողովի իրավասությանը։ Դրա հետ միասին գյուղացիական հեղափոխական կոմիտեների փոխարեն մենշևիկները հանձնարարում եյին կազմակերպել հատուկ դեմոկրատական (և վոչ թե գյուղացիական) կոմիտեներ, վորոնք պետք ե ստեղծվեյին Սահմանադիր ժողովի դեկրետով։

Այսպիսով մենշևիկների մոտ բացակայում եր գյուղացիությանը դեպի հեղափոխություն կոչելը, ինչ վոր լիովին տեղավորվում եր հեղափոխության մենշևիկյան սխեմայում, հեղափոխություն, վոր նրանց կարծիքով կատարում ե բուրժուազիան. գյուղացիությունը հողն ստանում ե բուրժուազիայի ձեռքից...

Ստոկհոլմի համագումարում (1906 թ.) հարց բարձրացավ, թե ինչպես պետք ե վարվել այն դեպքում, յերբ հեղափոխության ընթացքում հողերի կոնֆիսկացիան փաստ կդառնա և կուսակցությունն ստիպված կլինի լուծել կոնֆիսկացիայի յենթարկված հողերի օգտագործման և հողային հարաբերությունների նոր կարգի ստեղծման հարցը։

Այս հարցին մենշևիկները պատասխանեցին մունիցիպալիզացիայի նախագծով, իսկ բոլշևիկները—ազգայնացման[1]) նախագծով։

Մենշևիկյան նախագիծը նախատեսում եր խոշոր կալվածատիրական հողերի հանձնումը դեմոկրատական ինքնավարությունների (մունիցիպալիտետների) օրգաններին, վորոնք վարձակալության սկզբունքով հողը հանձնում են գյուղացիությանը։ Այսպիսով բաժնեհողերն առաջվա նման պետք ե մնային իբրև սեփականություն գյուղացիների ձեռքին, յեկեղեցական և վանքապատկան հողերը պետք ե անցնեյին պետությանը, մանր մասնատիրական հողերը (ասենք մոտավորապես մինչև 100 դեսյատին) պետք ե մնային առաջվա սեփականատերերի ձեռքին, և միայն խոշոր կալվածատիրական հողերը պետք ե հանձնվեյին մունիցիպալիտետներին։

1) Այս առաջադրությունից հետո զետեղվում ե «բոլշևիզմի ագրարային ծրագրի զարգացումը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ» դասախոսությունը, վորի մեջ ավելի լրիվ տնտեսական և քաղաքական հիմնավորում ե տրվում ագրարային ծրագրերին։ Այդ դասախոսության մշակումը հեռակայողների համար հանդիսանում ե այս առաջադրության մշակման բաղկացուցիչ մասը։

ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Բոլշևիկյան նախագիծը նախատեսում էր հողերի լիակատար ազգայնացումը, այսինքն՝ ամբողջ հողը պետական սեփականություն հայտարարելը, ընդ որում, բոլշևիկների կարծիքով, այս միջոցառության կենսագործումը հնարավոր էր միայն ինքնակալության վերջնական տապալման և հեղափոխության լիակատար հաղթանակի պայմանում (դեմոկրատական հանրապետություն, ժողովրդի զինում, չինովնիկների ընտրականություն): Այս էլ հենց ըստ էության հանդիսանում էր զարգացման «ամերիկյան» ուղու համար մղվող պայքարը:

Մունիցիպալիզացիայի մենշևիկյան նախագիծը ելնում էր հեղափոխության ոչ թե լիակատար, այլ կիսատ հաղթանակի օրիենտացիայից և հիմնականում չեղվում էր զարգացման «պրուսական» ուղին ընդունելու: Չէ՞ որ այդ նախագծի իմաստով գյուղացիական հեղափոխական շարժումը կարող էր հասնել կալվածատիրական հողերի գրավման միայն առանձին ռայոնների կամ նահանգների սահմաններում: Մենշևիկյան նախագիծը կոչ չէր անում Ռուսաստանի գյուղացիությանը միանալ իբրև մեկ հեղափոխական ուժ ճորտատիրության և ինքնակալության լիակատար լիկվիդացիայի համար: Ընդհակառակը, մենշևիկյան նախագիծը ելնում էր այն բանից, որ տեղերում կարող է հեղափոխության հաղթանակ տեղի ունենալ, իսկ կենտրոնում կարող է լիակատար հաղթանակ չլինել էլ: Այս պատճառով էլ մենշևիկները մունիցիպալիզացիայի նախագծի պատճառաբանության մեջ ասում էին, որ մունիցիպալիզացիան «երաշխիք է ռեստավրացիայի դեմ», այսինքն՝ եթե կենտրոնում մնա կամ հակահեղափոխության հետևանքով կայանի կիսառեակցիոն իշխանություն, ապա այդ իշխանությունը հին կարգի լիակատար ռեստավրացիայի և հողերի վերադարձի փորձեր անելիս հակազդեցության կհանդիպի դեմոկրատական ինքնավարությունների կողմից:

Մենշևիկների ենթադրությունը, որ դեմոկրատական ինքնավարությունները տեղերում կկարողանան իրական հակազդեցություն ցույց տալ կենտրոնական ռեակցիոն իշխանությանը և դրանով կանխել հին ռեժիմի ռեստավրացիան, ծայրահեղորեն միամիտ բան է: Հեղափոխության բախտը հենց կախված է այն բանից, թե արդյոք համազգային մասշտաբով վերջնականապես արմատախիլ կարվեն հին իշխանության բոլոր դասակարգային արմատները և օրգանները: Ե՛վ հողատիրության ասպարեզում, և՛ պետական կարգի ասպարեզում հենց հնի այս լիակատար արմատախիլ անելու կողմն էլ ուղղված էր ազգայնացման բոլշևիկյան նախագիծը:

Այս նախագիծը լիակատար պարզությամբ գյուղացիությանն ասում էր, որ եթե նա իրոք ուզում է կալվածատերերի հետ իր հաշիվը մաքրել, եթե նա իրոք ուզում է լիովին ու առանց որևէ փրկանքի [illegible] տնօրինության տակ առնել կալվածատիրական հողերը, ապա նա պետ[illegible] և ձգտի պետության լիակատար դեմոկրատացման, պրոլետարիատի [illegible] գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի [illegible] Գյուղացիությունը պետք է նախ նվաճի այդ հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան, որովհետև միայն դրանից հետո կարելի [illegible] հանդիստ օգտվել կոնֆիսկացիայի ենթարկված կալվածատիրական հողերից:

Հեղափոխության այդպիսի ելքը, որը կտանի դեպի բանվոր դասակարգի և գյուղացիության վճռական հաղթանակը, հետևաբար և դեպի ամբողջ հողի ազգայնացումը, դրա հետ միասին էլ ամենից ավելի լրիվ, թեկուզ և հարաբերական երաշխիքն է ռեստավրացիայի դեմ, այսինքն՝ այս կամ այն ձևով ճորտատերերի իշխանության և միապետության վերականգնման դեմ:

Ինչպես ցույց տվեց ռուսական հեղափոխությունների ամբողջ ամենաուշ փորձը, գյուղացիությունն ամենևին չէր վախենում բոլոր հողերի, այդ թվում նաև գյուղացիական բաժնեհողի ազգայնացումից, քանի որ ազգայնացված հողն ամենից ավելի օգտակար պայմաններով ամբողջովին հանձնվում է նրան օգտվելու համար:

Բոլշևիկները հողի ազգայնացումը համարելով ագրարային հարցի լուծման ամենից ավելի հեղափոխական ձևը, ընդունում էին կոնֆիսկացիայի ենթարկված հողերի բաժանման թույլատրելիությունն այն դեպքում, եթե հեղափոխությունը լիակատար հաղթանակի չհասնի, այս պատճառով էլ բոլշևիկներն արտահայտվեցին այդ միջոցառության օգտին ընդդեմ մունիցիպալիզացիայի է՛լ ավելի պակաս հեղափոխական մենշևիկյան նախագծի:

Ստոկհոլմի համագումարը, որի մեջ գերիշխող էին մենշևիկները, հիմնականում ընդունեց մունիցիպալիզացիայի նախագիծը՝ բաժանման թույլատրելի լինելն ընդունելով:

***

III համագումարը և Ժընևի մենշևիկյան կոնֆերենցիան վերջնականապես ձևավորեցին պառակտման առկայությունը, որը երկու կուսակցություն կազմելուն հասավ, իսկ նրանց ընդունած բանաձևերը և հեղափոխության արմատական հարցերի վերաբերյալ ունեցած խոր տարաձայնություններն է՛լ ավելի ընդգծեցին այդպիսի սահմանագծման ամբողջ անհրաժեշտությունը:

Սակայն հեղափոխության ընթացքում կուսակցության մեջ լցված բանվորների լայն մասսաները չէին գիտակցում տարաձայնությունների խորությունը, այլ հաճախ այդ ընդունում էին իբրև ինտելիգենտների և առաջնորդների մանր խծբծանք, որ վնասակար է հեղափոխության համար, որը կարիք ունի բանվոր դասակարգի և նրա ղեկավար ավանգարդի միասնության: Այստեղից բղխում էր կուսակցության միասնության պահանջը: Բոլշևիկներն ընդառաջում էին այդ պահանջի բավարարմանը ոչ թե այն պատճառով, որ տարաձայնությունները երկրորդական էին համարում, այլ այն պատճառով, որ միասնական կուսակցության շրջանակներում պաշտպանելով իրենց հեղափոխական-դասակարգային գծի արդարացիությունը, հույս ունեին իրենց կողմը գրավել հեղափոխական բանվորների այն մասը, որը թյուրիմացությամբ դեռևս գնում էր մենշևիկների ետևից: Այս «միասնական ճակատի» տակտիկայի յուրատեսակ ձևն էր: Փորձը ցույց տվեց, որ այս տակտիկան ինքն իրեն արդարացրեց:

Բոլշևիկներն իբրև միացման պայման առաջադրում էին այս պահանջները. 1) դեմոկրատական ընտրություններ միացուցիչ համագումարի համար, 2) կուսակցության պրակտիկ գործողությունների հարցերում փոքրամասնության անպայման ենթարկումը մեծամասնու-

թյան. 3) միասնական կուսակցության շրջանակներում իդեական պայքարի լիակատար ճանաչում: Այս պայմաններում բոլշևիկները վոչ առանց հիմունքի հույս ունեյին իրենց հաղթանակի վրա, կուսակցական բանվորներին իրենց դիրքի կողմը գրավելու և կուսակցական ղեկավարությունն իրենց ձեռքն անցնելու վրա: Միացած կուսակցության զարգացման հետևյալ քայլը կլիներ գրականագետների և «առաջնորդների» ոպորտունիստական ինտելիգենտական խմբակների վտարումը կուսակցությունից, յերբ նրանք իդեապես կմեկուսացվեյին կուսակցական բանվորների լայն մասսաներից: Այսպիսի պրոցես էլ կատարվեց կուսակցության Լոնդոնի V համագումարից հետո:*)

Հեղափոխության պայմաններում կուսակցական կյանքի մյուս կարևորագույն մոմենտը նեղ, խորապես կոնսպիրատիվ կուսակցությունից, վորը լայնորեն կիրառում եր կոոպտացիայի սկզբունքը և նշանավոր չափով ինտելիգենտական եր իր կազմով, հատկապես ղեկավար օրգաններում (կոմիտեներում),—մասսայական կուսակցության անցնելն եր, կուսակցություն, վորը տասնյակ հազարավոր բանվոր-անդամներ ունի, հնարավորություն ունի կիսալեգալ բացահայտ աշխատանք կատարել, այդ զուգորդելով հին կոնսպիրատիվ կազմակերպության և տեխնիկայի հետ, կուսակցություն, վորը հաստատ կուրս եր վերցրել բանվորներին գրավել բոլոր ղեկավար օրգանները դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի իրագործման հիման վրա: Կուսակցությունն սկսեց վճռականորեն վերակառուցվել այդ գծով, սակայն չընկնելով մենշևիկյան դեմոկրատական մանիլովականության, լեգալիզմի և աքսելրոդականության մեջ, վորոնք մի քիչ ավելի ուշ իրենց ձևակերպված արտահայտությունը գտան բանվորական համագումարի համար մղվող ագիտացիայում և ռեակցիայի եպոխայի «լիկվիդատորության» մեջ:

***

Այս առաջադրության մշակման հետևանքով հեռակայողները պետք է գան հետևյալ հիմնական հարցերի և հետևությունների պարզ հասկացողության.

1 Ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը կարող եր հաղթանակել միայն իբրև գյուղացիական հեղափոխություն պրոլետարիատի ղեկավարությամբ, լիբերալ բուրժուազիային չեզոքացնելով: Այդ հեղափոխությունը պետք է իր հաղթանակի ժամանակ վերաճեր սոցիալիստական հեղափոխության:

2. Հեղափոխության լիակատար հաղթանակը նշանակում եր պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի—բանվորների, գյուղացիների և զինվորների պատգամավորների խորհուրդների իշխանության հաստատում, վորոնք կազմում են ժամանակավոր հեղափոխական կառավարություն իբրև հեղափոխության նվաճումների ամրացման օրգան և իբրև դեմոկրատական հեղափոխության սոցիալիստականի վերածելու յելման մոմենտ: Այդ հեղափոխական կառավարության ամենամոտիկ խնդիրը դեմոկրատական հանրապետության, հողի ազգայնացման, 8-ժամյա բանվորական օրվա, ժողովրդին զինելու իրականացումն է:

3. Հեղափոխության լիակատար հաղթանակը հնարավոր է միայն համաժողովրդական զինված ապստամբության միջոցով, վորի նախապատրաստման, կազմակերպման և իրագործման տեսանկյունով պետք է կառուցվի պրոլետարիատի և նրա կուսակցության տակտիկան:

4. Հեղափոխության բոլոր հիմնական հարցերի հասկացողության մեջ դեմ առ դեմ կանգնեցին սոցիալ-դեմոկրատիայի յերկու հոսանքի խորագույն հակասությունները, վորոնցից բոլշևիկյան հոսանքը հետևողականորեն հեղափոխական և պրոլետարական եր, իսկ մենշևիկյանը և նրա այլատեսակությունը—տրոցկիզմը—ոպորտունիստական հարմարումն եր լիբերալ բուրժուազիայի գծին:

5. Բոլշևիկների յերկու ֆրոնտի վրա մղած պայքարում—ընդդեմ բացահայտ ոպորտունիզմի և ընդդեմ «ձախ» ֆրազի, հեղափոխական արկածախնդրության հերոսների,—ոպորտունիզմի յերկու այլատեսակության նկատմամբ յեղած հաշտվողականության դեմ մղած պայքարում տվյալ ետապում գլխավոր ֆրոնտը մենշևիկների բացահայտ ոպորտունիզմի և դրա նկատմամբ յեղած հաշտվողականության դեմ մղվող պայքարի ֆրոնտն եր: Դեպի ձախ ուղղված պայքարի ֆրոնտը, վոր հեղափոխական վերելքի պայմաններում ավելի պակաս կարևոր տեղ եր բռնում, ներկայացված եր «ձախ» ֆրազի հերոս Տրոցկու, բոլշևիկների մի մասի ծնունդ առնող «բոյկոտիզմի» (ապագա «ոտզովիզմ») կողմից, իսկ կուսակցությունից դուրս անարխո-սինդիկալիզմի և եսեր-մաքսիմալիստների կողմից: Հեղափոխական մարքսիզմին թշնամի այս իդեոլոգիաների դեմ մղած պայքարում, վորոնք արտացոլում եյին բուրժուական ազդեցությունը պրոլետարիատի վրա, պայքարելով բանվոր դասակարգի անբաժան ղեկավարության համար, բոլշևիկների կուսակցությունը կռում եր իր հեղափոխական ստրատեգիան և տակտիկան:

6. Բոլոր դասակարգերը և կուսակցությունները 1905—1907 թ.թ. հեղափոխությունից դուրս յեկան իրենց շահերի, խնդիրների և պայքարի մեթոդների պարզ հասկացողությամբ: Այս պատճառով էլ 1905—1907 թ.թ. հեղափոխությունը դիտվում է իբրև 1917 թ. հեղափոխության հաղթանակը նախապատրաստող գլխավոր փորձ:

ԹԵՄԱՅԻ ՊԼԱՆԸ

I. 1905—1907 թ.թ. հեղափոխության բնույթը և շարժիչ ուժերը.

1. Բուրժուական հեղափոխությունը բոլշևիկների և մենշևիկների հասկացողությամբ:

2. Բուրժուազիայի դերը հեղափոխության մեջ բոլշևիկների և մենշևիկների գնահատությամբ:

---

*) Ի դեպ՝ հարկավոր է նշել ընկ. Կրուպսկայայի Ստոկհոլմի համագումարը վկայության կոչելու սխալը, վոր նա արեց կուսակցության XIV համագումարում երբ արդարացնում «Լենինգրադի» ոպոզիցիայի վարմունքի: Ստոկհոլմում համագումարի լենինյան բոլշևիկյան փոքրամասնությունը պայքարում եր ոպորտունիստական մեծամասնության դեմ,— պայքարում եյին յերկու հոսանք: Այս պատճառով ընկ. Կրուպսկայայի անալոգիան թույլ եր տալիս ամբողջ կուսակցությունից ընտրված XIV համագումարի ճնշող մեծամասնությունը դիտել իբրև ոպորտունիստական, Լենինի կուսակցության մեջ տեսնել յերկու հոսանքի առկայություն:

3. Գյուղացիության դերը հեղափոխության մեջ բոլշևիկների, մենշևիկների և Տրոցկու (Ս. Գ.) գնահատությամբ:

4. Մենշևիկներն ու բոլշևիկները պրոլետարիատի հեգեմոնիայի մասին հեղափոխության մեջ:

5. Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան և ժամանակավոր հեղափոխական կառավարությունը:

6. Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության վերաճումը սոցիալիստականի և Պարվուս—Տրոցկու պերմանենտ հեղափոխության թեորիան:

7. 1905—1907 թ.թ. հեղափոխության միջազգային նշանակությունն անցյալում և ներկայում:

II. Տակտիկական տարաձայնությունները 1905—1907 թ. թ. հեղափոխության ժամանակաշրջանում

1. Զեմստվային կամպանիան և «Իսկրայի» պլանը:

2. Ընդհանուր գործադուլը, զինված ապստամբությունը և խորհուրդները բոլշևիկների, մենշևիկների և Տրոցկու գնահատությամբ:

3. Բոլշևիկների և մենշևիկների վերաբերմունքը դեպի Պետական դուման:

III. Կուսակցության ագրարային ծրագիրը.

1. Ագրարային հարցն իբրև դեմոկրատական հեղափոխության կենտրոնական հարց:

2. Հողի կոնֆիսկացիայի լոզունգը բոլշևիկների III համագումարի և մենշևիկների Ժնևի I կոնֆերենցիայի դրումով:

3. Ծրագրային տարաձայնություններն ագրարային հարցի վերաբերյալ Միացուցիչ համագումարում:

IV. Ներկուսակցական դրությունը.

1. Կուսակցական կազմակերպության վերակառուցումը կիսալեգալ գործունեության պայմաններում:

2. Մենշևիկների հետ միանալու փորձը. այդ միացման պատճառները և հանրագումարները:

3. Բոլշևիզմի պայքարը յերկու ֆրոնտի վրա՝ ընդդեմ օպորտունիզմի և նրա վերաբերմամբ յեղած հաշտվողականության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պլանի I հատվածի վերաբերյալ

ՀԻՄՆԱԿԱՆ

1) История ВКП(б), под ред. **Ем. Ярославского,** т. II, гл. IV, §§ в, г, д, ж, з, и, к, л, стр. 170—183. 192—207 Гл. V, §§ г. д. ж, з стр. 227—237. 241—248. Гл. VI, §§ в, г, стр. 258—267, 274—278. (*Նախքան գրքի մշակմանն անցնելը անհրաժեշտ է կարդալ «Большевик» ամսագրում եղած այդ գրքի ընդարձակ քննադատականը: Այս քննադատականը լույս կտեսնի նաև «Լենինյան ուղի» ամսագրի մոտակա* № 3—4-*ում. Ս. Գ.*):

2) **Ленин**—Две тактики пролетариата в демократической революции, гл. I, II, III, VI, XII (2-е и 3-е изд., т. VIII, стр. 35—48, 55—66, 90—97, 1-е изд., т. VI, *նույն գլուխները:* (*Կա նաև հայերեն. տես վեցհատորյակի* II *հատորը*):

3) **Леини**—Доклад об отношении к буржуазным партиям (на Лондонском съезде. 2-е и 3-е изд., т. XI, стр. 245—258, 1-е изд., т. VIII.

() *Ուսումնա-օժանդակ նյութի* № № 2, 3:

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ՄԱՔՍԻՄՈՒՄ).

1) История ВКП(б), т. II, гл. IV, § с. гл. V, §§ б, в, гл. VI, §§ **б** и **д.**

2) **Ленин**—Мелкобуржуазный и пролетарский социализм 2-е и 3-е изд., т. VIII, 1-е изд., т, VI (*կա նաև հայերեն վեցհատորյակի* II *հատոր, էջ* 137—147):

3) **Ленин**—Две тактики—остальные главы (*տես վեցհատորյակի հիշյալ հատորը*). Резолюции III съезда партии (см. Ленин. 2-е и 3-е изд., т. VII, стр. 430—438).

4) *Ուսումնա-օժանդակ նյութի* № № 1, 4, 6:

Պլանի II հատվածի վերաբերյալ

ՀԻՄՆԱԿԱՆ

1) История ВКП(б), под ред. **Ем. Ярославского,** т. II, гл. IV, § б, стр. 157—164, гл. V, § ж, стр 237—241, гл. X, стр. 481—486, § б, стр. 506—514.

1) **Ленин**—Бойкот Булыгинской думы и восстание. 2-е и 3-е 2-е и 3-е изд., т. IX, стр 39—50.

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ՄԱՔՍԻՄՈՒՄ)

1) **Ленин**—Бойкот Булыгинской думы и восстание. 2-е и 3-е изд., т. VIII, I-е изд., т. VI, (*տես վեցհատորյակի հիշյալ հատորում*);

2) История ВКП(б), т. II, гл. XI, § д,—Был ли большевистский бойкот 1-й думы ошибкой»?

3) *Ուսումնա-օժանդակ նյութի* № № 7, 8:

Պլանի III հատվածի վերաբերյալ

ՀԻՄՆԱԿԱՆ

1) История ВКП(б), т. II, гл. VIII, § д, стр. 351—378.

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ՄԱՔՍԻՄՈՒՄ).

1) **Ленин**—Аграрная программа соц.-дем. в первой русской революции 1905—1907 г г., гл. I, §§. 1, 2, 4, 5, 6. гл. II, §§ 1, 2. 6. гл. III, §§ 1, 5, 7 и гл. IV, §§ 1—5 Заключение (*տես վեցհատորյակի հիշյալ հատորը. հայերեն կա նաև առանձին գրքույկով հրատարակված*):

2) *Ուսումնա-օժանդակ նյութի* № 5:

3) *Այս պլանում զետեղված «Բոլշևիզմի ագրարային ծրագրի զարգացումը» դասախոսությունը:*

Պլանի IV հատվածի վերաբերյալ

ՀԻՄՆԱԿԱՆ

1) История ВКП(б), т. II. гл. IX, § в, стр. 434—436, 438—442, гл. X, § г. (конец), стр. 528—533. § д (конец), стр. 555—559. гл. XI. § а, стр. 570—586.. § з, стр. 682—694.

2) **Ленин**—Доклад об объединительном съезде, гл. VIII. Итоги. 2-е и 3-е изд., т. IX. стр. 221—226

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ՄԱՔՍԻՄՈՒՄ)

1) История ВКП(б), т. II, гл. XI, § д, стр. 647—658.

2) **Ленин**—О реорганизации партии, 2-е и 3-е изд., т VIII

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ.

Պլանի I հատվածի վերաբերյալ—Հեղափոխության բնույթը և շարժիչ ուժերը.

Այս հատվածը հիմնականն է թեմայում: Ամենից առաջ հարկավոր է պարզ պատկերացում կազմել այն մասին, թե ի՛նչ բան է բուրժուական կամ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն ընդհանրապես և ի՛նչ է ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության յուրատեսակությունը:

Հանձնարարված նյութի մշակման հետևանքով պետք է պարզորոշ պատկերացում կազմել՝.

1) Արևմուտքի բուրժուական հեղափոխությունների էության և այդ հեղափոխություններում բուրժուազիայի դերի մասին. 2) բուրժուա-դեմոկրատական, գյուղացիական հեղափոխության մասին, որի նմուշը հանդիսանում է 1905—1907 թ. թ. ռուսական հեղափոխությունը. 3) ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության բովանդակության և խնդիրների հասկացողության տարբերության մասին բոլշևիկների, մենշևիկների և Տրոցկու կողմից:

Հատվածի մշակումն սկսեք Յարոսլավսկու խմբ. լույս տեսած դասագրքի IV գլխի §§ «в» և «г» ընթերցումից, որի հիման վրա պետք է պարզորոշ գաղափար կազմեք, ընդհանրապես բուրժուական հեղափոխության և Ռուսաստանի բուրժուական, գյուղացիական հեղափոխության բնույթի մասին: Նույնը կտա ձեզ նաև Լենինի «դեպի բուրժուական կուսակցությունների ունենալիք վերաբերմունքի մասին» զեկուցումը (տես առաջին յերեք եջը):

Հեղափոխության բնույթի հարցը մշակելուց հետո, անհրաժեշտ է հասկանալ հեղափոխության մեջ՝ 1) բուրժուազիայի, 2) պրոլետարիատի, 3) գյուղացիության և նրանց փոխհարաբերությունների դերի գնահատությունը, զուգահեռական անցկացնելով այդ դասակարգերի գնահատության միջև բոլշևիկների, մենշևիկների և Տրոցկու կողմից:

Գրականությունը պետք է կարդալ հետևյալ կարգով.—Յարոսլավսկուց՝ IV գլ. § «б», V գլ. §§ «г» և «д», և ուսումնա-օժանդակ նյութի №№ 1, 2, 4, 6, վորոնք պարզ գաղափար են տալիս ռուսական հեղափոխության շարժիչ ուժերի մասին և դրանց գնահատության մասին՝ բոլշևիկների և մենշևիկների կողմից: Տրոցկու կողմից հեղափոխության շարժիչ ուժերին տված գնահատության հետ կծանոթանանք մի քիչ ավելի ուշ, յերբ քննության կառնենք նրա պերմանենտ հեղափոխության թեորիան:

Սրանից հետո կարդացեք Յարոսլավսկու գրքի IV, V և VI գլուխների մնացած §§, Լենինի «Յերկու տակտիկան» և ուսումնա-օժանդակ նյութի № 3, վորից անհրաժեշտ հետևություններ արեք հետևյալ հարցերի վերաբերյալ. 1) պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի էության մասին. 2) ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին և 3) բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստականի վերածելու մասին:

Հեռակայողների ուշադրությունը հրավիրում ենք «Յերկու տակտիկայի» § 6 այնպիսի կտորների վրա, ինչպես «ռեակցիոն միտք է բանվոր դասակարգի փրկությունը վորոնել վորևէ այլ բանում, բացի կապիտալիզմի հետագա զարգացումից: Այնպիսի յերկրում, ինչպիսին Ռուսաստանն է, բանվոր դասակարգը տուժում է վոչ այնքան կապիտալիզմից, ինչքան կապիտալիզմի զարգացման պակասից: Այս պատճառով բանվոր դասակարգն անպայման շահագրգռված է կապիտալիզմի ամենալայն, ամենաազատ, ամենաարագ զարգացմամբ»: Ապա—«մենք չենք կարող դուրս թռչել ռուսական հեղափոխության բուրժուա-դեմոկրատական շրջանակներից, բայց կարող ենք հսկայական չափերով լայնացնել այդ շրջանակները» և այլն (մինչև Փրագի վերջը):

Այս կտորները պետք է սերտորեն կապակցվեն Լենինի մի շարք սկզբունքների հետ, թե հաղթանակած դեմոկրատական հեղափոխությունից, պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայից մենք հենց միանգամից, մեր ուժերի ներածի չափ, *կանցնենք սոցիալիստական հեղափոխության (տես «Յերկու տակտիկայի» XII և այլ գլ.): Սրանից յերևում է, վոր Լենինն ամենևին դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո նկատի չուներ կապիտալիստական բուրժուազիայի տնտեսական տիրապետման սեկան ժամանակաշրջան (ինչպես այդ անում եյին մենշևիկները), այլ միայն* թույլատրում եր *այդպիսի* հնարավորություն: *Իսկ պրոլետարիատի համար ամենից ավելի հավանական և ամենից ավելի ոգտակար համարում եր մյուս հնարավորությունը—պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի* վերաճումը պրոլետարիատի *սոցիալիստական դիկտատուրայի*[1]):

Ուշադրությամբ կարդալով այն կտորները, վորոնցում Լենինը խոսում է վերաճման մասին, խորամուխ յեղեք հետևյալ հարցերում.

---

1) Այս հարցի քննության մեջ հատուկ պարզություն են մտցնում Լենինի հոդվածների յերկու ուրվագիծը՝ 1) «Հեղափոխության ետապները, ուղղությունը, հեռանկարները»: 2) «Ժամանակավոր կառավարության պատկերը», վորոնցում Լենինը տալիս է հեղափոխության ամբողջ պրոցեսի հնարավոր և հավանական սխեման: Հարկավոր է ուշադրությամբ կարդալ այդ հոդվածները և հակադրել Տրոցկու պերմանենտ հեղափոխության սխեմային: Առաջին նյութը բերված է Յարոսլավսկու գրքում, եջ 202 (տես նույնպես Լենինի 2 րդ հրատ. հ. 8 եջ 424), իսկ յերկրորդը՝ Լենինի ալեկ. ժող. 8-րդ հատորում եջ 330:

1) Ի՞նչ խառնաշփոթություն կա Մարտինովի մոտ ռուսական հեղափոխության բնույթի հարցում:

2) Ինչո՞ւ ժամանակավոր կառավարությանը մասնակցելու վրա, ինչպես այդ հասկանում էին բոլշևիկները, չի տարածվում II Ինտերնացիոնալի Ամստերդամի կոնգրեսի վորոշումը, վորն արգելում էր սոցիալիստներին մասնակցել բուրժուական կառավարություններին.

3) Ինչո՞վ է տարբերվում պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան պրոլետարիատի դիկտատուրայից և ի՞նչ կապ կա դրանց միջև.

4) Ինչո՞վ է տարբերվում պերմանենտ հեղափոխությունը Լենինի հասկացողությամբ, պերմանենտ հեղափոխությունից Պարվուս-Տրոցկու հասկացողությամբ, կիրառելով այդ 1905—1907 թ. թ. Ռուսաստանի վերաբերմամբ:

Այն հետևությունները, վորոնց հանգելու յենք այս հատվածի մշակման հետևանքով, հետևյալն են.

Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն ամենից առաջ գյուղացիական հեղափոխություն է, վոր կատարվում է պրոլետարիատի հեգեմոնիայով, լիբերալ բուրժուազիայի չեզոքացման պայմանում (ընդգծումը մերն է Ս. Գ.): Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական բլոկը շահագրգռված է հեղափոխությունը լիակատար հաղթանակի հասցնելով, վոր նշանակում է ինքնակալության տապալում, կալվածատիրական հողատիրության վոչնչացում, հանրապետության հայտարարում, վոր հենվում է զինված ժողովրդի վրա, վորի մեջ չինովնիկների ընտրականություն կա, վերացված է մշտական բանակը, անսահմանափակ է քաղաքական ազատությունը, հողն անցած է հեղափոխական գյուղացիության ձեռքը և հաստատված է 8-ժամյա բանվորական օր:

Հեղափոխության այսպիսի հաղթանակը պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան է: Պրոլետարիատի և գյուղացիության այդ հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի պետական ձևը, նրա հեղափոխական կառավարությունը խորհուրդներն են: Բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը շահագրգռված են այն բանով, վոր այդպիսի հեղափոխական կառավարության ներսում ղեկավար դեր գրավեն և այդ մասնակցությունն օգտագործեն հեղափոխական ամրացման և լայնացման համար: Հեղափոխության հաղթանակից հետո դասակարգային պայքարի սրումը պրոլետարիատին և գյուղական չքավորներին հրում է հեղափոխությունը վերածել սոցիալիստականի...:

Այս է հեղափոխության բոլշևիկյան պրոլետարական-հեղափոխական հասկացողությունը: Մենշևիկները բոլոր հարցերում բռնում էյին պասիվ, վոչ-հեղափոխական դիրք, կողմնորոշվելով բուրժուազիայի և նրա կուսակցության—կադետների հետ համաձայնություն կնքելու ուղղությամբ:

ՊԼԱՆԻ II ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ—ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Տակտիկայի, այսինքն՝ պրոլետարիատի խնդիրները հեղափոխության մեջ իրականացնելու հետամուտ կոնկրետ գործողությունների հարցերը տվյալ առաջադրության մեջ սպառվում են այս հարցերով՝ 1) «Իսկրայի» զեմստվոյի կամպանիայի պլանը 2) զինված ապստամբությունը, 3) վերաբերմունքը դեպի Պետական դուման և 4) խորհուրդները:

Առաջին հարցը միքիչ դուրս է գալիս այս թեմայի սահմաններից, վորովհետև վերաբերվում է 1904 թ. աշնան անցքերին, բայց ամենասերտ կերպով կապված է մենշևիկների տակտիկայի հետ 1905—1907 թ.թ. հեղափոխության մեջ և, այսպես ասած, նախանշում է (предвосхищает) այդ տակտիկան: Այս հարցի հետ ծանոթանալու համար կարդացեք Յարոսլավսկու դասագրքի IV գլխի § 5 և մենշևիկյան «պլանը» կապակցեցեք ինչպես Պոտրեսովի II համագումարում լիբերալների մասին առաջարկած բանաձևի հետ, այնպես էլ մենշևիկների դիրքերի հետ Պետական դումայի վերաբերմամբ:

Զինված ապստամբության մասին կարդացեք Յարոսլավսկու դասագրքի IV գլխի § ж, V գլխի § ж, IX գլխի § в, և Լենինի Ստոկհոլմի համագումարի համար զինված ապստամբության մասին կազմած բանաձևի նախագիծը (հ. IX, եջ 41) և ուսումնա-օժանդակ նյութի № 4 (Ժընևի կոնֆերենցիայի բանաձևը զինված ապստամբության մասին): Ապստամբության հարցի կապակցությամբ անհրաժեշտ է քննության առնել նաև ընդհանուր գործադուլների հարցը և դրանց գնահատության տարբերությունները բոլշևիկների, մենշևիկների և Տրոցկու կողմից, նկատի ունենալով վերջիններիս կողմից գործադուլն ապստամբության հակադրելը և առաջինը խաբեյությամբ յերկրորդի տեղը դնելը:

Զինված ապստամբության հաղթանակի անհրաժեշտության և հնարավորության տեսանկյունով բոլշևիկները լուծում էին նաև տակտիկական հարցերը, այդ թվում նաև Պետական դումայի հարցը: Հաստատելով զինված ապստամբության հարցի հասկացողությունը, անցնենք Պետական դումայի հարցին: Նյութը լուսաբանում է յերեք մոմենտ.

1) Դեպի Բուլիգինյան դուման ունենալիք վերաբերմունքի հարցը (Յարոսլավսկի, գլ. X եջ 481—486).

2) Դեպի Առաջին դուման (Վիտտեյի դուման) ունենալիք վերաբերմունքի հարցը Միացուցիչ համագումարի դրումով (տես բանաձևի նախագիծը, Լենին, հ. IX, եջ 48 և ուսումնա-օժանդակ նյութի № 7):

3) Խորհուրդների հարցը (տես Յարոսլավսկու գիրքը, գլ. X, § 6, եջ 506—514 և Ստոկհոլմի համագումարի առթիվ յեղած բանաձևերի նախագծերը, եջ 44—45):

Այս նյութի մշակման հետևանքով անհրաժեշտ է պարզել բոլշևիկյան տակտիկայի նպատակահարմարությունը հեղափոխական շարժման բարձրագույն ձևերի (ապստամբության) համար մղվող պայքա-

րի տեսանկյունով և այդ բոյկոտի աննպատակահարմարության այնպիսի մոմենտում, յերբ բանվոր դասակարգը և ժողովրդական մասսաներն ի վիճակի չեն ակտիվ հեղափոխական յելույթով խափանել լիբերալների աջակցությամբ ինքնակալության դումա հրավիրելու փորձը: Հենց այսպիսի հասկացողություն սկսեց ձևավորվել 1906 թ. աշնան դեմ, որի կապակցությամբ Լենինը դրեց բոյկոտի տակտիկայի վերաքննության հարցը:

ՊԼԱՆԻ III ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ—ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Կարդալով նյութն այն կարգով, ինչպես ցույց է տրված առաջադրության պլանի գրականության ցուցակում, անհրաժեշտ է քննել բոլշևիզմի ագրարային ծրագրի զարգացումը կտրոններից (отрезки) մինչև հողի կոնֆիսկացիան ու գյուղացիական հեղափոխական կոմիտեները, մինչև հողի ազգայնացումը:

Ուշադրություն դարձրեք այն փաստերի վրա, որ III համագումարի շրջանում Լենինը դեռ չի արտահայտվում ազգայնացման օգտին (ու նույնիսկ նախազգուշացնում է դրանից), շեշտը դնելով այն քաղաքական հեղափոխական վերակազմությունների վրա, որոնց առկայության ժամանակ ել միայն հնարավոր և նպատակահարմար է ազգայնացումը: Միայն այն բանից հետո, յերբ 1905 թ. աշնանը և 1906 թ. գարնանը գյուղացիական հեղափոխությունը փաստ դարձավ, այն բանից հետո, յերբ հեղափոխությունը հասավ ապստամբության փուլին (դեկտեմբերյան ապստամբությունը), Լենինը նպատակահարմար է համարում նոր քայլ անել— սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի մեջ մտցնել հողի ազգայնացման պահանջը:

Պլանի այս մասին մշակումը կօգնի ե՛լ ավելի լավ պարզել հեղափոխության բնույթի և նրա շարժիչ ուժերի հարցը, ամրացնելով հատվածի հետևությունների յուրացումը:

Պլանի IV հատվածի վերաբերյալ—ներկուսակցական դրությունը

Հեռակայողի ուշադրությունը պետք է հատկապես կենտրոնանա 1) այն մոտիվների պարզաբանման վրա, որոնցով ղեկավարվում եյին բոլշևիկները մենշևիկների հետ մեկ կուսակցության շրջանակներում միանալով. այդ միացման պայմանների վրա և, վերջիվերջո, այն դրական դերի վրա, որ միացումը խաղաց բոլշևիզմի զարգացման մեջ ֆրակցիայից դեպի կուսակցություն, որը ղեկավարում է բանվոր դասակարգին. 2) կազմակերպչական ձևերի այն ճկունության վրա, որ կարողանում եր յերևան բերել բոլշևիզմն ամեն մի տվյալ պատմական պարագայի պայմաններում. 3) բոլշևիկների պայքարի վրա յերկու ֆրոնտում և հաշտվողականության դեմ, պայքար, որն արդեն 1905—1907 թ.թ. հեղափոխության մեջ լայն չափով կիրառվեց:

Տվյալ հատվածի գրականությունը պետք է կարդալ այն կարգով, ինչպես ցույց է տրված վերևը, առաջադրության պլանից հետո:

Դ. ՌՈԶԱՆՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱ-ՈԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ

ՊԼԱՆԻ I ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մենշևիկները իբրև հեղափոխական ոպոզիցիայի կուսակցություն

(Ա. Մարտինովի «Две диктатуры» գրքույկից, 2-րդ հրատ. 1918 թ., եջ 74—80 և 88):

— Որպեսզի որոշենք, թե ինչ է մեր կուսակցության իբրև ծայրահեղ ոպոզիցիայի կուսակցության խնդիրը բուրժուական հասարակության քաղաքական ազատագրման մոմենտում, անհրաժեշտ է, որ դարձյալ լինենք պրոլետարիատի ապագա հեղափոխական դիկտատուրայի իրականացման պայմանների պարզ պատկերացումից...

... Ակնհայտ է, որ բուրժուական հեղափոխության նախօրյակին պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարը պետք է որոշ տեսակետներով տարբերվի այդ նույն պայքարից իր յեզրափակիչ ստադիայում —սոցիալիստական հեղափոխության նախօրյակին: Բուրժուական հեղափոխության ընթացքի և յելքի վրա ազդեցություն ունենալու համար մղվող պայքարը կարող է միայն արտահայտվել այն բանով, որ պրոլետարիատը հեղափոխական ճնշում կգործադրի լիբերալ և արմատական բուրժուազիայի կամքի վրա, որ կամ. ավելի ճիշտ. «ստորին խավերը» կստիպեն նրա «վերնախավերին» համաձայնվել բուրժուական հեղափոխությունը մինչև իր տրամաբանական վախճանին հասցնել: Այդ պայքարը կարտահայտվի այն բանով, որ պրոլետարիատն ամեն մի դեպքում բուրժուազիայի առաջ կդնի այս դիլեմման՝ կամ յետ դեպի աբսոլյուտիզմի ճահիճը, որի տակ նա շնչահատ կլինի, կամ առա՛ջ ժողովրդի հետ: Պրոլետարիատը բուրժուազիայի սառը քաղաքական հաշվի կշռի վրա կդնի ոչ միայն ազատության գործի համար իր անշահախնդրությամբ զոհաբերվելու պատրաստակամությունը, այլև դրա հետ միասին իր զոհաբերությունների պտուղներն օգտագործելու հմտությունը, իր գիտակցականությունը, իր համախմբվածությունը, իր ազդեցությունը ժողովրդի վրա: Պրոլետարիատն իր բարոյական պաշտպանությունը ցույց կտա թեկուզ ամենաչափավոր լիբերալներին, քանի դեռ և ինչքան որ նրանք ոպոզիցիայում են գտնվում, նա կպաշտպանի և կպատամբեցնի նրանց դեմ բուրժուական հասարակության ավելի արմատական տարրերին, հենց որ նրանք հաշտվողական միտումներ յերևան կբերեն:

Այսպիսով նա վերջիվերջո իր հետևողական տակտիկայով իր հերթական քաղաքական լոզունգների շուրջը կհամախմբի և՛ հեղափոխականորեն տրամադրված ժողովրդական մասսաներին, և՛ գիտակից բուրժուազիայի ծայրահեղ տարրերին: Միայն այսպիսով պրոլետարիատի ծայրահեղ ոպոզիցիոն տակտիկան հեղափոխությունը հաջորդաբար ա-

ռաշ կշարժի և վոչ մի պայմանում ձեռնտու չի դառնա ռեակցիայի համար, ինչպես այս հաճախ պատահում է բունտարական անարխիստական տակտիկայի հետ...

...Մեր օպոզիցիոն և հեղափոխական բուրժուազիայի առանց բացառության բոլոր շերտերը կջանան և արդեն ջանում են օգտագործել պրոլետարիատին իբրև գործիք իրենց քաղաքական ազատագրության համար, ինչպես այս ջանացել է արևմտա-յեվրոպական բուրժուազիան իր բուրժուական հեղափոխությունների ժամանակ: Այս բանի համար գիտակցաբար ջանում են չափավոր լիբերալները, վորոնք կառավարությանը վախեցնում են գյուղացիական անարխիայով, բանվորական անկարգություններով, Բալմաշովների և Սազոնովների արձակումով և այլն, օգտվելով հենց այդ «անկարգություններից» իրենց համար համեստ քաղաքական զիջումներ ձեռք բերելու համար, այդպիսով պրոլետարիատի և մյուս հեղափոխական դեմոկրատիայի ուժերից օգուտ քաղելով իր նեղ խմբակային շահերի համար:

Անգիտակցաբար այս ջանում է անել նույնիսկ այն հեղափոխական, բայց վոչ սոցիալ-դեմոկրատական յերիտասարդությունը, վորն այժմ կամ շուտով պատրաստ կլինի մեռնել մեկ բարրիկադի վրա բանվորների հետ, բայց վորի մեծամասնությունը հեղափոխությունից հետո բանվորների հետ վոչ մի գործ ունենալ չի ուզենա, ինչպես վոր նա բանվորների հետ գործ ունենալ չեր ուզում դեռ բոլորովին վերջերս, յերբ պայքարում եր իր «ակադեմիական» շահերի համար:

Այս պատճառով պրոլետարիատն իր հերթին պետք է ջանա օգտագործել բուրժուական հասարակության ինքնազատագրումն իր շահերի և ամբողջ դեմոկրատիայի շահերի համար, այսպիսով՝ համազգային ազատագրական պայքարի ավանգարդը — համաժողովրդական գործի պաշտպանը դառնալով:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Մարտինովի «Յերկու դիկտատուրա» գրքույկից)

...Ինչո՞վ կարող է արտահայտվել պրոլետարիատի և բուրժուազիայի այս պայքարը հեղափոխության մեջ հեգեմոնիա ունենալու համար: Մենք մեզ չպետք է խաբենք: Առաջիկա ռուսական հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն կլինի, իսկ այս նշանակում է, վոր, ինչպես էլ կուզե լինեն այդ հեղափոխության պերիպետիաները, թեկուզ և նույնիսկ այդ պերիպետիաներում պրոլետարիատը մի մոմենտում իշխանության գլուխ կանգնի, հեղափոխությունը վերջին հաշվով միայն կապահովի ավելի կամ պակաս չափով բոլոր կամ վորոշ բուրժուական դասակարգերի տիրապետությունը, յեթե այդ հեղափոխությունն ամենից ավելի հաջող լիներ, յեթե նա ցարական ինքնակալությունը փոխարիներ դեմոկրատական հանրապետությամբ, ապա այդ դեպքում էլ նա անբաժան քաղաքական տիրապետությունը բուրժուազիային կտար:

Պրոլետարիատը չի կարող պետության մեջ վոչ ամբողջ քաղաքական իշխանությունը և վոչ էլ դրա մի մասն առնել, մինչև վոր սոցիալիստական հեղափոխություն չանի: Այս այն անվիճելի սկզբունքն է, վորը մեզ բաժանում է օպորտունիստական ժորեսիզմից: Բայց յեթե այս այսպես է, ապա ակնհայտ է, վոր առաջիկա հեղափոխությունը չի կարող վոչ մի քաղաքական ձև իրացնել ամբողջ բուրժուազիայի կամքի հակառակ, վորովհետև նա վաղվա օրվա տերը կլինի:

Յեթե այսպես է, ապա բուրժուական տարրերի մեծամասնությանը սոսկ սարսափեցնելու միջոցով պրոլետարիատի հեղափոխական պայքարը կարող է տանել դեպի մի բան—դեպի ինքնակալության վերականգնումն իր սկզբնական ձևով, և, իհարկե, պրոլետարիատը այդ հնարավոր հետևանքի առաջ կանգ չի առնի, նա չի հրաժարվի վատ վախճանի համար բուրժուազիային սարսափեցնելուց, յեթե գործը վճռականորեն կթեքվի դեպի այն, վոր կեղծ սահմանադրական զիջումով աշխուժացվի և ամրացվի քայքայվող ինքնակալական իշխանությունը: Բայց պայքարի դուրս գալով, ինքնին հասկանալի յե, պրոլետարիատը նկատի չունի այդ վատ վախճանը:

Մատնանշված տաքտիկան սոցիալ-դեմոկրատական, այլ վոչ բուրժուա-դեմոկրատական արժեք ունի միայն այնքան, ինչքան ինքնուրույն, այսինքն գիտակցաբար են կիրառում այն պրոլետարիատի ավելի կամ պակաս լայն շերտերը, վորոնք իրենց հերթին կապեր և ազդեցություն ունեն ժողովրդական մասսաների վրա, վորոնք մասսայական հեղափոխական ակտերով ամրացնում են իրենց փաստարկումների ուժը: Միայն բանվորների շարունակ ավելի և ավելի մեծ շրջաններ ներգրավելով բուրժուական հասարակության քաղաքական ինքնազատագրման պրոցեսին այդպիսի գիտակցական մասնակցություն ունենալու գործի մեջ՝ մեր սոցիալ-դեմոկրատիան կարող է արդեն այժմ ինքնուրույն բանվորական կուսակցություն կազմել, վորն ապագայում կհաղթի այդ հասարակությունը: Միայն այսպիսի ճանապարհով սոցիալ-դեմոկրատիան կարող է առաջ շարժել բուրժուական հեղափոխությունը և ապագա սոցիալիստական հեղափոխության նախերգանքը դարձնել այն...

3. Պերմանենտ հեղափոխության հարցի առթիվ Կ. Մարքսը պերմանենտ հեղափոխության մասին (К. Маркс и Ф. Енгельс. т. III. Гиз. 1921 г. стр. 501).

«...Մինչդեռ դեմոկրատական մանր բուրժուաները վերևը մատնանշված պահանջների բատ հնարավորին ավելի մեծ մասի իրագործումով ուզում են ամենից ավելի արագ կերպով վերջացնել հեղափոխությունը, մեր շահերը և մեր խնդիրն այն են, վոր հեղափոխությունն անընդհատ դարձնենք մինչև այն ժամանակ, քանի դեռ բոլոր ավելի կամ պակաս ունևոր դասակարգերը չեն հեռացվել իշխանությունից, քանի դեռ պրոլետարիատը պետական իշխանությունը չի գրավել...»:

Տրոցկին պերմանենտ հեղափոխության մասին. (Л. Троцкий—«1905», стр. 3—5).

«...1905 թ. մեր մեծ առավելությունն այն եր, վոր արդեն հեղափոխական նախերգանքի ելքում մենք, մարքսիստներս, զինված եյինք պատմական պրոցեսի իմացության գիտական մեթոդով: Այս

թույլ էր տալիս թեորիապես խորամուխ լինել այն հարաբերությունների մեջ, վորոնք պատմության նյութական պրոցեսով տրվում էին միայն ակնարկների ձևով: Արդեն 1903 թ. քառսական հուլիսյան գործադուլը Ռուսաստանի հարավում նյութ տվեց հետևություններ անել այն մասին, վոր ռուսական հեղափոխության հիմնական մեթոդը կհանդիսանա պրոլետարիատի ընդհանուր գործադուլը, վորը հետագայում կփոխվի զինված ապստամբության: Հունվարի 9-ի անցքերը, վոր այս պրոգնոզի վառ հաստատումն են, պահանջեցին հեղափոխական իշխանության հարցի կոնկրետ դրումը: Այդ մոմենտից այն ժամանակվա ռուսական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում սուր կերպով դրվում է ռուսական հեղափոխության բնույթի և ներքին դասակարգային դինամիկայի հարցը: Հենց հունվարի 9-ի և 1905 թ. հոկտեմբերյան գործադուլի արանքում ձևավորվեցին հեղինակի այն հայացքները Ռուսաստանի հեղափոխական զարգացման բնույթի մասին, վորոնք «պերմանենտ հեղափոխություն» անունն ստացան: Այս տարօրինակ անունն այն միտքն էր արտահայտում, վոր ռուսական հեղափոխությունը, վորի առաջ անմիջականորեն դրված են բուրժուական նպատակներ, չի կարողանա, սակայն, դրանց վրա կանգ առնել: Հեղափոխությունը չի կարողանա լուծել իր մոտակա բուրժուական խնդիրներն այլ ձևով, քան իշխանության գլուխ կանգնեցնելով պրոլետարիատին: Իսկ վերջինս, իշխանությունն իր ձեռքն առնելով, չի կարողանա իրեն սահմանափակել հեղափոխության բուրժուական շրջանակներով: Ընդհակառակը, հենց իր հաղթանակն ապահովելու համար պրոլետարական ավանգարդն ստիպված կլինի իր իշխանության առաջին իսկ շրջանում ամենախոր ներխուժումներ կատարել վոչ միայն փեոդալական, այլև բուրժուական սեփականության մեջ: Ընդ վորում նա թշնամական ընդհարումների մեջ կմտնի վոչ միայն բուրժուազիայի բոլոր խմբավորումների հետ, վորոնք նրան պաշտպանում էին նրա հեղափոխական պայքարի առաջին շրջանում, այլև գյուղացիության լայն մասսաների հետ, վորոնց աջակցությամբ նա իշխանության հասավ (ընդգծումները մերն են. Ս. Գ.): Բանվորական կառավարության դրության հակասությունները հետամնաց յերկրում, վորտեղ գյուղացիական բնակչությունը ճնշող մեծամասնություն է, կարող կլինեն իրենց լուծումը ստանալ միայն միջազգային մասշտաբով, պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ասպարիզում: Պատմական անհրաժեշտության շնորհիվ պայթեցնելով ռուսական հեղափոխության սահմանափակ բուրժուա-դեմոկրատական շրջանակները, հաղթական պրոլետարիատը հարկադրված կլինի պայթեցնել նաև ազգային-պետական շրջանակները, այսինքն՝ ստիպված կլինի գիտակցաբար ձգտել այն բանին, վոր ռուսական հեղափոխությունը համաշխարհային հեղափոխության նախերգանքը դառնա...»:

Տրոցկին պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի մասին

(«Пролетариат у власти и крестьянство» հոդվածից, վոր զետեղված է «Наша революция» գրքում: 1905 թ.):

Հեղափոխության վճռական հաղթանակի դեպքում իշխանությունն անցնում է պրոլետարիատի ձեռքը, այն դասակարգի ձեռքը, վորը պայքարում ղեկավար դեր է խաղացել, ուրիշ խոսքով՝ աշխատավորների ձեռքը: Հասկանալի յե, ասենք հենց այստեղ, վոր այս ամենևին չի բացառում այն, վոր կառավարության մեջ մտնեն վոչ պրոլետարական հասարակական խմբերի հեղափոխական ներկայացուցիչները:

Նրանք կարող են լինել և պետք է լինեն,—առողջ քաղաքականությունը պրոլետարիատին կստիպե իշխանությանը մասնակից անել մեշչանության, ինտելիգենցիայի կամ գյուղացիության ազդեցիկ առաջնորդներին: Ամբողջ հարցն այն է, թե ո՞վ բովանդակություն կտա կառավարական քաղաքականությանը, ո՞վ կհամախմբի նրա մեջ միատարր մեծամասնություն:

Մի բան է, յերբ իր կազմի մեծամասնությամբ բանվորական կառավարությանը մասնակցում են ժողովրդի դեմոկրատական շերտերի ներկայացուցիչները, մի այլ բան, յերբ վորոշյալ բուրժուա-դեմոկրատական կառավարությանը մասնակցում են, իբրև ավելի կամ պակաս պատվավոր պատանդներ, պրոլետարիատի ներկայացուցիչները:

Լիբերալ կապիտալիստական բուրժուազիայի քաղաքականությունն իր բոլոր տատանումների, նահանջների և դավաճանությունների մեջ շատ վորոշ է: Պրոլետարիատի քաղաքականությունը դրանից ե՛լ ավելի վորոշ և կատարյալ է: Բայց ինտելիգենցիայի քաղաքականությունը նրա սոցիալ-միջնական (промежуточный) և քաղաքական ճկունության շնորհիվ, գյուղացիության քաղաքականությունը նրա սոցիալական բազմազանության միջնականության, պրիմիտիվության շնորհիվ, մեշչանականության քաղաքականությունը դարձյալ նրա անդիմության միջնականության և քաղաքական տրադիցիաների լիակատար բացակայության շնորհիվ,—այս յերեք հասարակական խմբի քաղաքականությունը բոլորովին անորոշ, չձևակերպված է, լի յե հնարավորություններով, նշանակում է նաև անսպասելիություններով: Բավական է փորձենք պատկերացնել հեղափոխական դեմոկրատական կառավարությունն առանց պրոլետարիատի ներկայացուցիչների, վոր այդպիսի պատկերացման ամբողջ անհեթեթությունն աչքի զարնի: Սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական կառավարությանը մասնակցելուց հրաժարվելը կնշանակեր հենց հեղափոխական կառավարության լիակատար անհնարինություն և այդպիսով կլիներ հեղափոխական գործի դավաճանություն: Բայց պրոլետարիատի մասնակցությունը կառավարությանը և՛ օբյեկտիվորեն ամենից ավելի հավանական է, և՛ սկզբունքորեն թույլատրելի յե միայն իբրև գերիշխող, ղեկավար մասնակցություն: Իհարկե այդ կառավարությանը կարելի յե պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա, պրոլետարիատի, գյուղացիության և ինտելիգենցիայի դիկտատուրա կամ, վերջապես, բանվոր դասակարգի և մանր բուրժուազիայի կոալիցիոն կառավարություն անվանել: Բայց այնուամենայնիվ կմնա այն հարցը, թե ո՞ւմ է պատկանում հեգեմոնիան այդ կառավարության մեջ: Սրանով մենք պատասխանում ենք, վոր հեգեմոնիան կպատկանի բանվոր դասակարգին:

Կոնվենտը, իբրև յակոբինյան դիկտատուրայի որգան, ամենևին կազմված չէր մենակ յակոբինյաններից.—դեռ ավելին, յակոբինյանները կոնվենտում նույնիսկ փոքրամասնություն էին կազմում: Բայց կոնվենտի պատերից դուրս սանկյուլոտների ունեցած ազդեցությունը և յերկիրը փրկելու համար վճռական քաղաքականության անհրաժեշտությունն իշ-

խանությունը ավելի յակոբինյանների ձեռքը։ Այսպիսով, կոնվենտը, ձևականապես ազգային ներկայացուցչություն լինելով, կազմված յակոբինյաններից, ժիրոնդիստներից և հսկայական ճահճից, ըստ էության յակոբինյանների դիկտատուրան էր։

Երբ խոսում ենք բանվորական կառավարության մասին, նկատի ունենք բանվորական ներկայացուցիչների իշխող և ղեկավար դրությունը դրա մեջ։

Պրոլետարիատը չի կարողանա իր իշխանությունն ամրացնել, չլայնացնելով հեղափոխության բազան։

Աշխատավոր մասսայի շատ շերտեր, հատկապես գյուղում, առաջին անգամ հեղափոխության մեջ կքաշվեն և քաղաքական կազմակերպություն կստանան միայն այն բանից հետո, երբ հեղափոխության ավանգարդը, քաղաքի պրոլետարիատը, պետական ղեկն իր ձեռքը կառնի։ Հեղափոխական ագիտացիան և կազմակերպությունը կիրագործվեն պետական միջոցների օգնությամբ։ Վերջապես, հենց օրենսդրական իշխանությունը կդառնա ժողովրդական մասսաների հեղափոխականացման զորեղ գործիք։

Ընդ որում մեր սոցիալ-պատմական հարաբերությունների բնույթը, որ բուրժուական հեղափոխության ամբողջ ծանրությունը դնում է պրոլետարիատի ուսերին, բանվորական կառավարության համար ստեղծում է ոչ միայն ահագին դժվարություններ, այլև գոնե իր գոյության առաջին շրջանում նրան կտա նույնպես և անգնահատելի առավելություն։ Այս կանդրադառնա պրոլետարիատի և գյուղացիության հարաբերությունների վրա։

Կապիտալիզմի պատմությունը—այդ գյուղի ենթարկման պատմությունն է քաղաքին։ Եվրոպական քաղաքների ինդուստրիալ զարգացման պատմությունն իր ժամանակին անհնար դարձրեց ֆեոդալական հարաբերությունների գոյությունը հողագործական արտադրության ասպարեզում։ Բայց գյուղն ինքն առաջ չքաշեց այնպիսի դասակարգ, որը կարող լիներ լուծել ֆեոդալիզմի ոչնչացման հեղափոխական խնդիրը։ Այդ նույն քաղաքը, որը գյուղատնտեսությունը ենթարկեց կապիտալին, առաջ քաշեց հեղափոխական ուժեր, որոնք իրենց ձեռքն առան գյուղի քաղաքական հեգեմոնիան և հեղափոխությունը տարածեցին գյուղում պետական և գույքային տեսակետներով։

Հետագայում գյուղի զարգացումը վերջնականապես տնտեսական կախման (кабала) մեջ է ընկնում կապիտալից, իսկ գյուղացիությունը — քաղաքական կախման (кабала) մեջ կապիտալիստական կուսակցություններից։ Նրանք վերածնում են կապիտալիզմը (ֆեոդալիզմը) պարլամենտական քաղաքականությամբ, գյուղացիությունը դարձնելով իրենց քաղաքական դոմենը, իրենց ընտրական որսորդության վայրը։ Ժամանակակից բուրժուական պետությունը պետական դրամի (ֆիսկի) և միլիտարիզմի միջոցով գյուղացիությանը հրում է դեպի վաշխառուական կապիտալի ճիրանը, իսկ պետական տերտերների, պետական դպրոցի և կազարմային անբարոյացման միջոցով նրանց վաշխառուական քաղաքականության զոհ դարձնում։

Ռուսական բուրժուազիան պրոլետարիատին է հանձնում բոլոր հեղափոխական դիրքերը։ Նա ստիպված է հանձնել նաև հեղափոխական հեգեմոնիան գյուղացիության վերաբերմամբ։ Այն սիտուացիայի ժամանակ, որն ստեղծվում է իշխանությունը պրոլետարիատին անցնելով, գյուղացիությանը մնում է միայն միանալ բանվորական դեմոկրատիայի ռեժիմին (ընդգծումը մերն է։—Խմբ.)։

Թող նույնիսկ նա այս ավելի մեծ գիտակցականությամբ չանի, քան սովորաբար միանում է բուրժուական ռեժիմին։ Բայց մինչդեռ ամեն մի բուրժուական կուսակցություն, տիրելով գյուղացիության ձայները, շտապում է օգտվել իշխանությունից, խաբել նրա բոլոր սպասելիքները և խախտել իր խոստումները, իսկ հետո, իր համար վատագույն դեպքում, իր տեղը զիջել մի այլ կապիտալիստական կուսակցության,——պրոլետարիատը, հենվելով գյուղացիության վրա, բոլոր ուժերը շարժման մեջ կդնի գյուղի կուլտուրական մակարդակը բարձրացնելու և գյուղացիության քաղաքական գիտակցությունը զարգացնելու համար։

Ասածից պարզ է, թե մենք ինչպես ենք նայում պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի իդեային։ Բանի էությունն այն չէ, թե արդյոք մենք սկզբունքորեն թույլատրելի ենք համարում այն, արդյոք «ուզում ենք», թե «չենք ուզում» քաղաքական կոոպերացիայի այդպիսի ձևը։ Բայց մենք այն համարում ենք անիրագործելի գոնե ուղղակի և անմիջական իմաստով։

Իրոք, այդպիսի կոալիցիան ենթադրում է, որ կամ գոյություն ունեցող բուրժուական կուսակցություններից մեկը տիրապետում է գյուղացիությանը, կամ գյուղացիությունը ստեղծում է ինքնուրույն զորեղ կուսակցություն։ Ո՛չ մեկը, ոչ էլ մյուսը, ինչպես ջանացինք ցույց տալ, հնարավոր չէ...

Ա. Լ. ՊԱՐՎՈՒՍԻ «ԲԱՆՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ» ՈՒՂՂԱԾ ԹԵՐԹԻԿԸ. ԱՌԱՆՑ ՑԱՐԻ, ԻՍԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ

Բանվո՛ր ժողովուրդ.

Պետերբուրգի բանվորները գնացին ցարի մոտ հավատով ու հույսով, իսկ նրանց առաջից ժողովրդի սիրած մարդը, հայր Գեորգի Գապոնը խաչը ձեռքին, իբրև Քրիստոսի հավատի և սիրո խորհրդանշան։ Միտրոպոլիտն անիծեց հայր Գեորգի Գապոնին։ Անիծեց նրա համար, որ նա քարոզում էր ժողովրդի կարիքի մասին։ Ոչ թե իր, այլ քեզ համար, ամբողջ ռուս ժողովրդի համար այս պատիժը կրեց հայր Գեորգի Գապոնը։ Ոչ միայն նրան, այլ քե՛զ, բանվոր ու տառապող ռուս ժողովուրդ, քե՛զ է վերաբերում ուղղափառ եկեղեցու բարձրագույն պաշտոնյայի անեծքը։

Իսկ ցարը պատասխանեց սպանություններով։

Ցարի մոտ չպետք է արդարություն փնտրել տանտերերի դեմ, ցարի մոտ չպետք է ազատություն փնտրել—ոչ ցարի մոտ, ոչ էլ միտրոպոլիտի մոտ։ Ցարը հարուստ է ժողովրդի կարիքի շնորհիվ, ուժեղ է ժողովրդի ճնշումի շնորհիվ։ Իսկ միտրոպոլիտը և արքերեցները տնօրինում են եկեղեցական եկամուտները, տիրում են վանքական հողերը և գանձերը։ Դրանք բոլորը մեկ ընտանիք են, ժողովրդի կողոպտիչների և ճնշողների մեկ որջ։ Ժողովուրդը սխալվեց և իր սխալի համար հազարավոր զոհեր տվեց։

Այժմ ամբողջ Ռուսաստանում արյունոտ սպանդ է—ցարական կառավարությունը պատժում է ժողովրդին։

Ռուս ժողովուրդն ստիպված է թանկ վճարել ազատության համար, բայց նա կնվաճի այն: Բանվորական մասսաների հոսանքը կուղղվի ցարի դեմ: Բանվորները կտապալեն ցարին և կոչնչացնեն ցարական կառավարությունը:

***

Այժմ ցարական իշխանությունը բոլորին ճնշում է, և շատերը դիմում են բանվորին—ազատի՛ր մեզ ինքնակալության լծից:

Բանվոր ժողովուրդն ինքը պետք է ազատվի ցարական ճնշումից: Բայց ցարից ազատագրվելով, բանվոր դասակարգը դեռ միայն ազատագրվում է քաղաքական օղակից, որը խեղդում էր նրա վիզը, բայց չի ազատագրվում կապիտալիստական շղթաներից, որոնք կաշկանդում են նրա ոտները: Ինքնակալությանը վերջ տալով, բանվոր դասակարգը պետք է որ պայքար սկսի իր տնտեսական ազատագրման համար: Այս պայքարում նա մենակ է—այստեղ նա չունի ոչ բարեկամներ, ո՛չ էլ պաշտպաններ և ոչ ոքի չի կարող վստահել, բացի իր սեփական ուժից:

Այժմ շատերն են բանվորի կողմը, յերբ բանվորներն իրենց կյանքը զոհում են քաղաքական պայքարում, բայց յերբ բանվորները հաղթեն, այն ժամանակ կմոռանան նրանց և ամեն մեկը միայն իր շահերի մասին կհոգա:

Այժմ շատերն են աղաղակում՝ «Կեցցե՛ ազատությունը» և պատրաստ են ազատությունը վաճառել, հենց որ իշխանությունը նրանց տրվի:

Լիբերալ հասարակությունը չի դանդաղի միանալ ցարական կառավարությանը, յեթե վերջինս նրան գրավի դեպի իշխանություն: Այն ժամանակ կկազմվի կառավարության դաշինքը կալվածատերերի, գործարանատերերի և վաճառականների հետ այն նպատակով, որ պահվի ցարի իշխանությունը, լայնացվեն ունևոր դասակարգերի քաղաքական իրավունքները և, ըստ հնարավորին, սահմանափակվեն բանվոր դասակարգի իրավունքները:

Այն ժամանակ ժողովրդի քաղաքական ստրկությունը չի ոչնչացվի, այլ միայն կմեղմացվի: Պետական հեղաշրջումը կիսամիջոցների վրա կանգ կառնի: Ինքնակալություն չի լինի, բայց ժողովրդավարություն էլ չի լինի, այլ կլինի լիբերալիզմ, այսինքն՝ ունևոր դասակարգերի—բուրժուազիայի քաղաքական տիրապետություն:

Քիչ է ցարին տապալել, հարկավոր է ազատությունն ամրացնել: Հարկավոր է ժողովրդական հեղափոխություն: Բանվոր ժողովուրդը, ոչնչացնելով ցարական կառավարությունը, կդավաճանի իր սեփական շահերին, յեթե չհոգա այն մասին, որ ամրացնի այն, ինչ գնել է այնքան թանկ գնով—ժողովրդական իրավունքները:

* *

Բանվոր ժողովրդի խնդիրն է ոչ միայն ցարական կառավարությունը ոչնչացնել, այլև իշխանության գլուխ անցնել:

Քաղաքական իրավունքներ հարկավոր են ամբողջ ժողովրդին, իսկ այդ քաղաքական իրավունքների պահպանորդը պետք է դառնա բանվոր դասակարգը:

Հարկավոր են քաղաքական իրավունքներ և բանվորական կառավարություն: Հարկավոր է կառավարություն, նշանակված բանվորների

այն հեղափոխական բանակի կողմից, որը քաղաքական հեղաշրջումը կկատարի:

Բանվոր դասակարգի ներկայացուցիչների այս կառավարությունն իր առաջ խնդիր կդնի ամրացնել ժողովրդավարությունը—դեմոկրատիան: Նա անխնա կոչնչացնի ինքնակալության բոլոր մնացորդները և հող կպատրաստի Ռուսաստանի պարլամենտի գումարման և օրենսդրական գործունեության համար: Յեթե ցարը հեռացվի, ապա այնուամենայնիվ դեռ կմնա ցարական չինովնիկությունը, որը քաղաքական նոր կարգերի ժամանակ ամեն ջանք կթափի, որ իր իշխանության տակ պահի ժողովրդին: Ոչ մի գրավոր օրենք չի կարող ապահովել ազատությունը, քանի դեռ դատարաններում, դիվաններում, ոստիկանության մեջ բոլոր տեղերը գրաված ունեն ժողովրդի թշնամիները, և զորքը գտնվում է բանվոր ժողովրդին թշնամի դասակարգից յելած սպաների հրամանատարության տակ:

Նույնիսկ ընդհանուր, գաղտնի, ուղղակի, հավասար ընտրական իրավունքը խաբեություն է դառնում, յեթե կապիտալիստները, կալվածատերերը, չինովնիկները և ոստիկանությունը կարող են ժողովրդին ստիպել իր ձայնը տալ ոչ թե այնպես, ինչպես նա յե ցանկանում, այլ ինչպես նրանք են ուզում:

Բանվոր ժողովուրդը, նույնիսկ յերբ քաղաքական հեղաշրջում կատարի Ռուսաստանում, չպետք է զենքը վայր դնի: Նա պետք է պահապան կանգնի իր քաղաքական շահերին և դրա հետ միասին ամբողջ յերկրի քաղաքական շահերին, միշտ պատրաստ միջամտելու անցքերի ընթացքին, յերբ ժողովրդի թշնամիները կամ կեղծ բարեկամներն ուզենան յերկրի կառավարման գործի վրա իրենց արյունոտ կամ անմաքուր ձեռքը դնել:

Այս խնդիրների համար բանվոր դասակարգը պետք է պատրաստվի արդեն այժմ: Նա պետք է հիշի, որ նրա ուղին նրան ավելի հեռուն է տանում, քան ինքնակալության դեմ մյուս բոլոր մարտնչողներին, և որ մյուս քաղաքական ճամբարից յելած նրա այժմյան բարեկամներն ու դաշնակիցները մեկը մյուսի յետևից կլքեն նրան, որ նրանք կբավարարվեն կիսառեֆորմներով, որ նրանք նրան թշնամի դասակարգերի հետ դաշինք կնքել կցանկանան, որ նրանցից շատերը նրա դեմ դուրս կգան և ինչքան ավելի առա՛ջ, այնքան նրա ուղին շարունակ ավելի դժվար և ավելի վտանգավոր կդառնա:

Բանվորնե՛ր, հեղափոխություն կազմակերպեցե՛ք: Ինքներդ կազմակերպվեցե՛ք հեղափոխության համար: Կազմակերպվեցեք, որ ուժ կազմեք հեղափոխությունից հետո:

Ոչ ոքի մի՛ վստահեք, բացի ինքներդ ձեզանից:

Ձեր շահերը—ամբողջ աշխատավոր ժողովրդի շահերն են: Ձեր շահերից դուրս միայն ժողովրդի կողոպտիչների շահերն են:

Կեցցե՛ հեղափոխությունը:

Կեցցե՛ բանվորական կառավարությունը*): ՊԱՐՎՈՒՍ:

---

*) Ռուսերեն բնագրում Պարվուսի այս կոչը չկա: Հայերեն հրատարակության մեջ մենք ենք մտցրել այն:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՊԼԱՆԻ I ՅԵՎ II ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

4. ՌՍԴԲԿ III (ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ) ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԻՑ.[1]

ա) Զինված ապստամբության մասին.

Ուշադրության առնելով այն,

1) Վոր պրոլետարիատը, իր դրությամբ լինելով ամենից ավելի առաջավոր և միակ հաջորդաբար հեղափոխական դասակարգը, հենց դրանով կոչված է ղեկավար դեր խաղալու Ռուսաստանի ընդհանուր դեմոկրատական հեղափոխական շարժման մեջ.

2) Վոր այդ շարժումը ներկա մոմենտում արդեն հասցրել է զինված ապստամբության անհրաժեշտության.

3) Վոր պրոլետարիատն անխուսափելիորեն այդ ապստամբության ամենայեռանդուն մասնակցություն կունենա, վոր կորոշի հեղափոխության բախտը Ռուսաստանում.

4) Վոր այդ հեղափոխության մեջ պրոլետարիատը ղեկավար դեր կարող է խաղալ միայն համախմբված լինելով իբրև միասնական և ինքնուրույն քաղաքական ուժ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության դրոշի տակ, կուսակցություն, վորը ղեկավարում է նրա պայքարը վոչ միայն իդեապես, այլև գործնականորեն.

5) Վոր միայն այսպիսի դեր կատարելը կարող է պրոլետարիատի համար ապահովել ամենից ավելի ոգտակար պայմաններ պայքարելու հանուն սոցիալիզմի ընդդեմ բուրժուա-դեմոկրատական Ռուսաստանի ունեվոր դասակարգերի.—

ՌՍԴԲԿ III համագումարն ընդունում է, վոր ինքնակալության դեմ զինված ապստամբության միջոցով անմիջական պայքարի համար պրոլետարիատին կազմակերպելու խնդիրը հանդիսանում է կուսակցության ամենից գլխավոր և անհետաձգելի խնդիրներից մեկը ներկա հեղափոխական մոմենտում:

Այս պատճառով համագումարը հանձնարարում է կուսակցական բոլոր կազմակերպություններին.

ա) պրոպագանդի և ագիտացիայի միջոցով պրոլետարիատին պարզաբանել առաջիկա զինված ապստամբության վոչ միայն քաղաքական նշանակությունը, այլև գործնական-կազմակերպչական կողմը.

բ) այդ պրոպագանդի և ագիտացիայի ժամանակ պարզաբանել մասսայական քաղաքական գործադուլների դերը, վոր կարող են կարևոր նշանակություն ունենալ ապստամբության սկզբում և հենց ընթացքում.

գ) ամենայեռանդուն միջոցներ ձեռք առնել պրոլետարիատին զի-

[1] *Այս էջից մինչև 121 էջը ռուսերեն բնագրում չկա, ավելացրել ենք մենք:*
Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

նելու, նույնպես և զինված ապստամբության պլանը մշակելու և այդ ապստամբությունն անմիջականորեն ղեկավարելու համար, դրա համար ստեղծելով, ըստ հարկավորության, հատուկ խմբեր կուսակցական աշխատողներից:

բ) Ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին.

Ուշադրության առնելով այն,

1) վոր պրոլետարիատի ինչպես անմիջական շահերը, այնպես էլ նրա պայքարի շահերը հանուն սոցիալիզմի վերջնական նպատակների պահանջում են ըստ հնարավորին ավելի լրիվ քաղաքական ազատություններ, հետևաբար և կառավարման ինքնակալական ձևի փոխարինում դեմոկրատական հանրապետությամբ.

2) վոր Ռուսաստանում դեմոկրատական հանրապետության իրականացումը հնարավոր է միայն ժողովրդական հաղթական ապստամբության հետևանքով, վորի որգանը կհանդիսանա ժամանակավոր հեղափոխական կառավարությունը, վորը մեն-միայն ընդունակ կլինի ապահովել նախընտրական ագիտացիայի լիակատար ազատություն և ստեղծել իրոք ժողովրդի կամքն արտահայտող սահմանադիր ժողով ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ.

3) վոր այդ դեմոկրատական հեղաշրջումը Ռուսաստանում, նրա տվյալ հասարակական-տնտեսական կարգի ժամանակ, չի թուլացնի, այլ կուժեղացնի բուրժուազիայի տիրապետությունը, վորը վորոշ մոմենտում անխուսափելիորեն կփորձի վոչ մի բանի առաջ կանգ չառնելով, Ռուսաստանի պրոլետարիատից խլել հեղափոխական ժամանակաշրջանի նվաճումների ըստ հնարավորին ավելի մեծ մասը.—

ՌՍԴԲԿ III համագումարը վորոշում է.

ա) անհրաժեշտ է բանվոր դասակարգի մեջ կոնկրետ պատկերացում տարածել հեղափոխության ամենից ավելի հավանական ընթացքի և հեղափոխության վորոշ մոմենտում ժամանակավոր հեղափոխական կառավարության յերևան գալու անհրաժեշտության մասին, վորից պրոլետարիատը կպահանջի մեր ծրագրի (ծրագիր-մինիմում) ամենամոտ քաղաքական ու տնտեսական պահանջների իրականացումը.

բ) նայած ուժերի հարաբերակցությանը և այլ գործոններին, վոր նախորոք ճշգրիտ վորոշել անհնար է, թույլատրելի յե մեր կուսակցության լիազորների մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությանն այն նպատակով, վոր անխնա պայքար մղվի բոլոր հակահեղափոխական փորձերի դեմ և պաշտպանվի բանվոր դասակարգի ինքնուրույն շահերը.

գ) այսպիսի մասնակցության անհրաժեշտ պայմանն է կուսակցության խիստ վերահսկողությունն իր լիազորների վրա և սոցիալ-դեմոկրատիայի անկախության անշեղ պահպանումը, սոցիալ-դեմոկրատիա, վորը ձգտում է լիակատար սոցիալիստական հեղաշրջման և այնքան վոր անհաշտելիորեն թշնամի յե բոլոր բուրժուական կուսակցություններին.

դ) անկախ այն բանից, թե արդյոք հնարավոր կլինի սոցիալ-դեմոկրատիայի մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությանը, հարկավոր է պրոլետարիատի ամենալայն շերտերում պրոպագանդ անել այն իդեան, որ անհրաժեշտ է շարունակ ճնշում գործադրել ժամանակավոր կառավարության վրա զինված և սոցիալ-դեմոկրատիայից ղեկավարվող պրոլետարիատի միջոցով՝ հեղափոխության նվաճումները պաշտպանելու, ամրացնելու և լայնացնելու նպատակով:

գ) հեղաշրջման նախորյակին դեպի կառավարության տակտիկան ունենալիք վերաբերմունքի մասին.

Ուշադրության առնելով այն,
որ կառավարությունն ինքնապահպանության նպատակով ներկա հեղափոխական ժամանակաշրջանում, ուժեղացնելով պրոլետարիատի առավելապես գիտակից տարրերի դեմ ուղղված սովորական ռեպրեսիաները, դրա հետ միասին.

1) փորձում է զիջումների և ռեֆորմների խոստումների միջոցով անբարոյացնել բանվոր դասակարգին և դրանով նրան հեռացնել հեղափոխական պայքարից.

2) հենց նույն նպատակով իր զիջումների կեղծավոր քաղաքականությանը կեղծ-դեմոկրատական ձևեր է տալիս, սկսած այն բանից, որ բանվորներին հրավիրում է իրենց ներկայացուցիչներին ընտրել հանձնաժողովների և խորհրդակցությունների համար, և վերջացրած ժողովրդական ներկայացուցչության ծաղրանկարային ձևերի ստեղծումով, ինչպիսին է այսպես կոչված Զեմսկի Ժողովը 3) կազմակերպում է այսպես կոչված սև հարյուրակներ և հեղափոխության դեմ է հանում ժողովրդի ընդհանրապես բոլոր ռեակցիոն, անգիտակից կամ ռասայական ու կրոնական ատելությամբ կուրացած տարրերին.

ՌՍԴԲԿ III համագումարը վորոշում է առաջարկել կուսակցական բոլոր կազմակերպություններին.

ա) մերկացնելով կառավարական զիջումների ռեակցիոն նպատակները, պրոպագանդ և ագիտացիա անելիս ընդգծել մի կողմից՝ դրանց ստիպմամբ արված լինելու բնույթը, մյուս կողմից՝ այն հանգամանքը, վոր ինքնակալության համար անպայման անհնար է պրոլետարիատին բավարարող ռեֆորմներ անել.

բ) օգտվելով նախընտրական ագիտացիայից, բանվորներին պարզաբանել կառավարության նման միջոցառումների իսկական իմաստը և ապացուցել, վոր պրոլետարիատի համար անհրաժեշտ է հեղափոխական ճանապարհով գումարել սահմանադիր ժողով ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ.

գ) կազմակերպել պրոլետարիատին հեղափոխական ճանապարհով 8-ժամյա բանվորական օրի և բանվոր դասակարգի մյուս հերթական պահանջների անհապաղ իրականացման համար.

դ) զինված հակահարված կազմակերպել կառավարության կողմից ղեկավարվող սև հարյուրակների և ընդհանրապես բոլոր ռեակցիոն տարրերի ցելույթների դեմ:

դ) ՌՍԴԲԿ բացահայտ քաղաքական յելույթի մասին.

Ուշադրության առնելով այն,

1) վոր հեղափոխական շարժումը Ռուսաստանում վորոշ չափով արդեն տատանել և կազմալուծել է ինքնակալական կառավարությունը, վորը հարկադրված է թույլատրել իրեն թշնամի դասակարգերի քաղաքական յելույթի վորոշ ազատություն.

2) վոր քաղաքական յելույթի այդ ազատությամբ առավելապես օգտվում են այժմ բուրժուական դասակարգերը, այդպիսով ե՛լ ավելի ուժեղացնելով իրենց տնտեսական ու քաղաքական գերիշխումը պրոլետարիատի վրա և մեծացնելով այն վտանգը, վոր բանվոր դասակարգը բուրժուական դեմոկրատիայի սոսկական կցանքը կդառնա.

3) վոր բանվորական մասսաների մեջ շարունակ ավելի և ավելի լայնորեն է յերևան գալիս ինքնուրույն և բացահայտ կերպով քաղաքական ասպարեզ դուրս գալու ձգտումը թեկուզ և առանց սոցիալ-դեմոկրատիայի վորևե մասնակցությանը,—

ՌՍԴԲԿ III համագումարը բոլոր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, վոր անհրաժեշտ է՝

ա) օգտվել բացահայտ յելույթի ամեն մի դեպքից և ընդհանուր դեմոկրատական պահանջներին հակադրել պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային պահանջները, հենց այդպիսի յելույթների ընթացքում կազմակերպել նրան իբրև ինքնուրույն սոցիալ-դեմոկրատական ուժ.

բ) օգտագործել բոլոր լեգալ կամ անլեգալ բանվորական ընկերությունները, միությունները և մյուս կազմակերպությունները և աշխատել սոցիալ-դեմոկրատիայի գերիշխող ազդեցությունը դրանց վրա և ըստ հնարավորին դրանց դարձնել Ռուսաստանի ապագա բացահայտ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հենակետեր.

գ) միջոցներ ձեռք առնել, վոր մեր կուսակցական կազմակերպությունները, իրենց կոնսպիրատիվ ապարատը պահելու և զարգացնելու կողքին, անհապաղ դիմեն սոցիալ-դեմոկրատական կուսակցության բացահայտ գործունեության անցնելու նպատակահարմար ձևերի նախապատրաստմանն այն բոլոր դեպքերում, յերբ այդ հնարավոր է, ընդ վորում կանգ չառնելով նաև կառավարության զինված ուժի հետ ընդհարվելու առաջ:

ե) դեպի գյուղացիական շարժումն ունենալիք վերաբերմունքի մասին.

Ուշադրության առնելով այն,

1) վոր այժմ աճող գյուղացիական շարժումը, տարերային և քաղաքականապես անգիտակցական լինելով, այնուամենայնիվ անխուսափելիորեն ուղղվում է գոյություն ունեցող կարգի և ընդհանրապես ճորտատիրության բոլոր մնացորդների դեմ.

2) վոր սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների մեջ մտնում է սատարել ամեն տեսակ հեղափոխական շարժում ընդդեմ գոյություն ունեցող հասարակական և քաղաքական կարգի.

3) որ սրա շնորհիվ սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի զտել գյուղացիական շարժման հեղափոխական-դեմոկրատական բովանդակությունն ամեն տեսակ ռեակցիոն խառնուրդներից, զարգացնելով գյուղացիների հեղափոխական ինքնագիտակցությունը և մինչև վերջ հասցնելով նրանց դեմոկրատական պահանջները.

4) որ սոցիալ-դեմոկրատիան, իբրև պրոլետարիատի կուսակցություն, պետք է բոլոր դեպքերում և բոլոր հանգամանքներում անշեղորեն ձգտի ինքնուրույն կերպով կազմակերպել գյուղական պրոլետարիատին և նրան պարզաբանել նրա շահերի ու գյուղացիական բուրժուազիայի շահերի անհաշտելի հակասությունը,—

ՌՍԴԲԿ III համագումարը հանձնարարում է բոլոր կուսակցական կազմակերպություններին՝

ա) պրոպագանդ անել ժողովրդի լայն շերտերում, որ սոցիալ-դեմոկրատիան իրեն խնդիր է առաջադրում ամենայեռանդուն կերպով պաշտպանել գյուղացիության բոլոր հեղափոխական միջոցառումները, որ կարող են լավացնել նրա դրությունը, մինչև կալվածատիրական, պետական, յեկեղեցական, վանքական և ուդելային հողերի կոնֆիսկացիան.

բ) իբրև գյուղացիության մեջ ագիտացիա անելու պրակտիկ լոզունգ և իբրև գյուղացիական շարժման մեջ ամենամեծ գիտակցականություն մացնելու միջոց առաջ քաշել գյուղացիական հեղափոխական կոմիտեների անհապաղ կազմակերպման անհրաժեշտությունն այն նպատակով, որ իրագործվեն բոլոր հեղափոխական-դեմոկրատական վերակազմությունները գյուղացիությունը ոստիկանական-չինովնիկական և կալվածատիրական ճնշումից փրկելու համար.

գ) ինքնակալությունը կազմալուծելու և նրա վրա հեղափոխական բուռն գրոհը պաշտպանելու նպատակով գյուղացիությունն ու գյուղական պրոլետարիատին կոչել ամեն տեսակ քաղաքական ցույցեր անել, հավաքականորեն տուրքերն ու հարկերը վճարելուց, զինապարտությունը, կառավարության և նրա գործակալների վորոշումներն ու հրամանները կատարելուց հրաժարվել.

դ) ձգտել գյուղական պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպմանը, նրա միաձուլմանը քաղաքի պրոլետարիատի հետ սոցիալ-դեմոկրատական կուսակցության դրոշի տակ և նրա ներկայացուցիչները գյուղացիական կոմիտեների մեջ մացնելուն:

2) Սոցիալիստ-հեղափոխականների հետ գործնական համաձայնություններ կնքելու մասին.

Հաստատելով ՌՍԴԲԿ II համագումարի բանաձևով վորոշված վերաբերմունքը դեպի սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը, և ուշադրության առնելով այն,

1) որ ինքնակալության դեմ պայքարելու նպատակով սոցիալ-դեմոկրատների ժամանակավոր մարտական համաձայնությունները սոցիալիստ-հեղափոխականների կազմակերպությունների հետ կարող են վորոշ դեպքերում օգտակար լինել.

2) որ այդպիսի համաձայնությունները վոչ մի դեպքում չպետք

է սահմանափակեն սոցիալ-դեմոկրատական կուսակցության լիակատար ինքնուրույնությունը և խախտեն նրա պրոլետարական տակտիկայի և նրա սկզբունքների ամբողջականությունը և մաքրությունը,—

ՌՍԴԲԿ III համագումարը հանձնարարում է կենտրոնական կոմիտեյին և տեղական կոմիտեներին հարկավոր դեպքում ժամանակավոր մարտական համաձայնությունների գալ սոցիալիստ-հեղափոխականների կազմակերպությունների հետ, ընդվորում տեղական համաձայնությունները կարող են կնքվել միայն կենտրոնական կոմիտեյի վերահսկողությամբ:

ե) դեպի լիբերալներն ունենալիք վերաբերմունքի մասին

Նկատի առնելով այն,

ա) որ սոցիալ-դեմոկրատիան պետք է աջակցի բուրժուազիային ինչքան որ նա հեղափոխական կամ միայն օպոզիցիոն է իր պայքարում ցարիզմի դեմ.

բ) որ այս պատճառով սոցիալ-դեմոկրատիան պետք է վողջունի ռուսական բուրժուազիայի քաղաքական գիտակցության արթնացումը, բայց որ, մյուս կողմից՝ նա պարտավոր է պրոլետարիատի առաջ մերկացնել բուրժուազիայի ազատագրական շարժման սահմանափակությունը և անբավարարությունն ամենուրեք, վորտեղ ել որ յերևան գա այդ սահմանափակությունը,—

ՌՍԴԲԿ III համագումարը հաստատ հանձնարարում է ընկերներին՝

1. Պարզաբանել բանվորներին հակահեղափոխական և հակապրոլետարական բնույթը բուրժուա-դեմոկրատական ուղղության իր բոլոր յերանգներով, սկսած չափավոր-լիբերալից, վորի ներկայացուցիչներն են հողատերերի և գործարանատերերի լայն շերտերը և փերջացրած ավելի արմատականներով, վորոնց ներկայացուցիչներն են Ազատագրության Միությունը և ազատ պրոֆեսիայի անձերի բազմաթիվ խմբերը:

2) Ծարագրվածի հիման վրա յեռանդուն պայքար մղել բուրժուական դեմոկրատիայի ամեն տեսակ փորձերի դեմ, վորոնցով նա ուզում է իր ձեռքն առնել բանվորական շարժումը և հանդես գալ պրոլետարիատի կամ նրա առանձին խմբերի անունից:

Ծանոթություն: Այս բանաձևով փերացվում է ընկ. Ստարովերի II համագումարում ընդունված բանաձևը դեպի լիբերալներն ունենալիք վերաբերմունքի մասին:

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԺԸՆԵՎԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԲԱՆԱՁԵՎԸ

I. Զինված ապստամբության մասին

Սոցիալ-դեմոկրատիան, իրեն խնդիր առաջադրելով մասսաներին ապստամբության նախապատրաստել, ձգտում է նրան իր ազդեցությանը և ղեկավարությանը յենթարկել և օգտագործել բանվոր դասակարգի շահերի համար:

Ուշադրության առնելով այն, որ՝

1) միաժամանակյա և ընդհանուր ապստամբությունն առաջուց նշանակված ժամկետին հարմարեցնելու և կոնսպիրատիվ-կազմակերպ-

չական միջոցներով այն նախապատրաստելու հնարավորությունը բացառվում է արդեն միայն պրոլետարիատի առաջավոր շերտերի թույլ կազմակերպվածությամբ և հենց այն ժողովրդական մասսաների հեղափոխական շարժման անխուսափելիորեն տարերային բնույթով, որոնց արագ զրավումը ցարիզմի դեմ մղվող պայքարի մեջ մեր հաղթանակի գրավականն է հանդիսանում.

2) որ հաղթական ապստամբության համար նպաստավոր պայմաններ ստեղծվում են ամենից առաջ մասսաների մեջ չընդհատվող խմորման առաջացումով և ռեակցիոն ուժերի աճող կազմալուծումով,— սոցիալ-դեմոկրատիան ապստամբություն նախապատրաստելու նպատակով պետք է ամենից առաջ՝

ա) լայնացնի իր ագիտացիան մասսաների մեջ ընթացիկ քաղաքական անցքերի հողի վրա.

բ) կապի իր քաղաքական կազմակերպության հետ և նրա ադդեցության յենթարկի պրոլետարական մասսաների ինքնուրույնաբար ծագող սոցիալ-տնտեսական շարժումները.

գ) ամրացնի մասսաների մեջ հեղափոխության անխուսափելիության գիտակցությունը, զինված հակահարված տալուն միշտ պատրաստ լինելու անհրաժեշտությունը և ամեն մի ակյալ մոմենտում հակահարված ապստամբության փոխելու հնարավորությունը.

դ) ամենասերտ կապ հաստատի տարբեր տեղերի պայքարող պրոլետարիատի միջև, որպեսզի այդպիսով սոցիալ-դեմոկրատիայի համար հնարավոր դարձնի նախապատրաստվող տարերային շարժումները պլանաչափ ապստամբությունների փոխելու նախաձեռնողական գործողությունները: Ըստ հնարավորին ավելի մեծ չափով հաստատի քաղաքների պրոլետարական շարժման և գյուղի հեղափոխական շարժման միջև.

ե) լայն ագիտացիայի միջոցով շահագրգռի պրոլետարիատի դեմոկրատական հանրապետության համար մղվող հեղափոխական պայքարով ըստ հնարավորին բնակչության ավելի լայն շրջաններին, որպեսզի ինքնուրույն դասակարգային կուսակցության կողմից ղեկավարվող պրոլետարիատի մարտական գործողությունների համար ապահովի ըստ հնարավորին ոչ պրոլետարական խմբակների ավելի ակտիվ աջակցությունը:

Միայն սոցիալ-դեմոկրատիայի այսպիսի բազմակողմանի աշխատանքի հողի վրա կարելի կլինի մոտեցնել ապստամբության մոմենտը, կարելի կլինի հեշտացնել նրա յենթարկումը մեր ղեկավարությանը և կարող կլինեն ավելի կամ պակաս չափով լուրջ նշանակություն ձեռք բերել մեր կուսակցական կազմակերպությունների տեխնիկական-մարտական նախապատրաստությունների ապստամբության համար:

II. Գյուղացիների մեջ կատարվող աշխատանքի մասին.

I

Իբրև պրոլետարիատի կուսակցություն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան ձգտում է մեկ միասնական քաղաքական կուսակցության մեջ կազմակերպել արդյունաբերական և գյուղատնտեսական բանվորներին նրանց ամենամոտիկ պահանջների և համաշխարհային բանվորական շարժման վերջնական նպատակի—արտադրության կապիտալիստական հարաբերությունները՝ վոչնչացնելու և այդ հարաբերությունները սոցիալիստական հարաբերություններով փոխարինելու պայքարի համար:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական բանվորներին, ապա սոցիալ-դեմոկրատիայի գործունեյությունը նրանց մեջ հատկապես հեշտանում է այն հուզմունքի շնորհիվ, որն ընդգրկել է վերջերս յերկրի ամբողջ բնակչությունը՝ տարածվելով նաև գյուղացիության մեջ…

Այսպիսի գործունեյության անհրաժեշտությունը, որը ինքն ըստ ինքյան հասկանալի յե, հատկապես ուժեղ կերպով զգալի յե այժմ, յերբ գյուղատնտեսական ձեռնարկատերերը վոչ յերկիմաստ փորձեր են անում ամրացնել գյուղատնտեսական բանվորների կախյալ դրությունը և նույնիսկ իրենց ռեֆորմատորական պլաններում արտահայտվում են այն իրավունքների սահմանափակման օգտին, վորոնք անհրաժեշտ են բանվորներին, իբրև իրենց բանվորական ուժը վաճառողների շահերը պաշտպանելու համար:

Կոնֆերենցիան հրավիրում է ընկերներին օգտվել այս հանգամանքներից գյուղական բանվորների մեջ ուժգին ագիտացիա անելու, գործադուլային շարժում կազմակերպելու համար և բանվորներին միությունների մեջ համախմբել իրենց պրոֆեսիոնալ շահերի համար պայքարելու նպատակով:

Այսպիսի ագիտացիայով զբաղվելով, ընկերները պետք է պարզեն գյուղատնտեսական պրոլետարիատին այն առաջնակարգ կարևորությունը, որ նրա համար ունեն մեր ծրագրի վարձու աշխատանքի շահերի պաշտպանության հետամուտ բոլոր պահանջները:

Կազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն գյուղատնտեսական արտադրանաց բանվորների վարձման կետերի վրա և բանվորների կուտակման մոմենտն օգտագործեն նրանց մեջ ամենայեռանդուն ագիտացիայի համար:

II

Բայց բացի վարձու աշխատանքի պայքարից ընդդեմ կապիտալի, ժամանակակից գյուղում տեղի յե ունենում նույնպես գյուղացիության իբրև դասի ազատագրական շարժումը, վորը հատկապես ծանր ու ստորացուցիչ դրության մեջ է դրված այժմ արագորեն քայքայվող ճորտատիրական կարգի կողմից:

Ագիտացիա անելով իր ագրարային ծրագրի հողի վրա, սոցիալ-դեմոկրատիան հակադրում է այդ ծրագրի պահանջներն այն բոլոր փորձերին, վորոնք ագրարային ռեֆորմի ձևի տակ նոր քեռ են դնում գյուղացիների վրա կալվածատերերի օգտին (կալվածատիրական հողերի նոր գնման նախագծերը) մերկացնում է ռեակցիոն իլլյուզիաները, վոր հիմնված են այն պատկերացման վրա, թե ցարը պետության ամբողջ հողի գերագույն սեփականատերն է, կամ հենված են մանր տնտեսության իդեալականացման վրա, կամ գյուղական չքավորներին ներշնչում են այն միտքը, վոր իբրթե հողային սեփականության այս կամ այն վերաբաշխման միջոցով կարելի յե հասնել նրանց ազատագրման կապիտալիստական շահագործումից:

Միևնույն ժամանակ սոցիալ-դեմոկրատիան պաշտպանում է գյուղացիների կողմից հողերի բռնի գրավման ամեն տեսակ փորձերը, ընդ-

ամին պարզաբանելով գյուղացիությանը, որ նրա նվաճումները կալվածատերերի դեմ մղվող պայքարում կարող են հաստատ ապահովվել միայն ազատ ընտրված Համաժողովրդական Սահմանադիր ժողովի կողմից, որին պետք է պահանջ ներկայացվի դեմոկրատական հիմքի վրա հատուկ կոմիտեներ կազմել վերջնականապես վերացնելու հին, գյուղացիության համար այնքան ծանր գյուղական կարգերը (գյուղացիական կոմիտեներ):

Իսկ յելակետ ունենալով այն փաստը, որ ոչ միայն հողային սեփականության առկա բաշխումով, այլև պետական ու հասարակական կյանքի ամբողջ կարգով են պաշտպանվում ճորտատիրական հարաբերությունները գյուղում, սոցիալ-դեմոկրատիան անպայմա՛ն ագիտացիա յե անում գյուղացիների մեջ իր դեմոկրատական պահանջների հիմքի վրա և հատկապես մատնանշում է, թե առաջնակարգ կարևորություն ունեն գյուղացիության համար՝

ա) բոլոր անուղղակի հարկերի փոխարինումը յեկամուտների և ժառանգության մեկ ուղղակի պրոգրեսիվ հարկով.

բ) բոլոր դասային սահմանափակումների և անցագրի սիստեմի վոչնչացումը.

գ) վոչ միայն պետական կարգի, այլև տեղական ու համայնական ինքնավարության բոլոր օրգանների լիակատար դեմոկրատացումը.

դ) մշտական զորքի փոխարինումը ժողովրդական աշխարհազորով.

III

Սոցիալ-դեմոկրատիան իր ագիտացիոն գործունեության մեջ մերժելով իբրև սիստեմատիկ պայքարի գործիք ագրարային տեռորը, որ աննպատակահարմար և իսկական հեղափոխական խնդիրներից ուշադրությունը հեռացնող մի միջոց է, անհրաժեշտ է գտնում՝

1) ըստ հնարավորին ավելի լայն կերպով իրազեկ պահել գյուղին Ռուսաստանի հասարակական և հեղափոխական շարժման ընթացքին և հատկապես բանվոր դասակարգի խնդիրներին և շարժման արտահայտություններին, նույնպես և ըստ հնարավորին ավելի սերտ փոխազդեցություն հաստատել քաղաքի և գյուղի հեղափոխական շարժման միջև.

2) մերկացնել այն բոլոր փորձերը, որ կառավարությունն անում է գյուղացիներին ազատագրական շարժումը ճնշելու գործիք դարձնելու համար և պարզել այդ փորձերի ռեակցիոն և հակաժողովրդական բնույթը.

3) ագիտացիա անել հօգուտ՝

ա) քաղաքական պահանջների բացահայտ հայտարարման գյուղական և վոլոստային (գյուղխմբակային) ժողովներում.

բ) ընդհանուր զինման՝ կառավարական բռնություններից ինքնապաշտպանվելու համար.

գ) հարկերի վճարումից և պարհակների կատարումից հրաժարման.

դ) նորակոչիկներ տալուց, վարժական հավաքներին ներկայանալուց և պահեստի զինվորներին կանչելու դեպքում դրոշակի տակ կանգնելուց հրաժարվելու.

ե) բոլոր կառավարական և կառավարության ճնշման տակ ընտրված իշխանությունները ճանաչելուց հրաժարվելու.

զ) պաշտոնյաների ազատ ընտրության և իվերջո—

է) գյուղի հեղափոխական ինքնավարության և ինքնավար գյուղական հասարակությունների հեղափոխական միությունների, իբրև գյուղացիական ապստամբության կազմակերպման ընդդեմ ցարիզմի:

IV

Կոնֆերենցիան յուրաժամանակ է համարում հրավիրել գյուղում աշխատանք կատարող ագիտատորների հատուկ կոնֆերենցիա և մանրամասն մշակել այդ աշխատանքի հետ կապված գործնական հարցերը: Կոնֆերենցիան առաջարկում է ուկրայնական ս.-դ. միությանն իր վրա վերցնել, կազմակերպչական հանձնաժողովի աջակցությամբ, այդ կոնֆերենցիայի կազմակերպումը և վորոշում է խնդրել նրան ռուսերեն հրատարակելու այն բոլոր գրականությունը, վոր հրատարակվում է մալառուսական լեզվով, յեթե միայն զուտ տեղական բնույթ չի կրում այն:

III. Իշխանության նվաճման և ժամանակավոր կառավարությանը մասնակցելու մասին

Հեղափոխության վճռական հաղթանակը ցարիզմի վրա կարող է նշանավոր դառնալ կամ հաղթական ժողովրդական ապստամբությունից դուրս յեկած ժամանակավոր կառավարության հիմնումով կամ այս կամ այն ներկայացուցչական հիմնարկի հեղափոխական նախաձեռնությամբ, վորը ժողովրդի անմիջական հեղափոխական ճնշման տակ վճռում է Համաժողովրդական Սահմանադիր ժողով կազմակերպել:

Յե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում այսպիսի հաղթանակը հեղափոխական եպոխայի նոր փուլի սկիզբը կհանդիսանա:

Այն խնդիրը, վորը հասարակական զարգացման օբյեկտիվ պայմաններն ամենամոտիկ ձևով առաջադրում են այս նոր փուլին, հանդիսանում է ամբողջ դասային-միապետական ռեժիմի վերջնական լիկվիդացիան քաղաքականապես-ազատագրված բուրժուական հասարակության տարրերի միջև մղվող փոխադարձ պայքարի պրոցեսում հանուն իրենց սոցիալական շահերի իրականացման և հանուն իշխանության անմիջական տիրապետման:

Այս պատճառով էլ ժամանակավոր կառավարությունը, վորն իր վրա կվերցներ այս, ըստ իր պատմական բնույթի, բուրժուական հեղափոխության խնդիրների իրականացումը, պետք է, կանոնավորելով ազատագրվող ազգի հակադիր դասակարգերի փոխադարձ պայքարը, վոչ միայն առաջ մղեր հեղափոխական զարգացումը, այլև պայքարեր դրա այն գործոնների դեմ, վորոնք սպառնում են կապիտալիստական կարգի հիմքերին:

Այսպիսի պայմաններում սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի հեղափոխության ամբողջ ընթացքում այնպիսի դրություն պահել, վորը նրա համար ամենից ավելի լավ կապահովի հեղափոխությունն առաջ շարժելու հնարավորությունը, նրա ձեռքերը չի կապի բուրժուական կուսակցությունների անհետևողական և շահախնդրական քաղաքականության դեմ մղվող պայքարում և նրան կնախապահպանի բուրժուական դեմոկրատիայի մեջ լուծվելուց:

Այս պատճառով սոցիալ-դեմոկրատիան չպետք է իրեն նպատակ դնի գրավել կամ բաժանել իշխանությունը ժամանակավոր կառավարության մեջ, այլ պետք է մնա ծայրահեղ հեղափոխական օպոզիցիայի կուսակցություն:

Իհարկե այս տակտիկան ամենևին չի բացառում այս կամ այն քաղաքում, այս կամ այն ռայոնում իշխանության մասնակի եպիզոդիկ գրավման և հեղափոխական կոմունաների կազմակերպման նպատակահարմարությունը բացառապես ապստամբության տարածմանը և կառավարության կազմալուծմանն աջակցելու համար:

Միայն մի դեպքում սոցիալ-դեմոկրատիան իր նախաձեռնությամբ պետք է ամեն ջանք թափեր իշխանությանը տիրանալ և ըստ հնարավորին իր ձեռքում ավելի յերկար պահել այն, այսինքն այն դեպքում, յերբ հեղափոխությունը նետվեր Արևմտյան Յեվրոպայի առաջավոր յերկրները, վորոնցում սոցիալիզմի իրականացման պայմանները վորոշ հասունության արդեն հասել են: Այդ դեպքում ռուսական հեղափոխության սահմանափակ պատմական սահմանները կարող են նշանավոր չափով յետ քաշվել և հնարավորություն կստեղծվի սոցիալիստական վերակազմությունների ուղին վոտք դնել:

Իր տակտիկան կառուցելով այն հաշվով, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը պետք է ամբողջ հեղափոխական ժամանակաշրջանում ծայրահեղ հեղափոխական օպոզիցիայի դիրք բռնի դեպի հեղափոխության ընթացքում փոփոխվող կառավարությունները, սոցիալ-դեմոկրատիան ամենից ավելի լավ էլ կարող է նախապատրաստվել կառավարական իշխանության օգտագործման համար, յեթե իր ձեռքն ընկնելու լինի այն:

(«Первая общерусская конференция партийных работников» *գրքույկից, եջ 103—106*).

ՊԼԱՆԻ III ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

5. Մենշևիկները հեղափոխական մոմենտի գնահատման և պրոլետարիատի խնդիրների մասին

Միացուցիչ համագումարում ՄԱՐՏԻՆՈՎԻ արած զեկուցումից:

Пртоколы об'единительного съезда РСДРП, Гиз, 1926 г., стр. 133—138)

Ընկերնե՛ր, մենք, այսպես կոչված մենշևիկներս ու բոլշևիկներս, տարամիտում ենք վոչ միայն մեր այժմյան տակտիկական հրահանգներում, մենք տարամիտում ենք ամեն տեսակ հեղափոխության ընթացքի մասին ունեցած մեր չափանիշում, մեր պատկերացումում: Հենց այս պատճառով մենք տարբեր ձևով ենք գնահատում ընթացիկ մոմենտը, հենց այս պատճառով մենք տարբեր տակտիկական հետևությունների յենք հանգում: Բոլշևիկներն ասում են՝ կամ սահմանադրական չինարարություն, կամ զինված ապստամբություն, կամ մենք ապրում ենք 1849 թ. նման մոմենտ, այսինքն վոտք ենք դնում քաղաքական ռեակցիայի ժամանակաշրջանը, այդ ժամանակ պետք է հրաժարվենք ապստամբությունից, կամ մենք ապրում ենք 1847 թ. այն ժամանակ էլ պետք է հրաժարվենք սահմանադրական չինարարությունից: Այսպիսի պատկերացումը հեղափոխության ընթացքի մասին բոլորովին ուտոպիական է, բոլոր խոշոր հեղափոխություններում տարերային բռնկումը և բռնի ընդհարումը զուգահեռ են ընթանում քաղաքական հիմնարկների ջախջախման, այսինքն՝ սահմանադրական չինարարության հետ, և այս յերկու պրոցեսը վոչ միայն չեն բացառում, այլ ընդհակառակը, փոխադարձաբար պայմանավորում են իրար:

...«Մեծամասնության» ընկերները վորոշ դալտոնիզմով են տառապում. նրանք վորոշ գույներ են տեսնում, վորի հետևանքով նրանք անցքերը գնահատելիս իրենց բոլոր ուշադրությունը կենտրոնացնում են հեղափոխության արտահայտության տեխնիկական ձևերի վրա, համարյա անտեսում են հասարակական ուժերի քաղաքական կազմակերպության հարցը: Նրանք մեզ համոզում են, վոր հեղափոխությունը չի վերջացել, բայց նրանք ծեծում են բաց դուռը. ո՞վ է մտածում այդ հերքել: Ներկա հեղափոխությունն առաջ բերող հիմնական հակասությունը չի վերացված, հին ռեժիմը չկարողացավ իր կողմը գրավել վոչ մի կենտրոնական հասարակական շերտ. ժողովրդի հեղափոխական եներգիան չի սպառված. պրոլետարիատը մարտի տենչով է բռնված. ակներև է, վոր մենք գտնվում ենք նոր, հոյակապ հեղափոխական ընդհարումների նախօրյակին: Բայց մեր վեճը սրա մասին չէ.—մենք տարբեր ձևով ենք գնահատում անցյալ դասերը և համապատասխան կերպով էլ տարբեր լուծում ենք տալիս այն հարցին, թե ինչպես ապահովենք հեղափոխության հաջողությունն ապագայում: Մենք պնդում ենք, վոր թեև կանգնած ենք նոր հեղափոխական բռնկումների նախօրյակին, այնուամենայնիվ հոկտեմբերից մինչև դեկտեմբեր տևող հեղափոխական միջանդեպը վերջացավ պարտությամբ. այս հարկավոր է բացահայտ կերպով ընդունել, վոչ մի ֆրազով չմթագնելով այն, վորպեսզի էլլյուզիաներ չսերմանենք և պրոլետարիատի աչալրջությունը չխանգարենք: Ընկեր-բոլշևիկները գործն այնպես են պատկերացնում, վոր մենք աստիճանից աստիճան ենք բարձրանում.— սկզբում յեղավ ընդհանուր գործադուլը, ապա վրա հասավ հեղափոխության ավելի «խտացրած» ձևը—դեկտեմբերի ապստամբությունը, այժմ մենք բարձրանում ենք յերրորդ աստիճանը—մտնենում ենք հաղթական ապստամբություն: Մեր հեղափոխության ընթացքն այսպես պատկերացնել, հաղթանակից հաղթանակ տանող հանդիսավոր յերթի ձևով, նշանակում է գլուխը թաղցնել ավազի մեջ:— Այս Կուրոպատկինի տակտիկան է: Ես հարցնում եմ «մեծամասնության» ընկերներին, արդյոք նրանց ստրատեգիական հաշիվների մեջ մտնո՞ւմ եր մեր նահանջը, արդյոք նրանց հաշիվների մեջ մտնո՞ւմ եյին պատժիչ եքսպեդիցիաները, արդյոք նրանց հաշիվների մեջ մտնում եր այն, վոր կջարդվենք և ստիպված կլինենք ընդհատակյա վիճակի անցնել: Մենք պետք է վճռականապես ասենք մեզ՝ հեղափոխությունը չի ջարդված, բայց անցյալ վճռական գրոհը հին ռեժիմի վրա պարտությամբ է վերջացել, և մենք պետք է մեզ համար պարզենք, թե ինչն է այդ պարտության պատճառը: Մենք, այսպես կոչված մենշևիկներս, սրան պատասխանում ենք, վոր վճռական մոմենտում մենք դեռ չունեյինք կազմակերպված քաղաքական ուժերի նպաստավոր հարաբերակցություն...

1538—5

…Ընթացիկ մոմենտի գնահատմանը տարբեր չափանիշներով մոտենալով, մենք և բոլշևիկները տարբեր հետևությունների յեկանք վոչ միայն դեպի Դուման ունեցած վերաբերմունքի հարցում, այլ նույնպես և դեպի բուրժուական կուսակցություններն ունեցած վերաբերմունքի հարցում։ «Մեծամասնության» ընկերները մեթաֆիզիկորեն են դատում, նրանք դասակարգերի և կուսակցությունների անշարժ ստատիկ —բուրժուական դասակարգերը վաղ թե ուշ պետք է հակահեղափոխական դառնան, այս պատճառով էլ մենք պետք է նրանց մի անգամ ընդմիշտ հակահեղափոխության մեջ հաշվենք և նրանց դեմ պայքար մղենք այնպես, ինչպես ինքնակալության դեմ։ Գյուղացիությունը, ընդհակառակը, չհաղթահարված է հեղափոխության հետագա զարգացումով, այս պատճառով էլ մենք պետք է նրանց հետ հեղափոխության ժամանակաշրջանում հաստատ բլոկ կազմենք։ Այս ստատիկ կլասիֆիկացիան հակասում է մտածողության մարքսիստական մեթոդին. անկասկած է, վոր հեղափոխության զարգացման հետ կադետների մի նշանավոր մասը հակահեղափոխական կդառնա, վոր դրա հետ միասին գյուղացիության մի նշանավոր մասը կրուժվի միապետական իլլյուզիաներից և կյուրացնի դեմոկրատական հանրապետության լոզունգը, բայց այս ամենևին չի հակասում այն բանին, վոր հեղափոխության այժմյան ստադիայում գյուղացիության մի նշանավոր մասը տոգորված է միամիտ հավատով դեպի ցարը, իսկ լիբերալ բուրժուազիայի մի նշանավոր մասը, դրան հակառակ, վճռականապես համակրում է սահմանադրական ռեժիմը։ Նույնը կարելի յե ասել կուսակցությունների կլասիֆիկացիայի մասին. «մեծամասնության» ընկերները դատում են այսպես՝ էսէռները կողմնակից են հանրապետության և ապստամբության, նշանակում է նրանք մեր դաշնակիցներն են. կադետները, դրան հակառակ, ապստամբության դեմ են և կողմնակից են միապետության հետ կոմպրոմիս անելու, նշանակում է նրանց պետք է հաշվել այսպես կոչված միապաղաղ ռեակցիոն մասսայի մեջ։ Այս դատողությունը ռացիոնալիստական է, այդ պատճառով էլ բոլորովին սխալ։ Կադետները սուբյեկտիվորեն թշնամի յեն հեղափոխությանը, այնուամենայնիվ նրանք օբյեկտիվորեն, անկախ իրենց կամքից և նույնիսկ հակառակ իրենց կամքի, այժմ աջակցում են հեղափոխության զարգացմանը, կազմակերպելով այնպիսի հասարակական տարրերի, վորոնք շուտով կգերազանցեն ե՛ նրանց տակտիկան, ե՛ ծրագիրը. դրան հակառակ, էսէռներն իբրև խմբակային ընդհատակյա ինտելիգենցիայի կուսակցություն, չնայած իրենց դեմոկրատական հեղափոխական լոզունգներին, շատ չնչին և անցողիկ նշանակություն ունեն և ամենից հավանականն այն է, վոր շուտով քաղաքական ասպարեզից կչքանան, իրենց ուտոպիաների և իրենց եկլեկտիզմի շնորհիվ վնասակար դեր խաղացած լինելով սոցիալիստական շարժման համար։ Յեթե մենք բոլշևիկների օրինակով բուրժուական կուսակցությունների վերաբերմամբ ունեցած մեր տակտիկան հարմարեցնեյինք նրանց անշարժ կլասիֆիկացիային, փաստապես մի կողմ կմնայինք պատմական շարժման մեծ ճանապարհից և այնպիսի հետևանքների կհասնեյինք, վոր հակառակ են այն հետևանքներին, վորոնց հասնում ենք…

6. ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՈՒՆԵՑԱԾ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

(ՌՍԴԲԿ Միացուցիչ համագումարում Աքսելրոդի արած զեկուցումից։ Протоколы объединительного съезда)

…Յես սկարծում եմ, վոր յեթե հաստատ վճռենք անել այն բոլորը, ինչ մեզնից է կախված, հոկտեմբերի 17-ի մանիֆեստը և ընտրական իրավունքը մասնանշված իմաստով օգտագործելու համար, մեզ կհաջողվի լայն ագիտացիա ծավալել մասսաների մեջ և ամենալուրջ ու անմիջական ազդեցություն ունենալ ընտրական պայքարի ընթացքի և յելքի վրա։ Չե վոր կադետներն էլ էյին հալածում, նրանց դեմ էլ վոստիկանությունը մեծ արգելքներ եր հարուցում, սակայն նրանք իրանց ուզածին հասան։ Իհարկե, այդ մեզ համար անհամեմատ ավելի դժվար եր։ Բայց մասնակցելով ընտրական կամպանիային և ընտրություններին, մենք կարող կլինեյինք յուրատեսակ համերաշխիք հաստատել բոլոր դեմոկրատական կուսակցությունների համար՝ «բոլորը մեկի համար և մեկը բոլորի համար» վոստիկանական կամայականության դեմ ինքնապաշտպանվելու գործում,— այսպես պետք է լիներ ընտրական պայքարին մասնակցող բոլոր խմբերի համար պարտադիր նշանաբանը։ Այս նշանակում է, վոր լիբերալ և դեմոկրատական օպոզիցիայի հասարակականորեն-ազդեցիկ տարրերը պետք է, վոր նույնիսկ ջանախնդրությամբ պաշտպանեյին հեղափոխական տարրերի իրավունքներն ընտրական ագիտացիայի ասպարեզում, ինչպես վոր պաշտպանում եյին իրենց այն իրավունքները գործով իրականացնելու ազատությունը, վորը կառավարությունն ինքը հարկադրված եր թղթի վրա «շնորհել» ժողովրդին։

Հասկանալի յե, վոր այս յենթադրում է այլ տակտիկա լիբերալների ձախ թևի վերաբերմամբ, քան այն, վոր անբաժան կերպով իշխում եր մեզ մոտ։ Չմթագնելով, այլ, ընդհակառակը, ընդգծելով կամ, ավելի ճիշտ, պարզաբանելով բանվոր-ընտրողների առաջ պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային շահերի «թշնամական հակադրությունը», մեր կուսակցությունը պետք է միաժամանակ պարտադրաբար պարզաբաներ նույն ընտրողներին մեր ապրած պատմական մոմենտի առանձնահատկությունները և այդ առանձնահատկություններից առաջացող անհրաժեշտությունը լիբերալ բուրժուազիայի և պրոլետարիատի համար փոխադարձաբար իրար օգնել ինքնապաշտպանության և ընդհանուր թշնամու վրա հարձակում գործելու ժամանակ։ Յեվ հանուն այս անհրաժեշտության մեր կուսակցությունը պետք է իր վրա պատվարեր նախաձեռնություն վերցներ իր և ընտրական կամպանիայի մասնակցող բուրժուա-դեմոկրատական ֆրակցիաների միջև վորոշ պայմաններով վորոշ համաբերություններ մշակելու և հաստատելու գործում։ Հակառակ դեպքում մենք մեր մասնակցությամբ ընտրություններին հեշտությամբ կարող կլինեյինք յերևան գալ հոկտեմբերյանների կուսակցության և ուղղակի սևհարյուրակայինների ակամա օժանդակողների և դաշնակիցների դերում։ Յեթե գերմանական սոցիալ-դեմոկրատիան ստիպված է կրկնաքվեարկությունների ժամանակ բանվորներին խորհուրդ տալ, վոր քվե տան բուրժուական դեմոկրատներին և լիբերալ-

ներին ընդդեմ ռեակցիոն թեկնածուների, ապա մեզ տերն ինքն է հրամայել, մեզ պատմությունը հրամայաբար հրահանգում է իբրև պարտք, իբրև պարտավորություն «պաշտպանել» ռադիկալ և հեղափոխական բուրժուազիային պատմական ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում: Եվ արդեն, իհարկե, դեռ անօդ տարածության մեջ սավառնող «դեմոկրատական հանրապետության» հանդիսավոր ընդունումը չէ, որ կարող է կամ պետք է այդ պաշտպանության անփոփոխ պայմանը հանդիսանա: Երբ ուժերի հարաբերակցությունն այնքան կփոխվի դեմոկրատիայի օգտին, որ կառավարման հանրապետական ձևի հարցն օրակարգի խնդիր կդառնա իբրև գործնականապես անմիջականորեն իրագործվող խնդիր, այն ժամանակ մենք լիբերալ բուրժուազիայի հետ կխոսենք այդ մասին և արդեն կխոսենք, իհարկե, լուրջ, գործարար ձևով: Քանի դեռ ինքնակալական բյուրոկրատիան ամուր նստած է իր գահի վրա, իսկ հանրապետությունը—միայն միքանի հազար կամ թեկուզ տասնյակ հազար գիտակից հեղափոխականների գլխում, բուրժուական դեմոկրատիայի ամենահանդիսավոր միացումը վոչ մի քաղաքական նշանակություն չունի: Այդ մեզ և պրոլետարիատի ամենաառաջավոր կադրերին միայն իլյուզիաներով կհամակեր, որ շատ թանկ կնստեր պրոլետարիատին: Մեզ համար հենց հեղափոխության շահերի տեսակետից շատ ավելի էական և անպայման ստիպողական կլիներ ջանալ լիբերալ—դեմոկրատական բուրժուազիայի ազդեցիկ խմբերից և կուսակցություններից այնպիսի ռեալ աջակցություն ստանալ, ինչպես բանվորական ժողովների համար շենքեր տրամադրելը, նյութական միջոցներով օգնելը, առաջավոր լիբերալ տարրերի ազդեցությունը մատչելի բյուրոկրատական վոլոստների և պաշտոնական հասարակական հիմնարկների վրա պլանաչափ ներգործությունը մեր ագիտացիոն պահանջների և նպատակների համար նպաստավոր իմաստով և վերջապես նրանց ազդեցիկ և հասարակական կապերի, անձնական ծանոթությունների և սոցիալական նշանակության սիստեմատիկ օգտագործումն այնպիսի միջավայրում՝ այդ միջավայրը քաղաքականապես լուսավորելու, նրա մեջ իր քաղաքացիական պարտքի և իր պարտավորությունների գիտակցությունն արթնացնելու, դեպի իր ժողովուրդը և նրա ազատագրական շարժումը:

...Հետևաբար մեզ մոտ Պետական Դումայի կյանքի կոչվելով առաջին անգամ հող է ստեղծվում իսկապես լայն քաղաքական պայքարի համար: Արդեն մենակ այս պատճառով մենք չենք կարող ամբողջովին բացասաբար, այսինքն՝ զուտ նիհիլիստորեն վերաբերվել Պետական Դումային: Իհարկե, մենք պարտավոր ենք քննադատորեն վերաբերվել նրա գործողություններին և քննադատության նյութի պակասություն հավանորեն չի լինի: Բայց մենք մեծագույն և կոպիտ սխալ արած կլինեյինք, յեթե հենց նրա աշխարհ գալու ժամանակ, դեռ ավելի առաջ, նախքան նա կկարողանար մի բանով իրեն յերևան բերել, նրան թշնամական հանդիպում կազմակերպեյինք բանվորական մասսաների կողմից: Դեռ ավելի վատ, մենք մեզ կխայտառակեյինք և կվարկաբեկեյինք պրոլետարիատի մեր յետևից գնացող շերտերին, յեթե Դումայի կյանքի կոչվելը դիմավորեյինք ցույցերով և «քը՛ս, բանեք դրան» բացականչություններով: Հասկանալի յե, որ ռեակցիոներները սրանից մեզ շնոր-

հակալ կլինեյին մեր «սկզբունքային տոկունության «այսպիսի ակտի համար»... (եջ 171, 174, 189, 190, 191):

7. ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

վոչ «թեր», վոչ էլ «դեմ»

(Ակիմովի զեկուցումը Միացուցիչ համագումարում:
(Протоколы объедииительного съезда, стр. 250).

Ընկերնե՛ր, մենք այժմ ապրում ենք այնպիսի ժամանակ, վոր նախորդ սերունդները նախապատրաստել են մի ամբողջ դարի ընթացքում, մի ժամանակ, վոր չափազանց ծանր է, վորպեսզի կարող լինենք վերանալ կոնկրետ պարագայից և լիովին հանգիստ, օբյեկտիվ վերաբերմունք հաստատենք դեպի անցքերը և կուսակցության խնդիրները: Այնուամենայնիվ մենք պետք է ամեն ջանք գործադրենք, վորպեսզի անաչառ, օբյեկտիվ կերպով դիտենք Ռուսաստանի շարժման ընդհանուր ընթացքը, մենք պետք է դիմենք Արևմտյան Եվրոպայի պատմությանը և այնտեղի հեղափոխությունները համեմատենք այն հեղափոխության հետ, վոր այժմ մենք ապրում ենք: Մեզ, սոցիալ—դեմոկրատներիս, հեղափոխությունների մեծամասնությունը հիշեցնում է ձկնորսի և ձկան հեքիաթը: Սկզբում գալիս է վերելքը, շարժումն աճում է, ուժերը մեծանում են, վերջապես վրա յե հասնում ապստամբությունը, իսկ դրա յետևից անխուսափելիորեն գալիս է կոպիտ, անխնա ռեակցիան... Դուրս է գալիս, վոր հեղափոխությունը բանվորին վոչինչ չի տալիս, և մենք զարմացած մնում ենք կոտրած տաշտակի մոտ: Ջարդված են բանվոր դասակարգի ամենալավ ուժերը, ամենաինտելիգենտ տարրերը: Այդպես էլ յեղավ մեզ մոտ: Մենք նախապատրաստեցինք գիտակից բանվորներին: Այժմ նրանք հայտարարում են, վոր այլևս հին կարգը չեն ուզում: Յերկար պրոպագանդից, ագիտացիայից հետո ապստամբությունը վտանգի յե յենթարկում շարժման ամբողջ բախտը: Մենք ասում ենք, վոր հեղափոխության այդպիսի ընթացքն անխուսափելի յե, նահանջն անհնար է՝ բանվորը բունտ է անում, կառավարությունը խեղդում է, իսկ լիբերալները դավաճանում են հեղափոխությանը... Ապստամբությո՛ւն, ուրիշ յելք չկա: Բայց մենք սխալվում ենք: Մեր կենտրոնական սխալն այն է, վոր մենք չենք հաշվառում ուժերի ամբողջ կոմպլեքսը: Պայքարի յելքը կախված է վոչ միայն պրոլետարիատից, այլև ուրիշ դասակարգերից ու կուսակցություններից: Մենք պետք է հաշվի առնենք այս հանգամանքը, այս պատճառով էլ մենք պետք է սահմանափակենք մեր պահանջները, ռեալ դարձնենք այն: Մեր պայքարը հատկապես սոցիալիստական չէ, հատկապես պրոլետարական չէ: Այդ պայքարին իրավունք ունեն մասնակցելու նաև այլ ուժեր: Պետական դուման հանդիսանում է այդպիսի ուժերի յելույթի մի մոմենտ: Դուման ավելի լավ դուրս յեկավ, քան մենք սպասում եյինք: Դումայի մեծամասնությունն առաջադիմական է, նա այնպիսի պահանջներ է առաջադրում, վոր մենք չեյինք սպասում. նա համաձայնվում է ընդհանուր և այլն ընտրական իրավունքին, ազատությունների պաշտպանությանը: Դումայի առաջ յերկու հնարավոր ճանապարհ կա:

Եթե Դուման կատարի իր խոստումները, ապա մեզ համար ապահովված կլինեն մեր նվազագույն պահանջները՝ ժողովվելու, խոսելու և այլն ազատությունը: Այն ժամանակ մենք չպետք է ապստամբության պատրաստվենք, մենք պետք է վոր ամրացնենք մեր դիրքը և նախանշն անհնար դարձնենք: Ապստամբություն անելը կամ նույնիսկ դրա համար պրոպագանդ անելն այս դեպքում ուղղակի վնասակար կլիներ: *Մեր դեմ վոտքի կկանգնեյին այդ նույն Դոլգորուկովը, այդ նույն լիբերալները, չխոսելով արդեն ռեակցիոներների մասին: Մենք մեր դեմ կունենայինք այդ ուժերի ամբողջ կոմպլեքսը և կճնշվեյինք: Բայց հնարավոր է յերկրորդ ուղին՝ կառավարությունը կարող է ցրել Դուման:* Նույնիսկ այս դեպքում ել յես արտահայտվում եմ զինված ապստամբության դեմ: *Մեր կառավարությունը յերկրում արդեն վաղուց զրկվել է տնտեսական արմատներից, իսկ Դուման ցրելու դեպքում նա կկորցներ նաև բոլոր բարոյական արմատները: Այն ժամանակ Վիտտեն ել զինված ապստամբության կողմնակից կդառնա, բայց միայն նրա համար, վոր առաջ բերի և ճնշի այն, վոր դարձյալ վերադառնա դեպի ասիական բռնակալությունը: Արդյոք կառավարությունն անձնատուր կլինի՞ Դումային, թե անձնատուր չի լինի, այդ միևնույն է, հարկավոր չէ նրան ձեռք տալ,* նա ինքը կկործանվի, ինքը կփլչի: *Պլեխանովը մեզ ասում եր, վոր կառավարությունը նստած է միայն սվինների վրա և վոր հարկավոր է ճնշե՛լ, շարժե՛լ այդ սվինները, ինքնակալության այդ միակ հենարանը... Չե՛ վոր սվինների վրա յերկար նստել չի կարելի... (ծիծաղ):*

Ս. ԿՈՒԶՆԵՑՈՎ

ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Դասախոսություն)

I

Կուսակցության առաջին իդեական մարտերը, նրա ամենավաղ յելույթները նվիրված եյին նարոդնիկության դեմ մղվող պայքարին: Այդ պայքարի հիմնական խնդիրն եր ցույց տալ, վոր Ռուսաստանի հասարակական – տնտեսական կարգի իշխող ձևը կապիտալիզմն է դարձել, վորի զարգացումը ստեղծել է հասարակական նոր հակասություններ, հասարակական դասակարգերի նոր կապիտալիստական խմբավորում, վոր դրա շնորհիվ պրոլետարիատի դասակարգային պայքարը դառնում է հեղափոխական շարժման հիմնական, վճռական գործոնը, առաջիկա հեղափոխության հիմնական շարժիչ ուժը: Զատել պրոլետարիատին իբրև միակ մինչև վերջ հետևողական հեղափոխական դասակարգի, կազմակերպել նրա ավանգարդն ինքնուրույն քաղաքական կուսակցության մեջ, հիմնավորել պրոլետարիատի հեգեմոնիայի անհրաժեշտությունն առաջիկա դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող հետագա պայքարի համար, պաշտպանել այդ իդեան ռեվիզիոնիզմի և ոպորտունիզմի բոլոր այլատեսակությունների դեմ մղվող պայքարում—այս եր հիմնականում բոլշևիզմի առաջնահերթ խնդիրը:

Յերկրորդ հիմնական խնդիրը, վոր սերտ կապված եր պրոլետարիատի հեգեմոնիայի իդեայի հետ, պրոլետարիատի դաշնակցների հարցն եր, հիմնականում—պրոլետարիատի վերաբերմունքի հարցը դեպի գյուղացիությունը: Այս հարցը հսկայական նշանակություն ուներ հեղափոխության հետագա բախտի համար: 1905 *թ. բուրժուական հեղափոխության առանձնահատկությունն այն եր, վոր դա պրոլետարիատի ղեկավարությամբ կատարված գյուղացիական բուրժուական հեղափոխություն եր: Հեղափոխության այդ գլխավոր առանձնահատկությունը չհասկանալը գյուղացիության – մասսայական հեղափոխական շարժման անտեսումը, բանվորների և գյուղացիների դաշինքի, իբրև հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու հիմնական պայմանի, պրոլետարիատի հեգեմոնիայի իսկական իրականացման պայմանի դեմ մղվող պայքարը, հատուկ պայծառությամբ մերկացրին մենշևիզմի հակահեղափոխական եյությունը: Այս հարցին վերաբերվող տարամիտումն այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական և ոպորտունիստական թևի հիմնական ջրբաժան գիծն եր:*

Բոլշևիզմի ագրարային ծրագիրը ձևակերպելով, անհրաժեշտ էր նախ՝ ռևիզիոնիզմի դեմ մղվող պայքարում պաշտպանել և զարգացնել հեղափոխական մարքսիզմի ագրարային թեորիայի ընդհանուր հիմքերը, վորոնք վորոշում են գյուղատնտեսության զարգացման միտումները կապիտալիստական հասարակության մեջ և այն վերախմբավորումները դասակարգերի հարաբերակցության մեջ, վորոնք առեղծվում են գյուղում կապիտալիզմի զարգացմամբ: Յերկրորդ՝ գյուղի էկոնոմիկայի կոնկրետ հետազոտության հիմքի վրա պարզել կապիտալիզմի զարգացման աստիճանը գյուղում, ճորտատիրության տնտեսական արմատները և ճորտատիրական սիստեմի մնացորդների տեսակարար կշիռը ռուսական գյուղի էկոնոմիկայում, այլ խոսքերով ասած՝ պարզել ագրարային հեղաշրջման տնտեսական հիմքերը: Յերրորդ՝ ձևակերպել սոցիալ-դեմոկրատական քաղաքականության սկզբունքային հիմքերը գյուղացիության վերաբերմամբ: Յեվ չորրորդ՝ վերջապես նշել ագրարային հարաբերությունների հեղափոխական վերակազմության այնպիսի կոնկրետ պահանջները, վորոնք ամենից ավելի կնպաստեյին գյուղացիության հեղափոխական շարժման ծավալմանն ընդդեմ ճորտատիրության, գյուղացիական մասսաների դեմոկրատական հեղափոխությանը միանալուն:

Այս խնդիրները հիմնականում կատարվեցին Լենինի մի շարք աշխատությունների մեջ ագրարային ծրագրի մշակման պրոցեսում մինչև յերկրորդ համագումարը:

Ագրարային հեղաշրջման անխուսափելիության ճանաչումը, նրա իբրև բուրժուա-դեմոկրատական հեղաշրջման հասարակական-տնտեսական նշանակության վորոշումը, մի հեղաշրջում, վոր ուղղված է ճորտատիրության մնացորդների դեմ, և իբրև հետևություն դրանից՝ լիակատար և վճռական աջակցություն այն պայքարին, վոր գյուղացիությունը մղում է ճորտատիրության դեմ,—այս յելման սկզբունքները կազմում եյին 1903 թ. ագրարային ծրագրի, այսպես կոչված կտորների (отрезки) ծրագրի հիմքը:

Ռուսաստանի էկոնոմիկայի թեորիական ուսումնասիրության հիման վրա բոլշևիզմը վորոշեց առաջիկա ագրարային հեղաշրջման անխուսափելիությունն ու բնույթը և հաստատեց իր քաղաքականության ընդհանուր հիմքերը գյուղացիության վերաբերմամբ: Բայց այդ հիման վրա, առանց համապատասխան փորձի գյուղացիական շարժման բնույթի և՛ թափի վերաբերյալ, առանց բացահայտ դասակարգային պայքարի փորձով դասակարգերի դիրքի ստուգման անհնար եր միանգամից վորոշել ագրարային հարաբերությունների կապիտալիստական բեկման կոնկրետ—հնարավոր ձևերը, կապիտալիստական ագրարային զարգացման այն ուղիները կամ մեթոդները, վորոնց համար պայքարում եյին մի կողմից՝ բուրժուազիան և մյուս կողմից՝ կալվածատերերը:

Այս պատճառով բոլշևիզմը չեր կարող մի անգամից հանդես գալ գյուղացիության հեղափոխական շարժման լիակատար ծավալման ագրարային ծրագրով, վորը դառնար գյուղացիական հեղափոխության լոզունգը: Միայն գյուղացիության հեղափոխական շարժման սկսվելու հետ բոլշևիզմը դրեց և լուծեց յերկրորդ խնդիրը, կտորների ծրագրից

անցնելով կալվածատիրական հողի կոնֆիսկացիայի և հողի ազգայնացման ծրագրին:

II. ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՎ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գյուղի հսկայական հետամնացությունը, տնտեսական ստրկացման (кабала) ամեն տեսակ ձևերի բարդ հյուսումը, զուտ-կապիտալիստական շահագործման մթագնումը միջնադարյան ձևերով, դասակարգային հակասությունների թերի զարգացումը գյուղացիության ներսում, մանր և մանրագույն արտադրության գերիշխումը,—այս բոլորը հատուկ բարդություն և դժվարություն եր հաղորդում ագրարային հարցին: «... Դուք առաջուց պետք է իմանայիք,—գրում եր Լենինը,—վոր կանգնում եք վոչ թե հասարակական պրոգրեսի բոլոր ուժերով ուղղված ու հարթված լայն ճանապարհի վրա, այլ նեղ փողոցների և խուլ անկյունների շավիղների վրա, վորոնցից յելք կա, բայց ուղիղ, հասարակ և թեթև յելք վոչ դուք, վոչ մենք, վոչ էլ մի ուրիշը յերբեք չի գտնի...»[1]: Այս առանձնահատկությունների շնորհիվ ռեակցիոն բուրժուական և մանր բուրժուական կուսակցությունները փորձել են և փորձում են օգտագործել գլխավորապես ագրարային հարաբերությունների
ասպարեզը հեղափոխական մարքսիզմի, բոլշևիզմի դեմ մղվող պայ-
քարում, հենց այս պատճառով, ագրարային հարաբերությունների աս-
պարեզը հատկապես նպաստավոր միջավայր է ներկայացնում ռևիզիո-
նիստական և օպորտունիստական թեորիաների տարածման համար:

Ագրարային ռևիզիոնիզմի հիմնական սկզբունքները, վորը (ռևիզիոնիզմը) հանդես յեկավ 90-ական թ. թ. յերկրորդ կեսում Արևմտյան Յեվրոպայում և արագորեն տարածվեց ռուսական լեգալ մարքսիստների, նարոդնիկների և եսերների մեջ, հանգում եյին այն բանին,
վոր ապացուցվում եյին գյուղատնտեսության զարգացման հատուկ ու-
ղիները կապիտալիզմի ժամանակ, ուղիներ, վոր չեյին զուգադիպում
կապիտալիզմի զարգացման ընդհանուր օրենքներին, այլ հակադիր
եյին դրանց: Ռևիզիոնիզմն ամենից առաջ հաստատեց գյուղատնտե-
սության մեջ մի հատուկ, բնական օրենքի առկայությունը, հողի այս-
պես կոչված նվազող պտղաբերության օրենքի առկայությունը, վորը
բնական, անհաղթահարելի մի արգելք է հողագործության մեջ կապի-
տալիզմի զարգացման համար: Այդ օրենքի համաձայն աշխատանքի և
կապիտալի ամեն տեսակ լրացուցիչ ներդրում հողի մեջ պարտադրաբար
ուղեկցվում է վոչ թե արդյունահանվող արդյունքի համապատասխան,
այլ նվազող քանակությամբ, վորի շնորհիվ կապիտալի ներդրումը հո-
ղագործության մեջ հատկապես անօգտակար է դառնում և կապիտալը
չի հոսում դեպի գյուղատնտեսություն: Յերկրորդ՝ մանր տնտեսու-
թյունը վոչ միայն չի զիջում խոշորին, այլ, ընդհակառակը, մի շարք
առավելություններ ունի խոշորի հանդեպ, վորի շնորհիվ արտադրու-
թյան համակենտրոնացման պրոցեսները, մանր արտադրության դուրս
մղումը խոշորի կողմից և այլն, վոր նկատվում են արդյունաբերության

[1]) Ленин—т.IX (ամենուրեք IX հատորի 1923 թ. հրատ. և մատնանշված) «Аграрная программа русской с. д.», стр. 300.

մեջ, գյուղատնտեսության ասպարեզում տեղի չունեն։ Յերրորդ՝ ռեվիզիոնիզմը հաստատում է զարգացման սկզբունքորեն այլ ուղի—գյուղատնտեսության վոչ-կապիտալիստական եվոլյուցիայի օրենք կապիտալիզմի ժամանակ։ Կապիտալիստական խոշոր հողագործությունը, պնդում են նրանք, հետագա զարգացման հետ քայքայվում, մանրանում է, իր տեղը զիջելով մանր աշխատանքային հողագործությանը։ Զարգացման օրենքն է՝ խոշորից դեպի մանր տնտեսություն։ Այստեղից բղխում է այն, վոր ժխտվում է մանր գյուղացիական տնտեսության քայքայումը և գյուղացիության շերտավորումը կապիտալիզմի գյուղ թափանցելու շնորհիվ, ժխտվում է լայն գյուղացիական մասսաների աճող պրոլետարացումը և դասակարգային հակասությունների աճումը գյուղում։

Պաշտպանելով մանր արտադրողի իլլյուզիաները մանր տնտեսության զարգացման հեռանկարների մասին, կապիտալիզմի ժամանակ գյուղացիական մասսաների բարեկեցության աճման հնարավորությունների մասին, ռեվիզիոնիզմը հանգում եր այն բանին, վոր ժխտում եր քայքայվող գյուղացիության մասսաների պրոլետարիատի կողմն անցնելու օբյեկտիվ պայմանների առկայությունը, նրան հեռացնում եր պրոլետարական դասակարգային պայքարի ճամբարին միանալուց։ Ռեվիզիոնիզմի իդեաներն արտացոլում եյին բուրժուազիայի ձգտումը հանձինս մանր հողային սեփականատերերի պատվար գտնել պրոլետարական վտանգի դեմ, պաշտպաններ գտնել ընդհանրապես բուրժուական սեփականության համար։

Ագրարային հարցի մարքսիստական թեորիայի պաշտպանությանը և հետագա մշակմանը նվիրված իր մի շարք աշխատություններում Լենինը հսկայական փաստական նյութի ուսումնասիրության հիման վրա մերկացնում է, թե ինչքան սխալ, իրականության հետ ինչպիսի հակասության մեջ են գտնվում ռեվիզիոնիզմի թեորեաները։ Լենինը ցույց է տալիս, վոր նվազող պտղաբերության տխրահռչակ օրենքի հիշատակությունները հանդիսանում են բուրժուական քաղաքատնտեսության սովորական հնարները, վորը հասարակական հարաբերությունները ծածկում է «հավիտենական օրենքներով»։ Կապիտալիզմի համեմատաբար թույլ զարգացումը գյուղատնտեսության մեջ բացատրվում է վոչ թե նվազ պտղաբերության օրենքով կամ վորևէ այլ բնական օրենքով, այլ հողի մասնավոր սեփականության մոնոպոլիայի գոյությամբ, դրա հետևանքով հողային ռենտայի և հողի գների հսկայական աճումով, վորի շնորհիվ կասեցվում է կապիտալների հոսումը դեպի հողագործություն։ Իսկ աշխատանքի և կապիտալի լրացուցիչ ներդրումների արտադրողականությունը սերտ կապված է հողագործական տեխնիկայի կացության հետ։ «Տեխնիկայի անփոփոխ կացությունը,—մատնանշում է Լենինը,—համեմատաբար շատ նեղ սահմաններ է դնում աշխատանքի և կապիտալի լրացուցիչ ներդրումների առաջ»։ Բայց քիչ-շատ նշանավոր չափերով աշխատանքի և կապիտալի լրացուցիչ ներդրումները պարտադրաբար յենթադրում են արտադրության յեղանակների փոփոխություն և տեխնիկայի վերափոխություն։ «Հողի մեջ ներդրվող կապիտալի քանակությունը նշանավոր չափերով մեծացնելու համար հարկավոր է հնարել նոր մեքենաներ, դաշտավարության նոր սիստեմներ,

անասուններ պահելու, արդյունքներ փոխադրելու նոր յեղանակներ և այլն և այլն»[1])։ Տեխնիկայի այսպիսի փոփոխությունը տանում է դեպի հողագործության արտադրողականության վոչ թե նվազումը, այլ նշանավոր աճումը, այսպիսով ակնառու կերպով հերքելով հողագործության մեջ նվազող պտղաբերության հատուկ օրենքի գոյությունը։

Ընդունել, վոր գյուղատնտեսության զարգացումն իր ամբողջ հետամնացությամբ և բարդությամբ կապիտալիստական ձևով է ընթանում, նշանակում է միաժամանակ ընդունել, վոր կապիտալիզմի այդ զարգացումը գյուղատնտեսության մեջ, ինչպես վոր արդյունաբերության մեջ, առաջացնում է պրոլետարիատի դասակարգային պայքար բուրժուազիայի դեմ, մանր նահապետական տնտեսության քայքայում, դասակարգային հակասությունների զարգացում և աճում, դասակարգային պայքարի սրում գյուղում, քայքայվող գյուղացիական մասսաների պրոլետարիատին միանալու անհրաժեշտություն։ Հողագործության վոչ կապիտալիստական եվոլյուցիայի թեորիայով կապիտալիզմի ջատագովները և մանր բուրժուազիայի իդեոլոգները փորձում եյին թեորիական զենք գտնել դասակարգային պայքարի իդեաների, սոցիալական հեղափոխության իդեաների գյուղ թափանցելու դեմ։ «Կապիտալիստական եվոլյուցիայի թեորիան,—ասում է Լենինը,—վոր պաշտպանում է պ. Գիմերը (Սուխանովը։—Ս. Կ.) ըստ էության բուրժուական պրոֆեսորների, բուրժուական դեմոկրատների և ամբողջ աշխարհի բանվորական շարժման մեջ յեղած ոպորտունիստների, այսինքն՝ այդ նույն բուրժուական դեմոկրատների նորագույն այլասեսակության, հսկայական մեծամասնության թեորիան է։ Ջափազանցություն չի լինի, յեթե ասենք, վոր այդ թեորիան ամբողջ բուրժուական հասարակության իլլյուզիան, ցնորքը, ինքնախաբեությունն է»[2])։

Իբրև հակադրություն ռեվիզիոնիստների պնդումների Լենինն իր մի շարք ամենամանրամասն հետազոտություններում ցույց է տալիս, թե ինչպես տարբեր յերկրներում—Դանիայում, Ամերիկայում, Գերմանիայում—տնտեսական պայմանների, հողատիրության ձևերի և չափերի, դաշտավարության սիստեմների և մյուս ազգային ու տեղական ագրիկուլտուրային առանձնահատկությունների ամբողջ բազմազանության ժամանակ կատարվում է կապիտալիզմի զարգացման պրոցեսը հողագործության մեջ։ Վարձու աշխատանքի աճող գործադրումը, մանր արտադրողի դուրս մղումն իբրև ընդհանուր պրոցես ընթանում է այս բոլոր առանձնահատկությունների միջով։ Իր հետազոտությունների հետևությունները կապիտալիզմի զարգացման օրենքների մասին հողագործության մեջ Լենինը հանրագումարի յե բերել «Նոր տվյալներ կապիտալիզմի զարգացման մասին հողագործության մեջ» աշխատության մեջ։

«...Հողագործության մեջ ձեռքի աշխատանքն անչափ ավելի դե-

[1]) Ленин—т. IX, «Г. г. «Критики в аграрном вопросе». стр. 55.

[2]) Ленин—т. IX, «Новые данные о законах развития капитализма в земледелии, стр. 198.

զիջող է մեքենայի աշխատանքի արդյունաբերության համեմատությամբ: Բայց մեքենան անշեղ առաջ է գնում, բարձրացնելով տնտեսության տեխնիկան, ավելի խոշոր, ավելի կապիտալիստական դարձնելով այն...»:

Կապիտալիզմի գլխավոր նշանը և ցուցանիշը հողագործության մեջ վարձու աշխատանքն է: Վարձու աշխատանքի զարգացումը, ինչպես և մեքենաների գործադրման աճումը տեսնում ենք յերկրի բոլոր ռայոններում, գյուղատնտեսության բոլոր ճյուղերում... Ուժեղանում և սրվում են դասակարգային հակասությունները...

Կապիտալիզմն աճում է վոչ միայն տարածությամբ խոշոր տնտեսությունների զարգացման արագացման միջոցով եքստենսիվ ռայոններում, այլև ըստ չափի ավելի խոշոր արտադրությունների, ավելի կապիտալիստական տնտեսությունների ստեղծման միջոցով ավելի մանր հողամասերի վրա ինտենսիվ ռայոններում...

Իվերջո արտադրության համակենտրոնացումը խոշոր տնտեսությունների մեջ իրոք ավելի ուժեղ է, մանր արտադրության դուրս մղումն իրոք ավելի հեռուն և ավելի խորն է գնում, քան պատկերացնում են սովորական տվյալները զանազան չափի ձևերի մասին ըստ հողի տարածության: Առաջ է ընթանում մանր հողագործության եքսպրոպրիացիան:

Ընդհանուր առմամբ և ամբողջությամբ միևնույն ժամանակամիջոցի միանման տվյալներն արդյունաբերության և հողագործության վերաբերյալ մեզ ցույց են տալիս, յերկրորդի անհամեմատ ավելի մեծ հետամնացության ժամանակ, եվոլյուցիայի օրենքների նշանավոր միատեսակություն, մանր արտադրության դուրս մղում և այստեղ և այնտեղ»:[1]

Մանր արտադրության դուրս մղումը տանում է դեպի գյուղացիության քայքայումը, դեպի նրա մասսայական պրոլետարացումը, այդ դուրս մղումը վերարտադրում է կապիտալիզմի հակասություններն ավելի լայն հիմքի վրա, տանում է դեպի այն, վոր մանր գյուղացիության դրությունը պրոլետարիատի դասակարգային պայքարից դուրս ընդդեմ ամբողջ կապիտալիստական կարգի դառնում է անելանելի և անհույս:

Հիմնականում այս են հեղափոխական մարքսիզմի—լենինիզմի հետևությունները կապիտալիզմի զարգացման օրենքների մասին հողագործության մեջ: Միայն այս հեղափոխական թեորիայի հիման վրա կարելի յեր ըմբռնել հետռեֆորմյան գյուղի զարգացման բարդ իրականությունը, վորտեղ բարդ կերպով հյուսված եյին և պայքարում եյին զանազան տնտեսական ձևերը և կապիտալիստական ու մինչկապիտալիստական շահագործման ամեն տեսակ ձևերը:

Այս թեորիան կուսակցությանը բանալի յեր տալիս՝ հասկանալու գյուղացիության իբրև մանր արտադրողի յերկակի բնույթը, գյուղացիություն, վորը տատանվում է բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, հասկանալ գյուղացիության ագրարային պահանջների բուրժուական, եյությունը, վոր նարոդնիկները և եսերները սոցիալիզացիայի, աշխատանքային սկզբունքի տեղ եյին ընդունում և այլն:

---

[1]) Ленин—т. IX. «Новые данные о законах развития капитализма в земледелии, стр. 198.

Այս թեորյան կուսակցությանը հնարավորություն եր տալիս ամենից ավելի արմատական ագրարային պահանջներ առաջ քաշել գյուղացիության օգտին, վոչ մի քայլ չշեղվելով պրոլետարիատի տեսակետից, չկանգնելով մանր գյուղացիության տեսակետի վրա, ընդհակառակը, դրանով աջակցելով գյուղական չքավորների անցմանը պրոլետարիատի կողմը:

Ագրարային ծրագրի կոնկրետ պահանջները Լենինը ձևակերպեց գյուղի տնտեսական կյանքի բազմակողմանի հետազոտության հիման վրա՝ կապված Ռուսաստանի կապիտալիզմի զարգացման ընդհանուր պատկերի հետ: Իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» կլասիկ աշխատության մեջ, վոր լույս տեսավ 1899 թ., Լենինն ամենահարուստ վիճակագրական նյութի հիման վրա տալիս է ռուսական կապիտալիզմի զարգացման, ներքին շուկայի կազման պրոցեսի ամբողջական պատկերը կապիտալիզմի թափանցման հիմքի վրա ժողովրդական կյանքի բոլոր կողմերը: Հետռեֆորմյան գյուղի զարգացումը բնութագրվում է յերկու հիմնական մոմենտով: Մի կողմից՝ կապիտալիզմի զարգացումն ուղեկցվում է այն բանով, վոր գյուղացիությունը բաժանվում է գյուղական բուրժուազիայի և վարձու բանվորների, մյուս կողմից՝ այս պրոցեսը տեղի յե ունենում հին ճորտատիրական հիմնարկների շրջանակներում, յերբ առկա յեն ճորտատիրական շահագործման և ստրկացման ամենահետամնաց ձևերը, ճորտատիրության նշանավոր մնացորդները գյուղացիական (միջնադարյան բաժնեհողային հողատիրությունը, համայնքը) և կալվածատիրական տնտեսություններում:

Այս յերկու հիմնական մոմենտների—կապիտալիզմի և ճորտատիրության հարաբերությունը գյուղում—կոնկրետ անալիզը վճռական նշանակություն ունեցավ ինչպես նարոդնիկության և մանր բուրժուական սոցիալիզմի բոլոր այլատեսակությունների դեմ մղվող պայքարի համար, վորոնք ժխտում կամ մթագնում եյին գյուղի կապիտալիստական զարգացման պրոցեսը, այնպես էլ իրեն օրթոդոքսալ—մարքսիստական ձևացնող այս նույն շաբլոն հայացքի դեմ մղվող պայքարի համար, վորը յենթադրում եր թե սոցիալ—դեմոկրատիան պետք է բոլոր պայմաններում պաշտպանի ամեն տեսակի խոշոր տնտեսություն ընդդեմ մանրի, և գյուղացիության մեջ չեր տեսնում այն հեղափոխական ուժը, վորն ընդունակ է հեղափոխականորեն վերափոխել մեր հետամնաց ագրարային հարաբերությունները բուրժուական ձևով:

Կապիտալիզմի զարգացումը հեռու յեր տարել գյուղացիության դասակարգային դիֆերենցիացիայի պրոցեսը: Գյուղացիական ծխերի մեկ հինգերորդ մասն իր ձեռքում եր կենտրոնացրել ամբողջ հողագործական արտադրության կեսից ավելին: Գյուղացիական ծխերի մոտ կեսը (ձի չունեցող և մեկ ձի ունեցողների մեծ մասը) կարելի յե հաշվել գյուղական պրոլետարիատի մեջ, հողաբաժին ունեցող վարձու բանվորների դասակարգի մեջ. նրանք քաղաքային արդյունաբերական պրոլետարիատի բնական դաշնակիցն են հանդիսանում: Պրոլետարիատի դասակարգային պայքարի սոցիալական բազան շատ ավելի լայն է, պրոլետարիատի տեսակարար կշիռը շատ ավելի մեծ է, քան կարելի յե յենթադրել, հիմնվելով միմիայն վիճակագրական տվյալների վրա ֆաբրիկա—գործարանային պրոլետարիատի թվի մասին:

Գյուղացիական բուրժուազիան գյուղացիական տնտեսության ընդհանուր միահամուռության մեջ, գյուղացիությանը պատկանող արտադրության միջոցների ընդհանուր գումարում, գյուղացիության կողմից արտադրվող հողագործական արդյունքների ընդհանուր քանակության մեջ ունեցած իր նշանակությամբ անպայման գերիշխում է: Բայց այնուամենայնիվ գյուղի իսկական տերը հանդիսանում է վոչ թե գյուղացիական բուրժուազիան, այլ վաշխառուն և կալվածատերը:

Հետռեֆորմյան կալվածատիրական տնտեսության տնտեսական սիստեմը Լենինը բնութագրում է իբրև կոռային-աշխատավճար սիստեմի միացում կապիտալիստականի հետ: Աշխատավճար սիստեմի եյությունն արտահայտվում է այն բանով, վոր հարևան գյուղացիներն իրենց գյուղացիական ինվենտարով մշակում են կալվածատիրական հողը կիսովի կամ այն պայմանով, վոր կալվածատերը նրանց տա գյուղացիական տնտեսության համար անհրաժեշտ մի պատառ հող, ջրատեղ, արոտ վաշխառվական ստրկացուցիչ պայմաններով: Լենինն աշխատավճարները քննում է իբրև կոռի ուղղակի և անմիջական մնացորդ, իբրև անցում կոռից դեպի կապիտալիզմ: Աշխատավճարների սիստեմն անխուսափելիորեն յենթադրում է ստրկացուցիչ հարաբերություններ ազատ վարձման փոխարեն: Այդ ժամանակ կալվածատերը հանդես է գալիս իբրև վաշխառու, վորն օգտվում է հարևան գյուղացու կարիքից և նրա աշխատանքը ձեռք է բերում չնչին վարձով: Կալվածատիրական հողատիրության ճորտատիրական բնույթ—կալվածատիրական հսկայական լատիֆունդիաներ, վորոնց կապիտալիստական մշակումն անօգտակար է. գյուղացիական սակավահողություն, վորի ժամանակ վողորմելի հողաբաժինը կապելով գյուղացուն հարևան կալվածատիրոջ հետ, միաժամանակ նրան հնարավորություն չտալով իր տնտեսության յեկամուտներով ապրել, դրա փոխարեն թույլ եր տալիս գյուղացու աշխատանքի վարձատրությունը ցածրացնել ազատ վարձու աշխատանքի վարձատրության ամենանվազագույն սահմանից էլ ավելի և վերջապես կտրված հողերի միջոցով կալվածատիրական տնտեսավարության յեղանակ,—սրանք են աշխատավճար սիստեմի, հետռեֆորմյան ճորտատիրության այս ամենից ավելի վառ արտահայտության բազան: 1861 թ. ռեֆորմը գյուղացիներին «ազատագրեց» վոչ միայն ճորտական կախումից, այլև գյուղացիական տնտեսության համար անհրաժեշտ ամենալավ հողերից, ինչպես՝ ջրատեղից, արոտից, անտառից և այլն: «Առանց այդ հողերի,—ասում է Լենինը,—գյուղացիները բոլորովին ի վիճակի չեյին ինքուրույն տնտեսություն վարել, և այդպիսով կալվածատերերը հնարավորություն ունեյին շարունակել տնտեսության հին սիստեմն աշխատավճարների (отработки) ձևով»[1]: Ճորտատիրության այս մնացորդներն արգելակում են կապիտալիզմի զարգացումը գյուղում, կասեցնում են արտադրողական ուժերի աճումը և ծանր կերպով ճնշում են վողջ գյուղացիությանն իր ամբողջությամբ:

Ագրարային հարաբերությունների կապիտալիստական բեկման անհրաժեշտության ընդունում, առաջիկա ագրարային հեղաշրջման բնութագրում իբրև բուրժուական հեղաշրջման, վոր ուղղված է ճորտատիրության մնացորդների դեմ, և վերջապես պրոլետարիատի հեղափոխական կուսակցության համար ագրարային հեղաշրջման խնդիրները հեղափոխական ճանապարհով լուծելուն ձգտելու անհրաժեշտություն,—սրանք են այն հիմնական հետևությունները, վոր բղխում են ագրարային հարաբերությունների լենինյան անալիզից: «Հետևյալ յերեք դրությունը,—գրում եր Լենինը,—միշտ պաշտպանել են ռուսական սոցիալ-դեմոկրատներն իրենց կուսակցության հենց ծագումից մինչև այժմ: Առաջին: Ագրարային հեղաշրջումն անխուսափելիորեն կկազմի Ռուսաստանի դեմոկրատական հեղաշրջման մի մասը. գյուղի ճորտատիրական ստրկացուցիչ հարաբերություններից փրկվելը կլինի այդ հեղաշրջման բովանդակությունը: Յերկրորդ. առաջիկա ագրարային հեղաշրջումն իր հասարակական-տնտեսական նշանակությամբ կլինի բուրժուա-դեմոկրատական հեղաշրջում. նա չի թուլացնի, այլ կուժեղացնի կապիտալիզմի և կապիտալիստական դասակարգային հակասությունների զարգացումը: Յերրորդ. սոցիալ-դեմոկրատիան բոլոր հիմունքներն ունի ամենավճռական ձևով աջակցել այդ հեղաշրջմանը, ընդ վորում նշելով այս կամ այն մերձագույն խնդիրները, բայց իր ձեռները չկապելով և ամենևին չհրաժարվելով նույնիսկ ամբողջ հողը հավասար մշակման համար գյուղացիներին տալը (Черный передел) պաշտպանելուց»:[1])

Սրանք են բոլշևիզմի ագրարային ծրագրի ընդհանուր հիմքերը: Հետագա հարցը կապիտալիստական ագրարային եվոլյուցիայի յերկու հնարավոր տիպի մասին—ագրարային հարաբերությունների վերափոխման հաջորդական գյուղացիական (Ամերիկական տիպի Ս. Գ.) և հաջորդական կալվածատիրական (պրուսական տիպի Ս. Գ.) յեղանակի պայքարի մասին. եր, վորը բոլշևիզմն (իր ամբողջ հասակով Ս. Գ.) առաջ քաշեց 1905 թ. հեղափոխության ժամանակ:

III. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՆԱԽԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Բոլշևիզմը միանգամից հանդես չեկավ կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայի և հողի ազգայնացման ծրագրով: Նախահեղափոխական ժամանակաշրջանում բոլշևիզմը հանդես է գալիս այսպես կոչված կտորների (отрезки) ծրագրով, վորը պահանջում է վերադարձնել գյուղացիներին ճորտատիրական իրավունքի վոչնչացման ժամանակ նրանցից կտրած հողերը: Առաջ քաշելով կտորների ծրագիրը, Լենինը սակայն հենց սկզբից ընդգծում է հողի ազգայնացման սկզբունքային թույլատրելիությունը և իբրև ագրարային վերափոխությունների մաքսիմում բուրժուական հասարակության հողի վրա, և իբրև գյուղացիական ապստամբության լոզունգ—ճորտատիրության վերջնական վոչնչացման լոզունգ:

Դեռ «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները» աշխատության մեջ, վոր գրված է 1894 թ., Լենինը բացառիկ պարզությամբ ձևակերպեց պրոլետարիատի վերաբերմունքի հարցը դեպի գյուղացիությունը: Մերկաց-

---

[1]) Ленин—т. III (III հատորն ամենուրեք մատնանշում է 1926 թ. III հրատ.) «Развитие капитализма в России», стр. 141—142.

[1]) Ленин—т. IX, «Пересмотр аграрной программы рабочей партии», стр. 392.

նելով նարոդնիկական սոցիալիզմի մանր-բուրժուական բնույթը, Լենինը դնում է յերկրորդ հարցը, այն է՝ ինչ պետք է լինի պրոլետարիատի վերաբերմունքը դեպի մանր բուրժուական կուսակցությունները և նրանց ծրագրերը: «Այս հարցին,—ասում է Լենինը,—չի կարելի պատասխանել, յեթե ուշադրության չառնենք այդ դասակարգի յերկակի բնույթը… Նա պրոգրեսիվ է հանդիսանում, ինչքան վոր առաջադրում է ընդհանուր դեմոկրատական պահանջներ, այսինքն՝ պայքարում է միջնադարյան եպոխայի և ճորտատիրության ամեն տեսակ մնացորդների դեմ. նա ռեակցիոն է հանդիսանում, ինչքան վոր պայքարում է իր, իբրև մանր բուրժուազիայի դրության պահպանման համար, ջանալով կասեցնել, յետ շրջել յերկրի ընդհանուր զարգացումը բուրժուական ուղղությամբ»[1]):

Ճորտատիրության հսկայական մնացորդների առկայությունը, ճորտատիրական ռեակցիոն հիմնարկների ահագին ուժը հատուկ խստությամբ առաջ են քաշում պրոլետարիատի համար դեմոկրատիզմի վճռական նշանակությունը բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային պայքարը հաջող տանելու գործում: Իսկ դեմոկրատիզմի համար մղվող պայքարում հսկայական դեր կարող է խաղալ գյուղացիության պայքարը կալվածատիրական հողատիրության, ճորտատիրական հիմնարկների այդ պատվարի դեմ: Սրանից յելնելով Լենինն առաջ է քաշում իբրև մի միջոց, վորը կարող կլիներ վերջնականապես վոչնչացնել կալվածատիրոջ տիրապետությունը, կալվածատիրական հողատիրության լիակատար եքսպրոպրիացիան և հողի ազգայնացումը: «Սակայն անկասկած է,—գրում եր Լենինը,—վոր գյուղացիական ռեֆորմը հողի կտորներով ուղղակի կողոպտեց գյուղացիներին հօգուտ կալվածատերերի, ծառայություն մատուցելով այդ հսկայական ռեակցիոն ուժին և անմիջականորեն (գյուղացիական հողերի շրջապատումով, և՛ անուղղակի կերպով (հողաբաժինների արհեստական սահմանագծումով): Յեվ սոցիալ-դեմոկրատներն ամենայեռանդուն կերպով կպնդեն, վոր անհապաղ գյուղացիներին վերադարձվի նրանցից խլված հողը, լիակատար կերպով եքսպրոպրիացիայի յենթարկվի կալվածատիրական հողատիրությունը՝ ճորտատիրական հիմնարկների և ավանդությունների այդ պատվարը: Այս վերջին կետը, վոր զուգադիպում է հողի ազգայնացմանը, իր մեջ վոչ մի սոցիալիստական բան չունի, վորովհետև մեզ մոտ արդեն զարգացող ֆերմերական հարաբերություններն այդ ժամանակ միայն ավելի արագ և ավելի փարթամ կծաղկեյին, բայց դա խիստ կարևոր է դեմոկրատական իմաստով իբրև միակ միջոց, վոր կարող կլիներ վերջնականապես ջախջախել ազնվազարմ կալվածատերերին»[2]):

Յերկու հսկայական կարևորություն ունեցող սկզբունքային դրույթ, վոր միայն 1905 թ. հեղափոխության ժամանակ վերջնականապես բոլշևիզմի ագրարային ծրագրի մեջ տեղ գտան, պարզորոշ կեր-

[1]) Ленин—т. I (I հատորն ամենուրեք մատնանշում է ըստ 3-րդ հրատարակության «Что такое друзья народа?» стр. 189.

[2]) Ленин—т. I, նույն տեղը, եջ 190:

պով նշված են պրոլետարիատի դեպի գյուղացիությունն ունենալիք վերաբերմունքի այս առաջին բոլշևիկյան ձևակերպման մեջ: Նախ՝ հողի ազգայնացումը հանդիսանում է մի միջոցառություն, վոր սկզբունքորեն իրագործելի յե նաև բուրժուական հասարակության մեջ. յերկրորդ՝ ամբողջ կալվածատիրական հողատիրությունը դիտվում է իբրև ճորտատիրության պատվար, իբրև ճորտատիրության վերջնական վոչնչացման լծակ, իբրև այդ վոչնչացման միակ միջոց առաջ է քաշվում հողի ազգայնացումը: Իր թեորիական, սկզբունքային պարզորոշությամբ, հողի համար գյուղացիության մղած պայքարի հեղափոխական նշանակության խոր հասկացողությամբ Լենինի հարցադրումն անմիջականորեն հարում եր հեղափոխական ժամանակաշրջանի ագրարային ծրագրին և շատ ավելի բարձր եր (վոչ միայն բարձր եր այլև սկզբունքորեն տարբեր Ս.Գ.) գյուղացիական հարցի այն պատկերացումից, վոր ձևակերպված եյին զարգանալ սկսած սոցիալ-դեմոկրատիայի ճանաչված թեորիական ղեկավարի՝ «Աշխատանքի ազատագրություն» խմբակի ծրագրում:

«Աշխատանքի ազատագրություն» խմբակի և՛ առաջին (1884 թ.), և՛ յերկրորդ (1888 թ.) ծրագիրն առաջ են քաշում այս պահանջները՝ «արմատական վերաքննություն մեր ագրարային հարաբերությունների, այսինքն՝ հողի յետ գնման և հողը գյուղացիական հասարակություններին տալու պայմանների: Հողաբաժնից հրաժարվելու և համայնքից դուրս գալու իրավունք տալ այն գյուղացիներին, վորոնք այդ իրենց համար հարմար կգտնեն»[1]): Բացի այն, վոր ագրարային ծրագրի այսպիսի ձևակերպումն ընդհանուր և անորոշ եր, յետ գնման պայմանների «վերաքննության» պահանջը, յետ գնման վճարումների վերացման, վոչնչացման փոխարեն, վկայում եր, վոր բավականաչափ հեղափոխական մոտեցում չկար ագրարային հարցի լուծմանը: 1899 թ. գրված «Մեր կուսակցության ծրագրի նախագիծը» հոդվածում, (վոր առաջին անգամ տպագրված է միայն 1924 թ.), Լենինը նշում է, վոր «ագրարային հարաբերությունների արմատական վերաքննության» պահանջը մեզ անճիշտ է թվում… Հազիվ թե կարելի յե այժմ բավականանալ դրանով, յերբ մենք պետք է թե ագիտացիայի ղեկավար նյութ տանք, և թե մեզ անջատենք մանր տնտեսության պաշտպաններից»[2]):

Ընդունելով հողի ազգայնացման իբրև ճորտատիրության վերջնական վոչնչացման և դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու լծակի սկզբունքային թույլատրելիությունը, այնուամենայնիվ բոլշևիզմը մինչհեղափոխական շրջանում առաջ է քաշում կտորների ծրագիրը:

Կտորների ծրագիրը: Կտորների իդեայի առաջին ձևակերպումը գտնում ենք կուսակցության ծրագրի այն նախագծում, վոր Լենինը գրել է 1896 թ.[3]), այս իդեան ավելի մանրամասն զարգացած և հիմնավորված է «Մեր կուսակցության ծրագրի նախագիծը»[4]) հոդվածում (այս փաստաթղթերն առաջին անգամ տպագրվեցին միայն 1924 թ.) և վեր

[1]) Плеханов—т. I, стр. 361—403

[2]) Ленин—т. II, «Проект программы нашей партии», стр. 542.

[3]) Ленин—т. I, стр. 449—452.

[4]) Ленин—т. II ,стр. 529—550.

ջապես այս իդեան ծավալուն ձևով մտավ կուսակցության II համա-
գումարին առաջարկված ագրարային ծրագրի մեջ: Հիմնականում այս
ծրագրի էությունը հետևյալն է. «Հին ճորտատիրական կարգի մնա-
ցորդների վերացման նպատակով... և գյուղում դասակարգային պայ-
քարի ազատ զարգացման շահերի համար Ռուսաստանի սոցիալ-դեմոկ-
րատական կուսակցությունը ձգտելու յե՝ 1) յետգնման և բահրային վճա-
րումների վերացման ... 2) համապարտ յերաշխավորության և հողի
տնօրինության գործում գյուղացուն նեղող բոլոր օրենքների վե-
րացման. 3) ժողովրդին վերադարձնելու այն դրամական գումարները,
վոր նրանից առել են յետգնման և բահրային վճարումների ձևով...
4) գյուղացիական կոմիտեների հիմնման՝ ա) այն բանի համար, վոր
գյուղական հասարակություններին վերադարձվեն...այն հողերը, վո-
րոնք կտրված են գյուղացիներից ճորտատիրական իրավունքի վոչնչաց-
ման ժամանակ և կալվածատերերի ձեռքին մի գործիք են գյուղացի-
ների ստրկացման համար... 5) դատարաններին իրավունք տալու,
վոր իջեցնեն չափից դուրս բարձր վարձավճարները և անվավեր հայ-
տարարեն այն գործարքները, վոր ստրկացուցիչ բնույթ են կրում»[1]):

Լենինի «Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագի-
րը» հոդվածը և ամբողջ ագրարային ծրագիրը, ինչպես ճիշտ մատնան-
շում է ընկ. Կամենևը ագրարային ծրագրի մշակմանը վերաբերող
նյութերի «ներածության» մեջ (տես III Ленинский сбор.) ըստ է-
ության, այլ վոչ միայն ըստ ձևի, պոլեմիկական աշխատություն է:
Դա ամբողջովին ուղղված էր, նախ՝ այն իբր թե օրթոդոքսալ, նույն-
իսկ «Իսկրայականների» մեջ լայն տարածված հայացքի դեմ, ըստ վորի
գյուղացիության կողմից կալվածատերերի դեմ հողի համար մղվող
պայքարի ամեն տեսակ աջակցություն հանդիսանում է մանր արտադ-
րողների դասակարգին ցույց տրվող աջակցություն, վոր այդ աջակ-
ցությունն իբր թե ուժեղացնում և ամրացնում է մանր սեփականու-
թյունը կապիտալիստական խոշոր տնտեսության հանդեպ, այս պատ-
ճառով էլ ռեակցիոն է հանդիսանում: Այս հայացքները զարգացնում
էր Մարտինովն «Իսկրայի» ագրարային ծրագրի քննադատության
մեջ, Մասլովը, վորն ագրարային ծրագրի մասին գրած իր հոդվա-
ծում պնդում էր, վոր ծրագրի կտրոններին վերաբերող կետը հակա-
սում է սոցիալ-դեմոկրատիայի հիմնական սկզբունքներին, վոր կտրոն-
ները գյուղացիներին տալը ռեակցիոն միջոց է, և վերջապես II համա-
գումարում, վորտեղ այսպես կոչված ճահճի ներկայացուցիչներից
մեկը—Մախովը—մինչև իսկ այն էլ ասաց, վոր կալվածատիրական հո-
ղի ազգայնացում կամ բաժանում իրականացնող գյուղացիական հե-
ղափոխությունը կլիներ վոչ թե հեղափոխություն, այլ ռեակցիա:
«Բայց այդ հեղափոխությունը, յեթե կարելի յե այսպես կոչել այն,
հեղափոխական չի լինի... յես ավելի ճիշտ կասեյի, վոր այդ կլինի
արդեն վոչ թե հեղափոխություն, այլ ռեակցիա... հեղափոխություն
բունտի նման: Այդ հեղափոխությունը մեզ յետ կշպրտի, և միայն քան
տարի հետո մենք կվերադառնանք արդի դրությանը»[2]):

[1]) Ленин—т. IX, «Аграрная программа русск. с.-д.», стр. 286–287
[2]) Ленин—т. IX, «Аграрная программа русск. с.-д.», стр. 304

Բանակռիվ մղելով նման հայացքների դեմ, Լենինը մատնանշում
է, վոր հենց կտրոններն են հանդիսանում աշխատավճար սիստեմի ա-
մենազլխավոր բազիսը, վորը նույնպիսի հարաբերություններ է
ծնում գյուղացու և ազայի միջև, ինչպիսին կային ճորտատիրական
իրավունքի ժամանակ:

Կտրոնների էքսպրոպրիացիան կխախտի աշխատավճար սիստե-
մը, կբարձրացնի գյուղացիության ինքնուրույնությունը և դեմոկրա-
տական վոգին, կարագացնի յերկրի հասարակական-տնտեսական
զարգացումը: Մանր սեփականության աջակցելը ռեակցիոն է, յերբ
այդ ուղղված է խոշոր կապիտալիստական տնտեսության դեմ, կա-
սեցնում է հասարակական զարգացումը, մթագնում և հարթում է դա-
սակարգային պայքարը: «Իսկ տվյալ դեպքում մենք ուզում ենք մանր
սեփականությանն աջակցել վոչ թե կապիտալիզմի դեմ, այլ ճորտա-
տիրության դեմ,—տվյալ դեպքում մենք մանր գյուղացիությանն ա-
ջակցելով ահագին զարկ ենք տալիս դասակարգային պայքարի զար-
գացմանը»[1]):

Յերկրորդ՝ ագրարային ծրագիրն ուղղված էր այն հայացքների
դեմ, վորոնք ժխտում էյին, պրոբլեմատիկ համարում գյուղացիու-
թյան հեղափոխական շարժման հնարավորությունը, կամ թե հույս
դնելով տնտեսական զարգացման ճակատագրական պրոցեսի վրա,
չէյին հասկանում այնպիսի ագրարային պահանջների առաջադրման
անհրաժեշտությունը, վորոնք կտանեյին դեպի գյուղացիության հե-
ղափոխական շարժման վերելքը, դեպի ճորտատիրության մնացորդ-
ների հեղափոխական վերացումը:

Լինելով պրոլետարիատի կուսակցություն, սոցիալ-դեմոկրա-
տիան ամեն տեսակ պայմաններում իր վրա չի վերցնում գյուղացի-
ության իբրև մանր սեփականատերերի դասակարգի շահերի պաշտ-
պանությունը: Միայն վորոշ հանգամանքներում և վորոշակի պայ-
մաններում սոցիալ-դեմոկրատիան պաշտպանում է գյուղացիության
պայքարը, հանդես է գալիս վորոշ պահանջներով հօգուտ գյուղացի-
ության: Բուրժուա-դեմոկրատական հեղաշրջմանը նախորդող էպո-
խայում կուսակցության ծրագիրը գյուղացիությանն աջակցություն
ցույց տալը պայմանավորվում է յերկու հանգամանքով՝ 1) վոր ծրագ-
րի մեջ մտցրած գյուղացիության պահանջները տանեն դեպի ճոր-
տատիրական կարգի մնացորդների վերացումը, 2) վոր այդ պահանջ-
ները նպաստեն դասակարգային պայքարի ազատ զարգացմանը գյու-
ղում:

Ժամանակակից գյուղում, մատնանշում է Լենինը, մենք դիտում
ենք դասակարգային հակադրությունների յերկու տեսակի զուգոր-
դում. նախ՝ գյուղական պրոլետարիատի պայքար գյուղական բուր-
ժուազիայի դեմ, յերկրորդ՝ ամբողջ գյուղացիության և ամբողջ
կալվածատիրական դասակարգի պայքար: «Ինչքան վոր մեր գյու-
ղում,— ասում է Լենինը,— ճորտատիրական հասարակություն[illegible]
դուրս է մղվում «ժամանակակից» (բուրժուական) հասարակությ[illegible]
կողմից, այնքան գյուղացիությունը դադարում է [illegible]

[1]) Ленин—т. IX, «Аграрная программа русск. с.-[illegible]

լինելուց, բաժանվելով գյուղական պրոլետարիատի և գյուղական բուրժուազիայի (խոշոր, միջակ, մանր և մանրագույն): Ինչքան վոր պահվում են դեռ ճորտատիրական հարաբերությունները, այնքան «գյուղացիությունը» դեռ շարունակում է դասակարգ լինել, այսինքն՝ կրկնում ենք, վոչ բուրժուական, այլ ճորտատիրական հասարակության դասակարգ: Այս «այնքան—ինչքանը» իրականության մեջ գոյություն ունի իբրև ճորտատիրական և բուրժուական հարաբերությունների խիտ բարդ հյուսում ժամանակակից ռուսական գյուղում»[1]):

Չնայած այն բանին, վոր կապիտալիստական զարգացման պրոցեսը քանդում է ճորտատիրության հիմքերը, ուժեղացնում է գյուղական պրոլետարիատի և բուրժուազիայի հակադրությունը, չնայած այս բանին ժամանակակից սոցիալ-դեմոկրատների համար հենց ամբողջ գյուղացիության դասակարգային պայքարն ընդդեմ կալվածատիրոջ ամենից ավելի եյական և ամենից ավելի գործնականորեն կարևոր նշանակություն ունի: Այս պատճառով «պրոլետարիատի կուսակցությունը պետք է վոչ միայն աջակցի, այլև առաջ հրի գյուղացիությանը ճորտատիրության բոլոր մնացորդների դեմ մղվող պայքարում»:

Յերկրորդ պայմանին (ագրարային ծրագրի գյուղացիական պահանջները դասակարգային պայքարի ազատ զարգացման պայմանին յենթարկելը) Լենինը մեծ նշանակություն եր տալիս: Այս պայմանն արտահայտում է ղեկավար միտքը սոցիալ-դեմոկրատիայի, վորն իր բոլոր պահանջները յենթարկում է պրոլետարիատի դասակարգային պայքարի զարգացման խնդրին, վերջնական նպատակի համար մղվող պայքարի խնդրին: Այս պայմանով սոցիալ դեմոկրատիան սահմանազատվում է վոչ միայն լիբերալիզմի, նարոդնիկության, ռեֆորմիզմի և այլ բոլոր այլասեռականություններից, այլև հեղափոխական դեմոկրատական կուսակցություններից: «Պահանջելով ապահովել դասակարգային պայքարի ազատ զարգացումը գյուղում», մենք **սկզբունքային** հակասության մեջ ենք մտնում այդ բոլոր պարոնների հետ և նույնիսկ բոլոր վոչ-սոցիալ-դեմոկրատ հեղափոխականների և սոցիալիստների հետ: Վերջիններս նույնպես կանգ չեն առնի սոցիալ-հեղափոխական պահանջների առաջ ագրարային հարցում, բայց նրանք չեն ցանկանա այդ պահանջները յենթարկել այնպիսի պայմանի, ինչպես դասակարգային պայքարի ազատ զարգացումը գյուղում: Այս պայմանը—հեղափոխական մարքսիզմի թեորիայի հիմնական և կենտրոնական կետն է ագրարային հարցի ասպարեզում»[2]): Կտորների ծրագրում Լենինն ընդգծում է ճորտատիրական ստրկացման (кабала) միջնադարյան ձևերի հեղափոխական, բացահայտ վոչնչացման խնդիրը, «1861 թ. գյուղացիական ռեֆորմի» դեմոկրատական հեղափոխական վերաքննության անհրաժեշտությունը: Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային պահանջները պետք է նկատի ունենան ագրարային հարաբերությունների հեղափոխական վերափոխությունը, գյուղացիության հեղափոխական շարժման վերելքը:

---

[1]) Ленин, т. IX «Аграрная программа русск. с. д». եջ 306:

[2]) Ленин—т. IX, «Аграрная программа русск. с.-д.», стр. 297

Իբրև 1861 թ. գյուղացիական ռեֆորմի հեղափոխական վերաքննության գործիք, որպես Լենինը առաջ է քաշում գյուղացիական կոմիտեներն իբրև միջոց, վորով հենց գյուղացիներին կարելի յե մղել դեպի հեղափոխական պայքար ընդդեմ ճորտատիրության: Գյուղացիական կոմիտեների ստեղծումը հանդիսանում է բոլշևիզմի բոլոր ագրարային ծրագրերի հիմնական պահանջը: Շահագործված մասսաներին գրավելով դեպի ճորտատիրության հեղափոխական լիկվիդացիան, ազատ արձակելով բազմամիլիոն գյուղացիական մասսաների հեղափոխական նախաձեռնությունը, գյուղացիական կոմիտեները, Լենինի կարծիքով, հանդիսանալու եյին գյուղացիության հեղափոխական շարժման հենակետերը, գյուղացիություն, վորը հեղափոխական, այլ վոչ թե բյուրոկրատական ճանապարհով է լուծում ագրարային հարցը, չսպասելով ապագա պարլամենտի կամ Սահմանադիր ժողովի համապատասխան վճիռներին, վորովհետև Սահմանադիր ժողովի վճիռը և հենց դրա գումարումը պայմանավորված են այն բանով, թե ինչքան մեծ է մասսաների հեղափոխական շարժման թափը, իրոք ինչքան է վոչնչացված կամ խախտված իշխող դասակարգերի ուժը: Գյուղացիական կոմիտեները—այդ մի ապելյացիա յե հենց գյուղացիական մասսաների հեղափոխական շարժմանը: «Ճորտատիրական հարաբերությունների վերջնական լիկվիդացիան,—ասում է Լենինը, պարզաբանելով գյուղացիական կոմիտեների նշանակությունը—հանձնվում է վոչ թե ճնշողներին, այլ բնակչության այդ հարաբերություններից ճնշված մասին, հանձնվում է վոչ թե փոքրամասնությանը, այլ չհապրդված անձերի մեծամասնությանը:»[1])

Մասլովի քննադատությունը: Այս խնդիրը բոլորովին չհասկացավ Մասլովը, քննադատելով Լենինի ագրարային նախագիծը և մասնավորապես գյուղացիական կոմիտեներ ստեղծելու կետը:

Մասլովի քննադատությունը, ինչպես և նրա առաջարկած ագրարային ծրագրի նախագիծը, վորը Լենինը բնութագրեց իբրև հողի ազգայնացման վատացրած և հակասական ձևակերպում, բոլորովին անտեսում է ագրարային հարաբերությունների հեղափոխական վերափոխման խնդիրը, հենց գյուղացիական մասսաների հեղափոխական շարժումով ագրարային հարցի լուծման խնդիրը: Մասլովը տարակուսանքի մեջ է ընկնում այն առթիվ, վոր դասերի վոչնչացման պահանջի կողքին պահանջվում է գյուղացիական, այսինքն՝ դասային կոմիտեների հիմնում: «Իրոք,—պատասխանում է Լենինն այդ տարակուսանքներին,—այստեղ հակասությունը միայն թվացող է. դասերի վոչնչացման համար պահանջվում է ստորին, ճնշված դասի «դիկտատուրա», ճիշտ այնպես, ինչպես վոր ընդհանրապես դասակարգերի և այդ թվում պրոլետարների դասակարգի վոչնչացման համար պահանջվում է պրոլետարիատի դիկտատուրա: Մեր ամբողջ ագրարային ծրագիրը նպատակ ունի վոչնչացնել ճորտատիրական և դասային ավանդություններն ագրարային հարաբերությունների ասպարեզում, իսկ այդպիսի վոչնչացման համար հնարավոր է դիմել միայն ստորին դասին, ճորտատիրական կարգի այդ մնացորդներով ճնշվածներին»[2]):

---

[1]) Ленин—т. IX, «Аграрная программа русск. с. д.», стр. 299.

[2]) Ленин, т. IX, «Ответ т. Иксу», стр. 377.

Մասլովը բոլորովին հրաժարվում է պրոլետարիատի հեգեմոնիայի իդեայից, նա չի հասկանում, վոր պրոլետարիատի կուսակցության համար անհրաժեշտ է առաջքաշել պրոլետարիատի հեղափոխական ներգործության ծրագիր գյուղացիության վրա, տալ այնպիսի լոզունգ, վորն ընդունակ է առաջ բերել գյուղացիության միացումը պրոլետարիատի հեղափոխական պայքարին դեմոկրատական հեղաշրջման համար: «Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը պետք է հաշվի այն փաստի հետ, վոր դեմոկրատների (նկատի ունի եսերներին:—Ս. Կ.) միրաժային (կրկնայերևույթային Ս. Գ.) սոցիալիզմը գյուղացիական մասսայի համար ավելի գայթակղեցուցիչ է, քան իսկական սոցիալիզմը, վոր մոտակա ժամանակում, աբսոլյուտիզմի տիրապետման օրոք, ընկճված խավար գյուղացիությունն էլ ավելի մեծ հաճույքով կսկսի իսկույն եվեթ վորոնել «արդար հողը», քան սիստեմատիկորեն պայքարել վոչ մոտիկ ապագայում իրականացվող սոցիալիստական իդեալի համար»[1]): Վոր գյուղացիությունն իր ամբողջությամբ ընդունակ չէ սիստեմատիկորեն պայքարել սոցիալիստական իդեալի համար, այս անվիճելի յե: Բայց Մասլովը չէր հասկանում, վոր գյուղացիության հեղափոխական մասնակցությունը դեմոկրատական հեղաշրջմանը, ճորտատիրության դեմ գյուղացիության կողմից մղվող պայքարին պրոլետարիատի ցույց տված օգնությունը և ղեկավարությունը հսկայական նշանակություն կունենային նաև պրոլետարիատի հետագա պայքարի համար հանուն սոցիալիզմի: Լենինը մատնանշում է, վոր ագրարային հարցի բացահայտ հեղափոխական լուծման մեթոդը չէր կարող «ամենախոր ազդեցություն չգործել ամբողջ աշխատավոր գյուղական բնակչության բողոքի վոգու և ինքնուրույն պայքարի վրա»: Ապա Լենինը մատնանշում է, վոր ռուսական սոցիալ-դեմոկրատները պետք է շատ ավելի ջանասիրությամբ զբաղվեն «ռամիկներին» սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ գրավելով, քան այդ հաջողվել է անել Արևմուտքում: «Վորպեսզի հեշտացնենք մեր բատրակների և կիսաբատրակների համար ապագայում սոցիալիզմին անցնելը, խիստ կարևոր է, վոր սոցիալիստական կուսակցությունն այժմ իսկ սկսի մանր գյուղացիության «կողմը բռնել», իր կողմից նրա համար անելով «ամեն հնարավորը», չհրաժարվելով մասնակցել «խորթ» (վոչ պրոլետարական) ցավոտ ու խճճված հարցերի լուծմանը, ընտելացնելով ամբողջ աշխատավոր և շահագործվող մասսային, վոր նրան համարի իր առաջնորդը և ներկայացուցիչը»[2]):

Այսպիսով 1902 թ. ագրարային ծրագիրը Լենինի մեկնաբանությամբ նկատի ուներ գյուղացիության հեղափոխական ակտիվության ծավալումը, յելնում եր ագրարային պահանջների լայնացման հնարավորությունից, յերբ ուժեղանար ագրարային շարժումը: Այս պատճառով էլ Լենինն ընդգծում է, վոր գյուղացիական բաժնում մենք չպետք է կանգ առնենք նաև սոցիալ-հեղափոխական պահանջների առաջ, «վորովհետև ճորտատեր-կալվածատերերի իշխանությունը տապալող սոցիալական հեղափոխությունը (այսինքն բուրժուազիայի նույնպիսի սոցիալական հեղափոխությունը, ինչպիսին եր ֆրանսիական մեծ հեղափոխությունը) հնարավոր է նաև տվյալ բուրժուական կարգի բազիսի

[1]) Ленин—т. IX, ст Маслова «Об аграрной программы», стр. 7'8

[2]) ЛЕНИН, т. IX «Аграрная програма русск. с. д.», էջ 306.

վրա»[1]): Այս պատճառով Լենինը մատնանշում եր, վոր «գյուղացիական բաժնում մենք կարող ենք և պետք է այնպիսի պահանջներ առաջադրենք, վորոնց նշանակությունը հավասարազոր լիներ ճորտատեր-կալվածատերերի իշխանության վերջնական ջախջախման, մեր գյուղը ճորտատիրության բոլոր հետքերից բոլորովին մաքրելուն», ուրիշ խոսքով՝ տալ ծրագիր—մաքսիմումը:

Կտորները և ազգայնացումը: Հանդիսանո՞ւմ եր արդյոք իրականության մեջ կտորների ծրագիրը սոցիալ-դեմոկրատիայի ագրարային պահանջների մաքսիմումը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ: Անկասկած վո՛չ: Լենինը շատ անգամ մատնանշում եր, վոր կտորները վերադարձնելու պահանջը չի արտահայտում սոցիալ-դեմոկրատիայի մոտակա պահանջների մաքսիմումը գյուղացիական հարցում: Նա ընդգծում եր, վոր կտորների եքսպրոպրիացիան վերջնականապես և միանգամից չի վոչնչացնում ճորտատիրության բոլոր մնացորդները: «Այդ եքսպրոպրիացիան (կտորների:—Ս. Կ.) կխախտի,—ասում է Լենինը և ապա ավելացնում է,—չեմ ասի կոչնչացնի, այլ հենց կխախտի (ընդգծումը իմն է:—Ս. Կ.), աշխատավճար սիստեմը»[2]):

Կտորների ծրագիրը չէր յենթադրում ազնվականների հողատիրության վերջնական վոչնչացումը, այս պատճառով էլ 1902 թ. Լենինը մատնանշում եր, վոր կալվածատիրական հողատիրության վերջնական վոչնչացման իսկական մաքսիմումը, գյուղացիական ապստամբության լոզունգը հանդիսանում է հողի ազգայնացումը:

Լենինն ընդգծում եր, վոր կտորների ծրագիրն առաջին քայլն է, դուռը, վորով պետք է մտնել, այլ վոչ թե ցանկապատը: «Մեր ծրագիրը,—ասում է Լենինը,—այս պատճառով նկատի ունի գործնականապես գլխավորապես անմիջականորեն մոտակա ապագան մինչև ինքնակալության տապալման ժամանակաշրջանը»... «Տվյալ եպոխայում, քաղաքական ստրկության եպոխայում,—մատնանշում է Լենինը մի այլ տեղ,—գյուղացիական կոմիտեներ հիմնելու և կտորները վերադարձնելու պահանջն անմիջականորեն բորբոքում է տվյալ դասակարգային պայքարը գյուղում...»:

Լենինը կտորների ծրագիրն առաջ եր քաշում նախահեղափոխական եպոխայում, յերբ դեռ չկային գյուղացիական շարժման նկատելի արտահայտություններ, յերբ դեռ առաջուց (առանց թեկուզ վորոշ ստուգման պրակտիկայում) չէր կարելի ճշգրիտ վորոշել, «թե արդյոք մեր տնտեսարար գյուղացիությունը, յերբ հեղափոխությունը նրան արթնացնի քաղաքական կյանքի համար, հանդես կգա իբրև դեմոկրատական-հեղափոխական կուսակցություն, թե իբրև կարգի կուսակցություն: Մենք պետք է,—ասում է Լենինը,—այնպես կազմենք մեր ծրագիրը, վոր պատրաստ լինենք ամենավատին, իսկ լավագույն կոմբինացիաների իրականացումը միայն կհեշտացնի մեր աշխատանքը և նոր զարկ կտա նրան»[3]):

Գյուղացիների հեղափոխական շարժման բացակայության ժամանակ, այն ժամանակ, յերբ անհնար է ճշգրիտ վորոշել, թե արդյոք ամ-

[1]) Ленин—т. IX, стр. 292

[2]) Ленин—т. IX, «Аграрная программа русск. с. д.», стр. 303.

[3]) Ленин—т. IX, «Ответ тов. Иксу», стр. 382.

քողջ գյուղացիությունը կընդառաջի կալվածատիրական իշխանության վերջնական վոչնչացմանը, թե գյուղացիական բուրժուազիան, վորոշ զիջումներ ձեռք բերելով, կմիանա կալվածատերերին ընդդեմ գյուղական չքավորության և գյուղական պրոլետարիատի,—այս պայմաններում Լենինը տվյալ մոմենտի համար առաջ էր քաշում կտրոներն իբրև ճորտատիրական ստրկացումը խախտելու միջոց, իբրև առաջին քայլ, վորին անկասկած կընդառաջի վողջ գյուղացիությունն իր ամբողջությամբ: Բայց այս ծրագիրը վոչ մի չափով չպետք է սահմանափակի ագրարային պահանջների թափը, գյուղացիական շարժման թափը, յեթե այդ սկսվի և յերբ այդ շարժումը գնա ավելի հեռուն, դեպի կալվածատիրական հողատիրության վերջնական վոչնչացումը: Ցե՛վ այն ժամանակ «սոցիալ-դեմոկրատները խորհուրդ կտան գյուղի և քաղաքի պրոլետարներին պահանջել, վոր ամբողջ հողը խլվի կալվածատերերից և ազատ ժողովրդական պետության հանձնվի» (ընդգծ. մերն է Ս. Գ.):

«Իսկրայի» ագրարային ծրագրի նախագիծը հիմնավորող հոդվածում Լենինը մատնանշում էր, վոր բուրժուական, այլ վոչ սոցիալիստական իմաստով հասկացվող ազգայնացման պահանջն «իբրև ավելի հեռուն է գնում» կտրոնները վերադարձնելու պահանջից և վոր մենք լիովին համաձայն ենք այդ պահանջին: Վորոշ հեղափոխական մոմենտում մենք չենք հրաժարվի հարկավ առաջ քաշել այն: Բայց մեր այժմյան ծրագիրը մենք կազմում ենք վոչ միայն և նույնիսկ վոչ այնքան հեղափոխական ապստամբության եպոխայի համար, վորքան քաղաքական ստրկության եպոխայի համար, քաղաքական ազատության նախորդող եպոխայի համար: Իսկ այդպիսի եպոխայում հողի ազգայնացման պահանջը շատ ավելի թույլ է արտահայտում դեմոկրատական շարժման անմիջական խնդիրը ճորտատիրության դեմ մղվող պայքարի իմաստով»[1]):

«Իսկրայի» խմբագրության մեջ յեղած տարաձայնությունները Լենինի այն դրույթյան դեմ, թե սկզբունքորեն թույլատրելի յե ազգայնացումն իբրև բուրժուական պահանջ, հանդես յեկավ «Իսկրայի» խմբագրության մնացած մասը Պլեխանովի գլխավորությամբ: Այս հարցի քննությունն ուղեկցվում էր անսովոր կռվով, սուր բնույթ կրող վեճերով, վորոնք քիչ մնաց խմբագրությունը քայքայման հասցնեյին:

Կտրոնների ծրագրին համաձայնվելով, խմբագրությունն ամենավճռական ձևով առարկում էր հողի ազգայնացման իբրև դեմոկրատական հեղաշրջման լոզունգի, իբրև գյուղացիական ապստամբության լոզունգի դեմ, յենթադրելով՝ վոր հողի ազգայնացման պահանջը տեղին է միայն իբրև սոցիալիստական հեղափոխության լոզունգ: «Հողի ազգայնացումն իբրև ապստամբության լոզունգ էլ այժմ հակահեղափոխական է»,—գրում է Աքսելրոդը Լենինի ձեռագրի վրա: «Հարկավոր է ավելի մեծ չափով և ավելի ռելյեֆ կերպով,—գրում է Մարտովը նույն ձեռագրի վրա,—նշել հողի ազգայնացման պահանջի ռեակցիոն բնույթը տվյալ մոմենտում Ռուսաստանում... Հողի ազգայնացումը մենք ընդունում ենք միայն իբրև արտադրության բոլոր միջոցների սոցիալիզացիայի անմիջական նախերգանք»: «Լիովին միանում եմ Մարտովի այս նկա-

¹) Ленинск. сбр., т. III, стр 352

տողությանը,—գրում է Պլեխանովը,—հենց այս է հարցի ամբողջ էությունը»[1]):

Լենինի հոդվածի հավաքական քննության ժամանակ խմբագրությունը հետևյալ կերպով ձևակերպեց իր անհամաձայնությունը Լենինի հետ այս հարցում:

«Հողի ազգայնացումն իբրև մի պահանջ, վոր չի նախորդում անմիջականորեն արտադրության բոլոր միջոցների սոցիալիզացիային, սոցիալ-դեմոկրատիան չի կարող ընդունել, այս պատճառով էլ սրան վերաբերող բոլոր եջերը դուրս գցել (և ուժեղացնել) այդ միջոցի բնութագիրն իբրև ռեակցիոն տվյալ մոմենտում և իբրև ավելորդ, քանի վոր սոցիալիստական վերջնական նպատակից զատված մի մաս է այն»[2]):

Ծակայն Լենինը գերադասեց հոդվածից բոլորովին հանել ազգայնացմանը վերաբերող ամբողջ կտորը, քան Պլեխանովի մեկնաբանությամբ ընդունել այն: Իսկ Պլեխանովը «Մեկնաբանություններ ՌՍԴԲԿ ծրագրի նախագծի առթիվ» հոդվածում մասնավորապես ընդգծեց հողի ազգայնացման պահանջի ռեակցիոնությունը: Հողի ազգայնացումը մեզ մոտ պաշտպանվում է «Московские ведомости» (ռեակցիոներների ղեկավար օրգանը) կողմից... հողի ազգայնացումը... բուրժուական հասարակության մեջ... անօգտակար է բանվոր դասակարգի և ընդհանրապես ամբողջ աշխատավոր բնակչության համար[3]): Հողի ազգայնացումը չի թուլացնի, այլ կուժեղացնի, կամրացնի ռուսական ինքնակալությունը,—այս էր Պլեխանովի կարծիքը:

Այսպիսով արդեն կտրոնների ագրարային ծրագրի քննության ժամանակ մենք—...տեսնում ենք յերկու տարբեր միտում, վոր հետագայում պայմանավորեցին բոլշևիկների և մենշևիկների արմատական քաղաքական տարամիտումներից մեկն առաջին հեղափոխության մեջ գյուղացիության հեղափոխական դերի հարցի մասին: Ագրարային ծրագրի լենինյան մեկնաբանությունը գյուղացիության հեղափոխական շարժման ծավալման դրույթ, գյուղացիական շարժման վերելքի դեպքում գյուղացիական ապստամբության լոզունգ, ճորտատիրության վերջնական վոչնչացման լոզունգ էր տալիս: Պլեխանովի դրույթը հետագայում տարավ դեպի այն, վոր սկսեցին յերկյուղ կրել մասսայական գյուղացիական շարժումից, սկսեցին հետզհետե անցնել լիբերալ բուրժուազիային, հետևաբար և հեղափոխական գյուղացիության դեմ լիբերալ կալվածատիրոջն աջակցելու ուղին տանող դիրքի վրա (հողի ազգայնացման լենինյան պլանի փոխարեն «Իսկրայի» խմբագրության մեծամասնությունը, Պլեխանովի գլխավորությամբ, առաջ էր քաշում հողի «մունիցիպալիզացիայի» հակահեղափոխական, ռեակցիոն պլանը, վորը անողոք քննադատության յենթարկեց Լենինը. Ս. Գ.):

Ի՞նչն է կտրոնների ծրագրի սխալը: Կտրոնների ագրարային ծրագիրը հանդիսանում էր պրոլետարիատի տեսակետից ագրարային հարաբերությունների դեմոկրատական հեղափոխական վերակազմության պայմանների կոնկրետ վորոշման առաջին փորձը: Այդ ծրագրի մշակումը տեղի չէր ունենում այնպիսի պայմաններում, յերբ կուսակցությունը գյու-

¹) Ленинск. сбр. т. III ,стр 384—385

²) Նույն տեղը, եջ 384—385

³) Плеханово—т. XII, стр. 235—236.

գյուղացիական շարժման բնույթի, չափի և խորության վերաբերյալ փորձ չուներ, երբ մենակ թեորիական նկատառումների հիման վրա, առանց գյուղացիության կողմից դասակարգային պայքարի բաց ասպարեզը մտնելու փորձի, անհնար էր վճռել այն հարցը, թե ինչքան է հեռու գնացել գյուղացիության կապիտալիստական շերտավորման պրոցեսը, ինչքան գյուղացիությունն իր ամբողջությամբ ընդունակ է հեղափոխական-դեմոկրատական հեղաշրջման:

Կտրոնների ծրագիրը, մատնանշում է Լենինը, ճիշտ էր որոշում զարգացման ուղղությունը, բայց սխալ էր որոշում զարգացման մոմենտը: Լենինն այդ սխալի աղբյուրը տեսնում է հողագործության կապիտալիստական զարգացման աստիճանի գերագնահատության մեջ: «Մենք ենթադրեցինք, որ կապիտալիստական հողագործության տարրերն արդեն լրիվ զարգացել էին Ռուսաստանում, զարգացել էին նաև կալվածատիրական տնտեսության մեջ (մինուս ստրկացուցիչ «կտրոնները», այստեղից կտրոնների պահանջը), զարգացել էին նաև գյուղացիական տնտեսության մեջ, որը թվում էր, թե իր միջից զատել է ամուր գյուղացիական բուրժուազիա և այդ պատճառով անընդունակ է «գյուղացիական ագրարային հեղափոխության»: Ոչ թե գյուղացիական ագրարային հեղափոխության «երկյուղը» ծնունդ տվեց սխալ ծրագրին, այլ ռուսական հողագործության կապիտալիստական զարգացման աստիճանի գերգնահատությունը»[1]):

Գյուղացիության հեղափոխական շարժման փորձն արդեն 1905 թ. ցույց տվեց, որ կտրոնների ագրարային ծրագիրը բավականաչափ չի գնահատել կալվածատիրական տնտեսության մեջ ճորտատիրական-ստրկացուցիչ սիստեմի գերիշխումը և գյուղացիության լայն ու խոր դեմոկրատական շարժման հնարավորությունը: Կտրոններին վերաբերող կետը, մատնանշում է Լենինը, հիմնվում էր այն բանի վրա, որ «մասավոր ձևով բաժանվում էին այն հողերը, որոնք ծառայում էին ճորտատիրական-ստրկացուցիչ շահագործման համար («որոնք կտրված էին գյուղացիներից 1861 թ.»), և այն հողերը, որոնք շահագործվում էին կապիտալիստական ձևով: Այսպիսի մասավոր բաժանումը բոլորովին սխալ էր, որովհետև պրակտիկայում գյուղացիական մասսաների շարժումը չէր կարող ուղղվել կալվածատիրական հողերի հատուկ կարգերի դեմ, այլ միայն ընդհանրապես կալվածատիրական հողատիրության դեմ»[2]):

Կտրոնների ագրարային ծրագիրը մշակվում էր նախահեղափոխական ժամանակաշրջանում, երբ գյուղացիության մասսայական շարժման բացակայությունը դեռ իր ամբողջ պարզությամբ յերևան չէր բերել բուրժուական հեղաշրջման իրականացման հաջորդական գյուղացիական և հաջորդական յունկերական «բուրժուա-կալվածատիրական» յեղանակների պայքարը: «1903 թ. ագրարային ծրագրի հիմնական սխալը,—ասում է Լենինը,—համենայն դեպս ճշգրիտ պատկերացման բացակայությունն էր այն մասին, թե ինչի համար կարող է և պետք է ծավալվի ագրարային պայքարը Ռուսաստանի բուրժուական

[1] Ленин—т. IX, «Аграрная программа с.-д. в русск. революции 1905—1907 г. г. стр. 503:

[2]) Ленин— т. IX, նույն տեղը, եջ 474.

հեղափոխության պրոցեսում, որոնք են կապիտալիստական ագրարային եվոլյուցիայի այն տիպերը, որ օբյեկտիվորեն հնարավոր են այդ պայքարում այս կամ այն հասարակական ուժի հաղթանակի ժամանակ»[1]):

Բայց լենինյան մեկնաբանությունը կտրոնների, իբրև ագրարային պահանջների հետագա լայնացման առաջին քայլի, ապա ազգայնացման իբրև գյուղացիական ապստամբության լոզունգի սկզբունքորեն թույլատրելի համարելը, մի լոզունգ, որը սոցիալ-դեմոկրատիան պետք է վոր առաջ քաշի հեղափոխական ապստամբության եպոխայում, Լենինին հնարավորություն տվեց գյուղացիության մասսայական հեղափոխական շարժման յերևան գալու հետ կտրոնների ագրարային ծրագրից անցնել գյուղացիական հեղափոխության ագրարային ծրագրին:

IV. ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կտրոնների ծրագրից դեպի ազգայնացման ծրագիրը: Ագրարային գյուղացիական հարցի հսկայական նշանակությունը 1905 թ. հեղափոխության մեջ, որ յերևան յեկավ հեղափոխական անցքերի ամբողջ ընթացքում, գյուղացիության հեղափոխական շարժման թափն ամբողջ ուժով առաջ քաշեցին II համագումարի ընդունած կտրոնների ագրարային ծրագրի վերաքննության անհրաժեշտության հարցը: Այդ վերաքննությունը Լենինն ավարտեց 1906 թ. սկզբին իր «բանվորական կուսակցության ագրարային ծրագրի վերաքննությունը» բրոշյուրում, որի մեջ նա պաշտպանում էր կալվածատիրական հողերի կոնֆիսկացիան և որոշ պայմաններում՝ հողի ազգայնացումը: Բայց ագրարային ծրագրի վերաքննության խնդիրը Լենինն առաջ է քաշում արդեն 1905 թ. գարնանը սկսված գյուղացիական շարժման կապակցությամբ: III համագումարին ուղղված «Մեր ագրարային ծրագրի մասին» նամակում Լենինն առաջարկում է ծրագրի կտրոններին վերաբերող կետը տեղափոխել մեկնաբանությունների մեջ, իսկ ծրագրում առաջ քաշել հեղափոխական գյուղացիական կոմիտեներ հիմնելու կոնկրետ լոզունգը և նրանց հեղափոխական միջոցառումներին աջակցելը մինչև կալվածատիրական հողերի կոնֆիսկացիան: Լենինի կարծիքով նման ձևակերպումը «միանգամ ընդմիշտ վերացնում է այն անհեթեթ միտքը, որ իբր թե սոցիալ-դեմոկրատիան ասում է գյուղացուն, թե կտրոններից հեռու նա չի կարող և չպետք է գնա: Այս միտքն անհրաժեշտ է վերացնել ծրագրի պարզ ձևակերպումով, այլ ոչ թե սահմանափակվել դրա պարզաբանումով մեկնաբանությունների մեջ»[2]):

Ագրարային ծրագրի կոնկրետ պահանջների ձևակերպման մեջ Լենինը դեռ յերևան է բերում որոշ զգուշություն: Կտրոնների պահանջը նա ընդհականապես դեն չի շպրտում, հողի ազգայնացման պահանջը որվա մոմենտի համար անժամանակ է ճանաչվում: Ընդհանուր առմամբ կալվածատիրական հողերի շահագործման ձևերի և յեղանակների հարցը Լենինն այժմ բաց է թողնում և ծանրության կենտրոնը փոխա-

[1]) Ленин—т. IX, стр. 475

[2]) Ленин—IX, «О нашей аграрной программе», письмо к III съезду, стр. 693

գրում է դեպի գյուղացիներին դեմոկրատական հեղափոխության կողմը գրավելու համար մղվող պայքարը:

Բայց կուսակցության III համագումարում (1905 թ. մայիսին) հենց ծրագրի վերաքննության հարցը չդրվեց: Ընդունվեց տակտիկական բանաձև «դեպի գյուղացիական շարժումն ունենալիք վերաբերմունքի» մասին, գյուղացիական շարժմանն աջակցելու մասին մինչև կալվածատիրական, պետական (казенный), յեկեղեցական, վանքային և ուդելային հողերի կոնֆիսկացիան. իբրև պրակտիկ լոզունգ գյուղացիության բոլոր հեղափոխական-դեմոկրատական միջոցառությունների իրագործման համար առաջ եր քաշվում գյուղացիական հեղափոխական կոմիտեների անհապաղ կազմակերպումը:

III համագումարի հետ միաժամանակ տեղի ունեցած մենշևիկյան կոնֆերենցիան «գյուղացիության մեջ կատարվող աշխատանքի մասին» բանաձևում առաջ է քաշում խիստ անորոշ մի ձևակերպում՝ «սոցիալ-դեմոկրատիան պաշտպանում է գյուղացիների ամեն տեսակ փորձերը հողի բռնի գրավման վերաբերյալ[1]), չդնելով հետագա հարցն ամբողջ կալվածատիրական հողի կոնֆիսկացիայի մասին: Հենց գյուղացիության կողմից գյուղական կարգերի դեմոկրատական վերափոխության համար գյուղացիական հեղափոխական կոմիտեների անհապաղ կազմակերպման լոզունգի փոխարեն մենշևիկները գյուղացիական շարժման կազմակերպման հարցը հետաձգում են մինչև ապագա Սահմանադիր ժողովը, վորին դեռ հարկավոր կլինի պահանջ ներկայացնել «դեմոկրատական հիմքի վրա հատուկ կոմիտեներ» կազմել հին կարգերի վերացման համար:

Ագրարային ծրագրի վերաքննության լուծումն ընդունվեց բոլշևիկների Տամմերֆորսի կոնֆերենցիայում 1905 թ. դեկտեմբերին: Կոնֆերենցիայի ագրարային բանաձևն առաջարկում է «կտրոնների վերաբերյալ կետը հանել, դրա փոխարեն դնել, վոր կուսակցությունը պաշտպանում է գյուղացիության հեղափոխական միջոցառությունները մինչև ամբողջ պետական, յեկեղեցական, վանքային, ուդելային և մասնատիրական հողերի կոնֆիսկացիան, իր գլխավոր և մշտական խնդիրը համարելով գյուղական պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպումը, նրա շահերի և գյուղական բուրժուազիայի շահերի անհաշտելի հակադրության պարզաբանումը և այլն»[1]) (ընդգծումը մերն է. Ս. Գ.):

1906 թ. սկզբին Լենինը վերջնականապես վերաքննեց հին ծրագիրը և բացի պետական, կալվածատիրական, յեկեղեցական և այլ հողերի կոնֆիսկացիայի, գյուղացիական կոմիտեների կազմակերպման պահանջներից, կոմիտեներ, վորոնք կալվածատիրական իշխանության և արտոնությունների բոլոր հետքերի անհապաղ վոչնչացման և կոնֆիսկացիա արած հողերի փաստական տնօրինման օրգաններ պետք է լինեյին, մինչև վոր սահմանադիր ժողովը հաստատեր նոր հողային կարգը և այլն,— առաջ քաշեց հողի ազգայնացման պահանջը դեմոկրատական հեղափոխության վերջնական հաղթանակի պայմանում: «Սոցիալ-դեմոկրատների դիրքն ագրարային հարցում,—գրում եր Լենինը,—այժմ, յերբ գործը վերաբերում է դեմոկրատական հեղաշրջումը մինչև վերջ հասցնելուն, կարող է լինել միայն հետևյալը.— ընդդեմ կալվածատիրական սեփականության հոգուտ գյուղացիական սեփականության՝ ընդհանրապես հողի մասնավոր սեփականության գոյության պայմանում: Ընդդեմ հողի մասնավոր սեփականության, հոգուտ հողի ազգայնացման՝ ՎՈՐՈՇ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ»[1]) (ընդգծումը մերն է Ս. Գ.): Լենինն այս նախագիծը պաշտպանում եր ՌՍԴԲԿ IV միացուցիչ համագումարում (1906 թ. ապրիլին):

[1]) Ленин—т VII, ч. I, стр. 51

Լենինի նախագծի դեմ մենշևիկներն առաջ քաշեցին խոշոր մասնավոր հողատիրության «ազգայնացման» նախագիծը, վորը համագումարում պաշտպանում եյին Մասլովը (Ջոնը) և Պլեխանովը: Պատգամավորների մի մասը, առավելապես բոլշևիկներ, առաջ եր քաշում կալվածատիրական և այլ հողերի կոնֆիսկացիայի և այդ իբրև սեփականություն գյուղացիներին բաժանելու պահանջը. կային նաև մի խումբ պատգամավորներ, վորոնք առաջարկում եյին ամենևին չմշակել ագրարային ծրագիր, այլ միայն սահմանափակվել դեպի գյուղացիությունն ունենալիք վերաբերմունքի տակտիկական բանաձևով:

Մասլովի մենշևիկյան նախագիծը, վորը վորոշ ուղղումներով ընդունվեց IV համագումարում (վորի մեջ մենշևիկները մեծամասնություն եյին կազմում) հանգում եր այն բանին, վոր պահանջում եր մասնատիրական հողերը, բացի մանր հողատիրությունից, ոտարացել (համագումարում բոլշևիկների վճռական յելույթների ազդեցության «ոտարացումը» փոխարինվեց կոնֆիսկացիայով) և հանձնել դեմոկրատական սկզբունքներով ընտրված տեղական ինքնավարությունների խոշոր օրգանների տնօրինությանը, ընդ վորում գաղթականային հողի ֆոնդը, նույնպես և այն անտառներն ու ջրերը, վորոնք համեմատական նշանակություն ունեն, հանձնվում են դեմոկրատական պետությանը: Այս ծրագիրը՝ հեղափոխության հաղթանակի դեպքում՝ հողային կարգի յերկու ձև եր պարունակում.—1) մասնավոր սեփականության պահպանում, բաժնեհողը մնում է գյուղացիներին իբրև սեփականություն. 2) հասարակական սեփականության սահմանում մունիցիպալիզացիայի և նույնիսկ մասնակի ազգայնացման ձևով: Վերջապես մունիցիպալիզացիայի իրականացման անբարեհաջող պայմանների դեպքում ծրագիրն առաջ եր քաշում գյուղացիների միջև այն կալվածատիրական հողերի բաժանումը, վորոնց վրա փաստապես մանր տնտեսություն է վարվում, կամ վորոնք կազմում են դրա կլորացման համար անհրաժեշտ հանդակներ (угодья): Այսպիսով ծրագրում իրար խառնված դուրս յեկան և՛ ազգայնացումը, և՛ մունիցիպալիզացիան, և՛ բաժանումը:

V Ազգայնացման տնտեսական յեվ թեորիական հիմնավորումը.

Բոլշևիկների և մենշևիկների ագրարային ծրագրերի տարբերությունը սերտ կապված եր հեղափոխական շարժիչ ուժերի հարցի տարբեր հասկացողության հետ, տակտիկական խնդիրների տարբեր դրվածքի հետ: Լենինի ծրագիրը, տալով գյուղացիական ապստամբության, ճորտատիրական կարգերի վերջնական արմատախիլման լոզունգը, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության լրիվ ավարտման լոզունգը, այսպիսով սերտ կապված եր իշխանության գրավման, պրոլե-

[1]) Ленин—т. IX, «Пересмотр аграной программы раб. партии». стр. 401

տարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի հարցի հետ: Մասլովի մունիցիպալիզատորական ծրագիրը հենվում էր մենշևիկների կողմից գյուղացիության հեղափոխական դերը չհասկանալու վրա, պրոլետարիատի տաքտիկական հակահեղափոխական լիբերալ բուրժուազիայի տաքտիկային համարեցնելու ձգտման վրա և կրում էր ոչ հեղափոխական, կոմպրոմիսային բնույթ: Այս պատճառով Լենինի այնպիսի աշխատությունները, ինչպես «Բանվորական կուսակցության ագրարային ծրագրի վերաքննությունը» և հատկապես «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թ.թ. ռուսական հեղափոխության մեջ», տալիս են ոչ միայն ագրարային ծրագրի թեորիական և տնտեսական հիմնավորումը, այլև թեորիական բազա յեն հանդիսանում բոլշևիզմի ամբողջ ստրատեգիայի և տաքտիկայի համար առաջին հեղափոխության ելուխայում: Ինչի համար է մղվում պայքարը: «Ագրարային հարցը,—ասում է Լենինը,—կազմում է Ռուսաստանի բուրժուական հեղափոխության հիմքը և պայմանավորում է այդ հեղափոխության ազգային առանձնահատկությունը: (ընդգծումը մերն է Ս.Գ.): Ռուսաստանի հողատիրության նորագույն տվյալների հիման վրա Լենինը ցույց է տալիս այն տնտեսական հիմքը, վորի վրա ծավալվում է գյուղացիության հեղափոխական պայքարը հողի համար:

Լենինը հաստատում է հողային սեփականության հետևյալ չորս խմբերը:

1) գյուղացիական տնտեսությունների մասսան, վորոնք ճզմված են ճորտատիրական լատիֆունդիաներից, վորոնք ամենից ավելի յեն չահում այդ լատիֆունդիաների եքսպրոպրիացիայից (այսպես են 10,5 միլիոն գյուղացիական ծխերը, վորոնք 75 միլ. դեսյատին հող ունեն):

2) Միջին գյուղացիության ոչ մեծ փոքրամասնությունը, վորն արդեն այժմ տանելի տնտեսավարություն թույլատրող մոտավորապես միջին քանակությամբ հող ունի (1 միլիոն տնտեսություն ունի 15 միլ. դեսյատին հող):

3) Ունևոր գյուղացիների ոչ մեծ փոքրամասնությունը, վորը դառնում է գյուղացիական բուրժուազիա և մի շարք աստիճանական անցումներով կապված է կապիտալիստորեն-տնտեսավարող հողատիրության հետ:

4) Ճորտատիրական լատիֆունդիաները, վորոնք իրենց չափերով շատ գերազանց են Ռուսաստանի տվյալ եպոխայի կապիտալիստական տնտեսություններից և վորոնք ամենից ավելի յեկամուտ են քաղում գյուղացիության ստրկացուցիչ (кабальный) և աշխատավճար շահագործումից (սրանց մեջ մտնում են 500 դես. և ավելի մեծ տարածություն բռնող տնտեսությունները, վորոնց թիվը 30 հազար է և վորոնք 70 միլ. դես. հող ունեն)[1]:

Տաս և կես միլիոն գյուղացիական ծուխ, վորոնք 75 միլիոն դեսյատին հող ունեյին, և 30 հազար խոշորագույն կալվածատեր, վորոնք 70 միլիոն դեսյատին հող ունեյին:

«Այս է այն դաշտի հիմնական ֆոնը, վորի վրա ծավալվում է գյու-

[1]) Ленин— т. IX, «Аграрная программа с. д. в русской революций »стр. 449

ղացիական պայքարը հողի համար» (Լենին): Հողային ֆոնդի հիմքը, արդի ագրարային պայքարի մեխը մնում են ճորտատիրական լատիֆունդիաները, դեպի դրանց վոչնչացումը, դեպի ազատ, ունևոր գյուղացիության ստեղծումը, վորն ընդունակ է զարգացնել արտադրողական ուժերը, առաջ շարժել գյուղատնտեսական կուլտուրան, դեպի այդ է ուղղված գյուղացիության հեղափոխական պայքարը: Տվյալ ժամանակում այս էլ հանդիսանում է նարոդնիկական թեորիաների և դրանց «աշխատանքային սկզբունքի» և «հավասարության» պրինցիպների որեկտիվորեն-հեղափոխական իմաստը: Այդ թեորիաներն արտահայտվում են տաս և կես միլիոն քայքայված գյուղացիական տնտեսությունների ճորտատիրական լատիֆունդիաների բաժանման, ճորտատիրության հաջորդական վոչնչացման ձգտումը: Մնացած բոլոր սոցիալիստական ֆրազները, վորոնցով նարոդնիկները թաղցնում են գյուղացիության հեղափոխական ձգտումը դեպի արմատական բուրժուական հեղաշրջումը, իդեոլոգիական ծուխ, մանր բուրժուայի իլյուզիա յեն:

Կապիտալիստական ագրարային զարգացման յերկու տիպ: Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում անխուսափելի յեր դարձնում ճորտատիրության մահացումը և ագրարային հարաբերությունների վերակառուցումը կապիտալիստական հիմքի վրա: Այս անխուսափելիությունը հասկանում եյին վոչ միայն սոցիալ-դեմոկրատները, այլև լիբերալները, նույնիսկ ինքնակալության ամենից ավելի խելացի ներկայացուցիչները, վորոնք հանձին Ստոլիպինի փորձում եյին իրենց ձևով լուծել ագրարային հարաբերությունների կապիտալիստական վերափոխման խնդիրը: Ագրարային հեղաշրջման նախադրյալների թեորիական անալիզում մենշևիկները հեղափոխության բուրժուական բնույթին վերաբերող ընդհանուր դրության սահմաններից դուրս չեյին գալիս: Իսկ Լենինը չի սահմանափակվում այդ ընդհանուր դրությամբ, այլ հետագա հարցն է դնում, վորը հիմնական նշանակություն ունի հեղափոխության մասին ճիշտ հայացքներ մշակելու համար, այն է՝ վորո՞նք են առաջիկա ագրարային հեղաշրջման հնարավոր ձևերը, ի՞նչ ձևերով է հնարավոր հետագա բուրժուական զարգացումը: Լենինը հաստատում է բուրժուական հնարավոր զարգացման յերկու տիպ: «Բուրժուական զարգացումը կարող է ընթանալ, իր գլուխ ունենալով խոշոր կալվածատիրական տնտեսությունները, վորոնք աստիճանաբար շարունակ ավելի բուրժուական են դառնում, աստիճանաբար շահագործման ճորտատիրական յեղանակները բուրժուական յեղանակներով են փոխարինում. բուրժուական զարգացումը կարող է ընթանալ նույնպես և իր գլուխ ունենալով մանր գյուղացիական տնտեսությունները, վորոնք հեղափոխական ճանապարհով հասարակական օրգանիզմից հեռացնում են ճորտատիրական լատիֆունդիաների «պալարը» և ապա առանց նրանց ազատ զարգանում են կապիտալիստական ֆերմերության ուղիով»[1]:

Բուրժուական զարգացման առաջին ուղին, վոր Լենինն անալոգիայով անվանում էր կապիտալիստական զարգացման պրուսական տիպ,

[1]) Ленин—т. IX, стр. 459—460

ճորտատիրության դանդաղ մահացման ուղին է, ճորտատիրական տնտեսության բուրժուականի վերաճելու ուղին գյուղացիության տեվական և տանջալի էքսպրոպրիացիայի միջոցով՝ խոշոր գյուղացիների վոչ մեծ փոքրամասնության զատման պայմաններում: Յերկրորդ ուղին—բուրժուական զարգացման ամերիկական ուղին—յենթադրում է կալվածատիրական հողատիրության վոչնչացումը հեղափոխական ճանապարհով, հողի հանձնումը գյուղացիությանը, այսպիսով ազատ հնարավորություն ստեղծելով զուտ կապիտալիստական ֆերմերական տնտեսության զարգացման համար: Յերկրորդ ուղին յենթադրում է արտադրողական ուժերի ավելի արագ զարգացում, կապիտալիզմի արագ զարգացում:

Ագրարային հարցի լուծման հետևողական գյուղացիական կամ կալվածատիրական յեղանակի համար մղվող պայքարն արտահայտում էր կապիտալիստական զարգացման այս կամ այն ուղու համար մղվող պայքարը: Այդ պայքարի յելքից էր կախված, թե կապիտալիստական զարգացման վո՛ր տիպը վերջնականապես կձևավորվի Ռուսաստանում: Այս իմաստով էլ Լենինն ասում էր, վոր այժմ Ռուսաստանում ագրարային հարցը բուրժուական զարգացման ազգային հարցն է: Առաջին ուղիով էր ընթանում 1861 թ. ռեֆորմը, կապիտալիստական զարգացման կալվածատիրական տիպի այդ նույն ուղիով էր ընթանում ստոլիպինյան ռեֆորմը, վորը գյուղացիական բուրժուազիա ստեղծեց համայնական հողերի կողոպտի, գյուղացիական մասայի բռնի էքսպրոպրիացիայի հաշվին, բայց ամենևին վոչ ազնվական կալվածատերերի հաշվին. կալվածատիրական բուրժուական զարգացման այդ նույն ուղիով էր ընթանում կադետների ագրարային ծրագիրը: Գյուղացիությունը և նրա իդեոլոգները նարոդնիկները, (էսէրները, աշխատավորականները) պայքարում էին կապիտալիստական զարգացման մյուս՝ ամերիկյան տիպի համար:

Այսպիսով դասակարգային պայքարը Ռուսաստանում առաջ քաշեց բուրժուական ագրարային հեղաշրջման իրականացման յերկու յեղանակ՝ հետևողական-գյուղացիական և հետևողական-յունկերական: Գյուղացիների և կալվածատերերի պայքարն ընթանում էր բուրժուական հասարակության հողի վրա բուրժուական զարգացման այս կամ այն տիպի համար: Բայց ագրարային հեղաշրջման գյուղացիական յեղանակի իրականացումը յենթադրում էր կալվածատիրական հողատիրության, ճորտատիրության բոլոր մնացորդների լիակատար վոչնչացում, կապիտալիստական զարգացման ամենից ավելի պրոգրեսիվ տիպի ստեղծում: «Պրուսական» տիպը, վորի կլասիկ արտահայտիչներն էին հանդիսանում կադետները, յենթադրում էր ճորտատիրական շահագործման ավելի կամ պակաս տևական պահպանումը, կալվածատիրական շահերի և արտոնությունների պաշտպանությունն ագրարային հեղաշրջման իրականացման ժամանակ: Այս հիմքի վրա դեմոկրատական հեղափոխության հետևողական իրականացման համար մղվող պայքարը պրոլետարիատը պետք է մղեր գյուղացիության հետ միասին ընդդեմ կալվածատիրական ինքնակալության և կադետների:

Հողի ազգայնացման տնտեսական նշանակությունը: Կապիտալիստական զարգացման յերկու ուղիի հնարավորությունն ագրարային հա—

մըն արտադրության մի ճյուղից մյուսը: Կապիտալիզմի զարգացման ազատություն, լայնություն և արագություն, դասակարգային պայքարի լիակատար ազատություն, ամեն տեսակ ավելորդ միջնորդների վոչնչացում, վորոնք հողագործությունը նմանեցնում են «քրտինք քամող» (ПОТОГОННЫЙ) արդյունաբերությանը,—ահա ի՛նչ է հողի ազգայնացումը կապիտալիստական արտադրության ժամանակ»[1]):

Ի՛նչն է մունիցիպալիզացիայի տնտեսական ռեակցիոնությունը: Մարքսի աբսոլյուտ ռենտան ժխտող Մասլովը բոլորովին չի հասկացել հողի ազգայնացման տնտեսական նշանակությունը կապիտալիզմի ժամանակ: Պաշտպանելով գյուղացիական բաժնեհողի մասնավոր սեփականության պահպանումը, նա Ստոկհոլմի համագումարում պնդում էր, վոր գյուղացիական բաժնեհողերի կամ կոնֆիսկացիայի յենթարկված կալվածատիրական հողերի ազգայնացման փորձը գյուղացիական վանդեյա կառաջացներ, կտաներ դեպի գյուղացիության ընդհանուր ապստամբությունն ընդդեմ հեղափոխության: Այն ինչ փորձը ցույց տվեց, վոր և՛ գյուղացիական միությունը, և՛ առաջին ու յերկրորդ դումաների բոլոր գյուղացիական պատգամավորները պահանջում էին հողի ազգայնացում:

Մասլովը չի հասկացել գյուղացիության հողի համար մղվող պայքարի էությունը: Հողի ազգայնացման համար մղվող գյուղացիական պայքարի օբյեկտիվ իմաստը հողերի գյուղացիական «զտումն» է կապիտալիզմի համար: 1861 թ. ռեֆորմը, ստոլիպինյան օրենսդրությունը հողերի կալվածատիրական «զտումն» էին կապիտալիզմի համար: Ազգայնացման նարոդնիկական ծրագրերը միջնադարյան հողային հարաբերությունների գյուղացիական «զտումն» էին և կարգավորումը կապիտալիստական ազատ զարգացման համար: Առանց միջնադարյան հարաբերությունների զտման չի կարող բուրժուական հեղաշրջում կատարվել հողագործության մեջ: Միջնադարյան հողային հարաբերությունների կրողը հանդիսանում են վոչ միայն ճորտատիրական կալվածները, խոշոր հողատիրությունը, այլև գյուղացիական բաժնեհողային հողատիրությունը, վորը նույնպես չի հարմարված ազատ կապիտալիստորեն զարգացող տնտեսության:

Հետռեֆորմյան Ռուսաստանում կապիտալիստական էվոլյուցիան գյուղացիության միջնադարյան բաժնեհողերի վրա ընթանում էր այն ձևով, վոր պրոգրեսիվ տնտեսական տարրերն ազատագրվում էին հողաբաժնի վորոշիչ ազդեցությունից: «Չպետք է լինի վո՛չ կալվածատիրական, վոչ էլ բաժնեհողային հողատիրություն, պետք է լինի միայն նոր, ազատ հողատիրություն»—այս է հողի գյուղացիական ազգայնացման էությունը, վոր արձակ հրապարակ է բաց անում ֆերմերական ազատ տնտեսության համար:

Մասլովի մունիցիպալիզացիայի ծրագիրը, պահելով գյուղացիության բաժնեհողերը, իրոք չի տանում դեպի ճորտատիրության վերջնական վոչնչացումը, վորովհետև պահում, կոնսերվում է միջնադարյան հողային հարաբերությունները գյուղացիական բաժնեհողային սեփականության ձևով, վորն արգելք է հանդիսանում կապիտալիստական ազատ հողատիրության պայմաններ ստեղծելու համար: Մենշևիկական

[1]) Ленин—т. IX, «Аграрная программа с. д. в русск. революции», стр. 525

ծրագրի հակահեղափոխական բնույթը բղխում է նրա յերկվությունից. մի կողմից՝ հանրայնացնում խոշոր հողատիրության մունիցիպալիզացիայի ձևով, մյուս կողմից՝ բաժնեհողային սեփականության, գյուղացիական հողատիրության միջնադարյան, հետամնաց ձևերի պահպանում:

Այս ծրագիրն իր իրականացման ժամանակ յենթադրում է, վոր գյուղացին առաջվա նման տնտեսավարում է իր հողաբաժնում, նրա տնտեսության վորոշիչ մոմենտը մնում է հողաբաժինը, իսկ հետո արդեն նայած տնտեսության մյուս պայմաններին, գյուղացին տեղական ինքնավարությունից վարձակալում է կալվածատիրական նախկին հողերից լրացուցիչ հողակտոր:

Հիմքը «հեղափոխական հողաշինարարության, վորին հարմարվում է նաև մունիցիպալիզացիայի յենթարկված կալվածատիրական հողը, մընում է միջնադարյան բաժնեհողային հողատիրությունը, վորը խանգարում է կապիտալիզմի արագ և ազատ զարգացումը հողատիրության մեջ: Գյուղացիական բաժնեհողը,—ասում է Լենինը,—այդ մի գետտո յե, վորի մեջ խեղդվում է և վորից դուրս պրծնել է տենչում գյուղացիությունը՝ ձգտելով ազատ հողի: Իսկ Պյոտր Մասլովը, հակառակ գյուղացիական ազատ, այսինքն ազգայնացրած հողի պահանջների, հավերժացնում է այդ գետտոն,[1]) ամրացնում է հինը, լավագույն հողերը, վոր կոնֆիսկացիայի յեն յենթարկվում կալվածատերերից և հանձնվում հասարակական ոգտագործման, յենթարկում է հին հողատիրության և հին տնտեսության պայմաններին»:[2])

Բաժանման կողմնակիցները, վորոնք ազատ են մենշևիկյան ծրագրի ներգործությունից, այլ տեսակի սխալ են գործում, պատմական հեռանկարի սխալ: Հողի բաժանումը հին բաժնեհողային հողատիրության համեմատությամբ (իսկ ըստ եյության սրան եր հանգում կալվածատիրական հողերի անհապաղ բաժանումը գյուղացիներին իբրև սեփականություն) կլիներ վոչ թե հին հողատիրության պտում, այլ նրա հավերժացում, «այժմյան բաժնեհողային սեփականատերերի միջև կատարվելիք բաժանումը կիսով չափ միջնադարյան հողատիրության կոնսերվացումն է»: «Բաժանումը կարող կլիներ առաջադիմական լինել,—մատնանշում է Լենինը,—յեթե նա ամրացներ նոր տնտեսությունը, նոր ագրիկուլտուրան, դուրս շպրտելով հինը»: Բայց ռուսական գյուղում նոր ագրիկուլտուրան դեռ չի զարգացել. մանր հողագործի առաջ դըրված է վոչ թե արդեն զարգացած ագրիկուլտուրայի ամրացման խնդիրը, այլ «ազատ», այսինքն ազգայնացրած հողի վրա նոր ագրիկուլտուրայի ստեղծման համար հող մաքրելու խնդիրը: Սրանով ել բացատրըվում է այն հանգամանքը, վոր սեփականատիրոջ ֆանատիզմի փոխարեն, ինչ վոր վորոշ պատմական շրջանում և վորոշ ժամանակով անխուսափելի յե մանր սեփականատերերի համար, ռուսական գյուղացիների մասսայում տարածվեց հողի ազգայնացման պահանջը: Իսկ «բա-

1) Գետտո եյին կոչվում Արևմտյան Յեվրոպայում այն հատուկ թաղերը, ուր ապրում եյին հրեաները: Գետտոները շատ յերկրներում պահվեցին մինչև XVIII դարը, նույնիսկ մինչև XIX դարի կեսերը: Ծանոթ. Թարգ.:

2) Ленин—т. IX, стр. 494

բարեփոխությունների ասպարեզում, այստեղից բղխող հողի ազգայնացման իբրև բուրժուա-դեմոկրատական վերափոխությունների մաքսիմումի պահանջն այս ասպարեզում Լենինը հիմնավորեց, վերլուծելով ամեն տեսակ բուրժուական հեղաշրջման պայմանները հողագործության մեջ: Լենինը յելակետ ուներ Մարքսի այն դրույթը, վոր «հողային սեփականության այն ձևը, վորը գտնում է արտադրության ծնունդ առնող կապիտալիստական յեղանակը, նրան համապատասխանող ձև չե: Միայն նա (կապիտալիզմը:—Ս. Կ.) ինքը,—շարունակում է Մարքսը,—ստեղծում է իրեն համապատասխանող ձև, հողագործությունը յենթարկելով կապիտալին, վորի շնորհիվ ել ֆեոդալական հողային սեփականությունը և տոհմի (клан) սեփականությունը, համայնական մարկի մանր գյուղացիական սեփականությունը, ինչքան ել տարբեր են դրանց իրավաբանական ձևերը, փոխվում են արտադրության այդ յեղանակին համապատասխանող տնտեսական ձևի»:[1]) Մի դեպքում կապիտալիզմի ձևերին համապատասխանող հողատիրության ստեղծումը տեղի յե ունենում հողային սեփականության միջնադարյան հին ձևերի դանդաղ հարմարման, ճորտատիրական կալվածների պահպանման միջոցով, վորոնք դանդաղ կերպով փոխվում են յունկերական (կալվածատիրական-բուրժուական) տնտեսությունների: Մյուս դեպքում կապիտալը հողատիրության հին ձևերը կապիտալիստական զարգացման պայմաններին ամենից ավելի համապատասխանող նոր հողային կարգի յե փոխում հեղափոխական ճանապարհով, բռնի կերպով վոչնչացնելով հողատիրության միջնադարյան ձևերը, ստեղծելով կապիտալիստական զարգացման ադեկվատ (իդեալապես համապատասխանող) պայմաններ:

Ի՞նչ հարաբերության մեջ է հողի ազգայնացման պահանջը հողագործության բուրժուական հեղաշրջման այս ընդհանուր պայմանների հետ: «...Հողային սեփականությունը,—ասում է Մարքսը,—տարբերվում է սեփականության մնացած տեսակներից այն բանով, վոր նա զարգացման վորոշ մակարդակի վրա թվում է ավելորդ ու վնասակար նույնիսկ արտադրության կապիտալիստական յեղանակի տեսակետից»[2]): Մարքսը «Հավելյալ արժեքի թեորիաներում» մատնանշում է, վոր արտադրության կապիտալիստական յեղանակի ժամանակ հողատերը բոլորովին ավելորդ է: «Արտադրության կապիտալիստական յեղանակի համար հարկավոր է միայն, վոր հողն ընդհանուր սեփականություն չլինի, վոր նա դեմ հանդիման կանգնի բանվոր դասակարգին իբրև նրան չպատկանող արտադրության միջոց, իսկ այս նպատակին կարելի յե հասնել լիովին, յեթե հողը պետական սեփականություն է դառնում, և հետևաբար պետությունը հողային ռենտա յե ստանում: ..Այս պատճառով արմատական բուրժուան, շեշտակի ձգտելով մյուս բոլոր հարկերի վոչնչացմանը, թեորիապես գալիս է հողային մասնավոր սեփականության ժխտմանը, վորը նա կցանկանար պետականության ձևով բուրժուազիայի դասակարգի, կապիտալի սեփականություն դարձնել: Սակայն պրակտիկայում նա այդ համարձակությունը չի ունենում, վորովհետև սեփականության մի ձևի վրա հարձակվելը շատ վտանգավոր է մյուս ձևի համար ել: Բացի այդ բուրժուան ինքը հող է ձեռք բերել»[3]):

1) К. Маркс—Капитал—т. III, ч. II, изд. 1928 г., стр. 126

2) Նույն տեղը, եջ 131

3) К. Маркс—«Теория прибав. ценности» т. II, ч. I, стр. 138

1538—6

Մարքսի հետ համերաշխ՝ Լենինն ապացուցում է, որ հողի ա
նացումն ագրարային և կապիտալիստական հասարակության կա
րիս չէ: Մենշևիկների հայացքները, որոնք ազգայնացումը թույլ
լի չեն համարում միայն իբրև սկզբունքորեն սոցիալիստական մի
ություն, որ զուգակցվում է արտադրության միջոցների ընդհանու
սոցիալիզացիային, սխալ են, հակասում են Մարքսի հայացքներին. Թե
րևապես այդ հայացքներն արտահայտում են հողի մասնավոր սեփակա
նության տնտեսական նշանակության անհասկացողությունը, սեփակա
նության այդ ձևի վնասակարության անհասկացողությունը կապիտա
լիստական զարգացման տեսակետից: Հողի մասնավոր սեփականությ
մոնոպոլիան բացի դիֆերենցիալ ռենտայից, որ անխուսափելի չէ կա
պիտալիստական հասարակության մեջ հողատիրության ամեն տեսա
ձևերի ժամանակ, ստեղծում է նաև ռենտայի մի հատուկ ձև—աբսոլյու
ռենտա: «Աբսոլյուտ ռենտան,—ասում է Լենինը,—ստացվում է հող
մասնավոր սեփականության շնորհիվ: Այդ մասնավոր սեփականությու
նը հատուկ մոնոպոլիա չէ ստեղծում, որ ոչ մի ընդհանուր բան չու
արտադրության կապիտալիստական յեղանակի հետ...»: Աբսոլյու
ռենտան բարձրացնում է հացահատիկի գինը, դա հողագործության մ
ամրացնում է ավելի բարձր շահույթ, քան յերկրի միջին շահույթն է
արգելք հանդիսանալով կապիտալների ազատ մրցության, որը հավա
սարեցնում է շահույթի նորման հողագործության և արդյունաբերու
թյան մեջ, նա խանգարում է կապիտալների ազատ հոսանքը դեպի հո
ղագործություն, որովհետև, նախքան կապիտալ գործադրելը, հարկա
որ է վճարել հողատիրոջը, որ թույլ տա ոգտվել իր, թեկուզ և վարա
կով վատագույն հողամասից. սրա շնորհիվ աբսոլյուտ ռենտան ամրաց
նում է կապիտալի ավելի ցած օրգանական կազմը, այսինքն՝ հողագոր
ծության տեխնիկական հետամնացությունը: Հողի մասնավոր սեփակա
նության շնորհիվ անմիջական հողագործական արտադրությունից պոկ
վում են հսկայական կապիտալներ հող գնելու համար: Հող գնելու վր
ծախսված կապիտալը հսկայական արգելք է կապիտալի արտադրողակա
գործադրման համար հողագործության մեջ, որի շնորհիվ ստեղծվու
են կապիտալի հողագործություն թափանցելու շրջանցիկ (обходный
ձևեր: «Այսպիսով և՛ հողի գրավը, և՛ վաշխառությունը հանդիսա
նում են կապիտալի այսպես ասած շրջանցման ձևերն այն դժվարու
թյունների հանդեպ, որ հողի մասնավոր սեփականությունը ստեղ
ծում է կապիտալի ազատ թափանցման համար հողագործության մեջ»,[1])

Հողի մասնավոր սեփականությունն այսպիսով առաջացնում է մ
նոպոլիա, որն ընդհանրապես նեղում է կապիտալիզմի ամբողջ զարգա
ցումը, արգելքներ ստեղծում կապիտալիզմի ազատ թափանցման, ա
տադրողական ուժերի զարգացման համար հողագործության մեջ: Ա
է հողի մասնավոր սեփականության վնասակարությունը կապիտալիզ
տեսակետից, որ մատնանշում եր Մարքսը: «Հողի մասնավոր սեփակա
նության վոչնչացումը,—ասում է Լենինը,—առավելագույնն է, վո
միայն հնարավոր է բուրժուական հասարակության մեջ, բոլոր և ամ
տեսակ ցանկափակերի վերացումը, որոնք խանգարում են հողագո
ծության մեջ կապիտալի ազատ կիրառումը և կապիտալի ազատ անցո

1) Ленин—т IX, «Аграрная программа с. д. в русск. революции», стр. 5

ականները» ցանկում են ավյալ հեղափոխության պատմական խնդ-
ների վրայով, փակված են յենթադրում այն, ինչի համար հենց սոր
կովել գյուղացիության մասսայական պայքարը»:[1])

Այսպես ուրեմն, բուրժուական ագրարային հեղաշրջումը Ռուսաս-
տանում հնարավոր եր յերկու ձևով: Այս կամ այն ձևը, այս կամ այն
ուղիի հաղթանակը կորոշեր կապիտալիզմի այն տիպը, վորը կարող կլ-
ներ վերջնականապես զարգանալ Ռուսաստանում:

Այս 2 ուղիի պայքարը վորոշեց դասակարգերի այն հարաբերակցու-
թյունը, վորը զարգացավ 1905—1907 թ. թ. հեղափոխության ըն-
թայում: Պայքարն ընթանում եր բուրժուական կարգի հողը վրա այն
բանի համար, թե ինչպես կզարգանա այդ բուրժուական կարգը: Առա-
ջին ուղիի համար պայքարում եյին կալվածատերերը և լիբերալ բուր-
ժուազիան—կադետները: Յերկրորդ ուղիի համար պայքարում եր գյու-
ղացիությունը պրոլետարիատի ղեկավարությամբ: Դեմոկրատական
հեղափոխության լրակատար հաղթանակը կհեշտացներ պրոլետարիատի
հետագա պայքարը սոցիալիստական հեղաշրջման համար, պրոլետա-
րական դիկտատուրայի համար: Այդ հեղափոխության լրակատար հաղ-
թանակը կնշանակեր ամբողջ գյուղացիության վերջնական հաղթանակ
ճորտատեր-կալվածատիրոջ վրա: Այս է պրոլետարիատի և գյուղացի-
ության դեմոկրատական դիկտատուրայի լոզունգի տնտեսական և թեո-
րիական բազան:

VI. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՏԱՔՏԻԿԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Ի՞նչն է մունիցիպալիզացիայի վոչ հեղափոխականությունը: Առա-
ջիկա ագրարային հեղաշրջման, հետևապես և ամբողջ հեղափոխության
տնտեսական հիմքերը մենշևիկները չեյին հասկացել: Համագումարում
րագիրը քննելիս, մատնանշում է Լենինը, գերիշխում եյին քաղաքա-
ան և տաքտիկական նկատառումները: Բայց այս հարցերին էլ մեն-
ևիկները չկարողացան ճիշտ պատասխան տալ: Մեր հեղափոխության
նտեսական եյության կոնկրետ անալիզի, կապիտալիստական զարգաց-
ան «պրուսական» կամ «ամերիկական» ուղիի համար պայքարող տար-
եր դասակարգերի դրության և շահերի անալիզի տեղը մենշևիկները
նում եյին ընդհանուր դրույթներ բուրժուական հեղափոխության
ասին, ինքնակալության անհամատեղության մասին կապիտալիստա-
ան զարգացման շահերի հետ և այլն, այսպիսով չհասկանալով դասա-
րգային ուժերի հիմնական հարաբերակցությունը հեղափոխության
եջ: Հեղափոխության դրած հիմնական հարցն եր՝ կապիտալիստական
գացման պրուսական, թե՛ ամերիկական տիպ, վոր քաղաքական վե-
փոխությունների լեզվի թարգմանելով նշանակում եր՝ կալվածատի-
ական միապետության սահմանադրական կցանով, թե՛ գյուղացիական
երմերական հանրապետություն: Այս հիմնական հարցը կարող կեր-
վ անջատեց ինկապես հեղափոխական ուժերը—պրոլետարիատին և
ա յետևից գնացող գյուղացիությանը—հակահեղափոխական կալվա-
տիրոջից և նրան հարող լիբերալ բուրժուազիայից: Մինչդեռ մեն-

1) Ленин—т. IX, «Аграрная программа с. д. в русск. революции», стр. 501

չևիզմի կենտրոնական լոզունգ հանդիսանում էր համազգային շարժման, համազգային ոպոզիցիայի, համազգային գրոհի լոզունգ, այսինքն՝ լիբերալների հետ համաձայնության գալու լոզունգ, որի համար մենշևիզմը հրաժարվում էր պրոլետարիատի հեգեմոնիայի, դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու լոզունգից:

1905 թ. վերջի և 1906 թ. սկզբի հեղափոխական պայքարի պրակտիկ պահանջները մենշևիկներին հարկադրում էին պատասխան տալ գյուղացիության հեղափոխական շարժման թափին: Մենք չպետք է վախենանք գյուղացիության ագրարային պահանջների արմատականությունից, չպետք է վախենանք գյուղացիության ագրարային հեղափոխությունից, ասում էր Պլեխանովն ի պատասխան գյուղացիության հեղափոխական շարժման: Բայց այնուամենայնիվ մենշևիկները վախենում էին գյուղացիության ագրարային հեղափոխությունից, որովհետև գյուղացիական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարը պահանջում էր կապերը խզել լիբերալների հետ: Մունիցիպալիզացիայի ծրագիրն արտացոլում էր այն ժամանակաշրջանի մենշևիզմի այս միջնական դրությունը գյուղացիական հեղափոխության և լիբերալ բուրժուազիայի միջև, ուժեղ թեքումով վերջինիս կողմը: Բոլշևիկների ճնշման տակ թույլատրելի համարելով կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայի պահանջը, մենշևիկները միաժամանակ առարկում էին հեղափոխական գյուղացիության կողմից կալվածատիրական հողերի անհապաղ գրավման դեմ, կոնֆիսկացիայի իսկական իրականացման կարևորագույն պայմանի դեմ: Ամբողջ դեմոկրատիայի պառակտման երկյուղից մենշևիկները մերժում էին հեղափոխական գյուղացիական կոմիտեների անհապաղ կազմակերպման լոզունգը,—գյուղացիական ապստամբության այս հիմնական լոզունգը, որը ուժեղացնում և կազմակերպում է գյուղացիության հեղափոխական պայքարը: Թույլատրելի համարելով կալվածատիրական հողերի կոնֆիսկացիան, այսինքն դեմոկրատական հեղափոխության լիակատար հաղթանակը, մենշևիկները, մյուս կողմից՝ առաջ էին քաշում այնպիսի ագրարային ծրագիր, որը չէր արտահայտում դեմոկրատական հեղափոխության լիակատար հաղթանակը, որը նկատի ուներ բուրժուական հեղափոխության [illegible], [illegible] փոխձանը, որովհետև ծրագիրն ագրարային հեղաշրջումը կապում էր տեղական ինքնավարությունների դեմոկրատիզմի հետ, այլ ոչ թե կենտրոնական իշխանության լիակատար դեմոկրատիզմի հետ, հույս ունենալով, ագրարային հեղաշրջման իրականացման դեպքում դեմոկրատական տեղական ինքնավարություններում հենարան գտնել ոչ դեմոկրատական կենտրոնական իշխանության դեմ:

Քննադատելով Մասլովի ծրագիրը, Լենինը մատնանշում էր, որ մունիցիպալիզացիան ենթադրում է ոչ թե ագրարային հեղաշրջման իրականացման հեղափոխական եղանակ, ապստամբության միջոցով, ապստամբած գյուղացիների կողմից կալվածատիրական հողերի գրավման միջոցով, այլ բյուրոկրատական եղանակ, «որովհետև ամենադեմոկրատական մարզային և զեմստվային կազմակերպությունները չեն կարող բյուրոկրատական չլինել գյուղացիական հեղափոխական կոմիտեների համեմատությամբ, որոնք հենց տեղն ու տեղը, իսկույն պետք է հաշիվները մաքրեն կալվածատերերի հետ և նվաճեն այն իրավունքները

որոնք չենթակա չեն համաժողովրդական Սահմանադիր ժողովի սանկցիային»:[1] Առանց հեղափոխական գյուղացիական կոմիտեների կողմից կալվածատիրական հողի անհապաղ գրավման լոզունգի մենք կունենանք ագրարային ռեֆորմի կադետական կամ կիսակադետական ծրագիր, այլ ոչ թե գյուղացիական հեղափոխության ծրագիր: Մունիցիպալիզացիայի ծրագիրը,— ապացուցում էր Լենինը,—ոչ մի պայմանում իրագործելի չէ: Հեղափոխության հաղթանակի ժամանակ նա չափավոր և չնչին կերևա: Հեղափոխության պարտության կամ ոչ լրիվ հաղթանակի դեպքում «մունիցիպալիզացիայից» միայն կստացվի «գյուղացիների նոր թալանում 1861 թ. ռեֆորմի տիպով»:

Մենշևիկների փաստարկումները, թե տեղական դեմոկրատական ինքնավարությունները յերաշխիք են ստեղծում ռեստավրացիայի դեմ, պատվար են ստեղծում ռեակցիայի դեմ, ցույց տվեցին, թե ինչքան մենշևիզմը չի հասկացել հեղափոխության ծավալման իսկական պայմանները, դասակարգային պայքարի տեսակետից ոտքվել է մանր բուրժուազիայի տեսակետի վրա, որը ռեակցիայի դեմ պատվար է փնտրում ոչ թե հեղափոխական դասակարգերի ուժի և կազմակերպվածության մեջ, այլ [illegible] դեմոկրատական ձևում:

Կապիտալիզմի եղանակում տեղական ինքնավարությունը ռեակցիայի դեմ պատվար չի յեղել և չի կարող լինել: Կապիտալիզմն անխուսափելիորեն տանում է դեպի պետական իշխանության կենտրոնացում, ամեն տեսակ տեղական ինքնավարություն անպայման կոչնչացվի ռեակցիոն պետական իշխանության ժամանակ: Հեղափոխության հիմնական հարցը—իշխանության հարցն է. Ռուսաստանում հեղափոխությունը չի կարողանա հաղթել, չհաղթելով կենտրոնական իշխանությանը, իշխող դասակարգերի այդ գլխավոր ուժին, չհանձնելով իշխանությունը հեղափոխական պրոլետարիատի և գյուղացիության ձեռքը: Ռեստավրացիա նշանակում է ռեակցիոն դասակարգերի հաղթանակ, հեղափոխական ուժերի ջախջախում, և այս պատճառով անհեթեթ բան է մտածել, որ հաղթանակած ռեակցիան կանգ կառնի այն բանի առաջ, ձեռ խփի[...] տեղական ինքնավարություններից կամ որ տեղական ինքնավարությունները թեկուզ ամենափոքր դիմադրություն ցույց կտան: Ընդհակառակը, մունիցիպալիզացիայի ծրագրի իրականացումը կհեշտացներ կալվածատերերի համար իրենց հողը հետ ստանալու հնարավորությունը ռեստավրացիայի դեպքում, որովհետև մունիցիպալիզացիան յենթադրում է տեղական ինքնավարությունների տնօրինության տակ անցած կալվածատիրական հողի և գյուղացիների ձեռքին մնացած բաժնեհողի կտրուկ բաժանում:

Այսպյնացման դեպքում բուրժուական դիտության ուժեղացման, [...]տրոնի բյուրոկրատիայի և այլն նախապայմանության ուժեղացման [...]րավորության մասին ընդդեմ խոսակցությունները միայն արտահայտում են մենշևիկների վախը հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու[...] (ընդգծումը մերն է Ա.Գ.): Հեղափոխության ժամանակ մենշևիզմի առաջ քաշած բոլոր լոզունգները կես ճանապարհին էին կանգնում.—հեղափոխական ինքնավարություն, բայց ոչ յերբեք հե-

[1]) Ленин—т. IX, «Просмотр аграрных программ...», стр 409

ղավոխական կենտրոնական իշխանություն, կալվածատիրական հո կոնֆիսկացիա, բայց մունիցիպալիզացիա առանց գյուղացիական հ ղափոխական կոմիտեների, առանց հեղափոխական գյուղացիությ անհապաղ իսկական կազմակերպության և այլն և այլն: Այդ բոլոր զունգներն ըստ էության հանդիսանում էին խուսափելու հնարքն դեմոկրատական հեղափոխության վճռական հաղթանակի համար մ վող պայքարից, հեղափոխական վճռական հարցից—քաղաքական խանության նվաճումներից հեղափոխական դասակարգերի ձեռ և կենտրոնում, և՛ տեղերում:

Ապացուցելով, որ մունիցիպալիզացիայի ոգուն բերվող փաստարկումը թե նա յերաշխիք է ռեստավրացիայի դեմ, լիովին ան վանդակ ապացույց է, Լենինն անցնում է այդ հարցի քննությանն էության: Մեր ձեռքում, մատնանշում էր Լենինը, յերաշխիքներ չ ռեստավրացիայի դեմ, դեմոկրատական հեղափոխության հաղթա կից հետո Ռուսաստանում աբսոլյուտ յերաշխիք ռեստավրացի դեմ, ռեստավրացիա առաջացնող հենց տնտեսական հիմքի վերջնա վոչնչացման իմաստով, կարող է լինել միայն Արևմուտքի սոցիա տական հեղափոխությունը: Դեմոկրատական հանրապետություն և դի ազգայնացում, այսինքն պրոլետարիատի կողմից ղեկավարվող գ ղացիական հեղափոխության լիակատար հաղթանակ,—ահա այն րաքերական յերաշխիքները ռեստավրացիայի դեմ, վոր այն ժա նակ ստեղծված էին ռուսական հեղափոխության զարգացման ներ պայմաններով:

Բայց նույնիսկ դեմոկրատական հեղափոխության հաղթանակի դ քում, Արևմուտքում սոցիալիստական հեղաշրջման բացակայութ ժամանակ, ռեստավրացիայի հնարավորությունը չի բացառվում, րովհետև չի վոչնչացված ռեստավրացիայի տնտեսական հիմքը: տադրության կապիտալիստական յեղանակի ժամանակ ռեստավրա այի տնտեսական հիմքը, ասում է Լենինը, թաքնված է մանր արտ րողի դրության մեջ կապիտալիստական հասարակությունում: Զգա ամրացնել իր սեփականատիրական դիրքը բուրժուական հասա կության մեջ, մանր ապրանք արտադրող այդ հասարակութ րիչ—չափ նպաստավոր պայմաններում (արդյունաբերության ծաղկ ներքին շուկայի լայնացում ագրարային հեղաշրջման հետևանք այլն) «անխուսափելիորեն շուռ է գալիս պրոլետարիատի դեմ, պայքարում է սոցիալիզմի համար»[1]) : Իսկ դեմոկրատական հեղափո թյան պայմաններում գյուղացիության ամբողջական շահերը (կալվա տիրական հողի կոնֆիսկացիան) պահանջում էին հեղափոխու ամենախի թափ, վորի ժամանակ կխախտվեյին վոչ միայն կալվածա րերի, այլև ռուսական ու նույնիսկ միջազգային խոշոր բուրժուազ շահերը:

Գյուղացիական հեղափոխության հաղթանակն այսպիսի պայ ներում պահանջում է հեղափոխական պայքարի և հեղափոխական ներգիայի հսկայական թափ: Իսկ վորովհետև այդ հեղափոխությ միայն պրոլետարիատի ղեկավարությամբ է իրագործելի, ապա հանգամանքն ել ավելի յե վառքի հանում ամբողջ աշխարհի ամ

---

1) Ленин—т. IX «Аграрный вопрос на Стокгольмск. объединит. съе стр. 428.

ՀՀ Ազգային գրադարան
NL0184313